ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՍԱՐԳԻՍ ՈՍԿԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2001

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՍԻՐԵԼԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ

9(47.925)
Հ-31

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՎԵՏԻՍ ՓԱՓԱԶՅԱՆ

3108

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2001

ՀԱՅԿ ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆ-Տ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т востоковед. АН Арм. ССР

ԳՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Փ 311

Տպագրվում է Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Փափազյան Ավետիս. Հայերի ցեղասպանությունը թուրք
Փ 311 քաղաքական գործիչների հուշագրություններում,-
Եր.: , 2001 թ.- 160 էջ:

Գրքում քննադատական վերլուծությամբ շրջանառության մեջ են դրվում թուրք քաղաքական գործիչների հուշագրություններում, ինչպես նաև պատմագիտական երկերում հայկական հարցի և հայերի հալածանքներին վերաբերող նրանց տեսակետներն ու մեկնաբանությունները:

19-րդ դարի վերջի քառորդի Աբդուլ Համիդյան բռնատիրության և 20-րդ դարի սկզբին Երիտթուրքերի իշխանության օրոք արևմտահայերի նկատմամբ տեղի ունեցած ողբերգական դեպքերի նկարագրությունները ժամանակի թուրք գործիչների կողմից, մատչելի չեն եղել ոչ միայն հայ ընթերցողներին, այլ, մանավանդ, հայ պատմաբաններին (բացառությամբ մի քանիսի, որոնք հետագայում վերծանվել են լատինատառ թուրքերենի): Ուստի առաջին անգամ ընթերցողին է ներկայացվում նրանց երկերից քաղված թարգմանություններ, անհրաժեշտ ծանոթագրությամբ:

Նախատեսված է պատմաբանների, մասնագետների և ընթերցող լայն հասարակության համար:

0503020913
Փ ---------- 2001
0003(01)-2001

ISBN 99930-2-

ԳՄԴ 63.3(2Հ)

© Փափազյան Ա.
© «Զանգակ-97» հրատ. 2001

Այս գրքի հովանավորությունը ստանձնեցին

ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՓԻԵՌ ԵՎ ԱՊՊԵՏՈՒՀԻ ՍԻՄՈՆՅԱՆՆԵՐԸ

Իրենց ծնողի՝

ՍԱՄՎԵԼ ԵՎ ՄԱՐԻԱՄ ՍԻՄՈՆՅԱՆՆԵՐԻ

անմար հիշատակին

Հեղինակը հայտնում է իր խորին
շնորհակալությունը
հարգարժան մեկենասներին

...ՄՈՌԱՑՈՒԹՅԱՆ ՁՏԱԼՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն անգամ, երբ մի գիրք է երևում հրապարակի վրա, որն անդրադառնում է Հայոց Մեծ եղեռնին, նշանակում է, որ մենք շարունակում ենք պայքարը հանուն պատմական ճշմարտության, հանուն արդարության: Ավելին, մի նոր ալիք, նոր մի ուժ ի մի է բերում տարտղնված մեր ժողովրդին միասնաբար ոգեկոչելու այդ ցեղասպանությունը, այսինքն՝ դառնում է մասսայական այն կամքը, որ պետք է մեր ամբողջականությունը ցուցադրելու:

Եղեռնը մեր պատմության, հայ ժողովրդի պատմության մեջ մտած անբաժանելի մասն է, հատուկ մի գլուխ, և այն դուրս հանել մեր պատմությունից անհնարին է: Եվ եթե մենք մտնում ենք աշխարհի բոլոր ազգերի մաս կազմողների մեջ, ապա անհնարին է նաև դուրս հանել աշխարհի պատմությունից:

Ուրացումը հանցանք ընդունելու խղճալի ձև է:

Ամեն մի ուրացում իր հետ բերում է անտեսված փաստաթղթերի մի նոր հոսանք, վկայությունների մի նոր շարան, արխիվների փոշիներին հանձված վավերագրերի հայտնություն, որն ստանձնել են բազմաթիվ ազնիվ պատմաբաններ՝ և՛ հայ, և՛ օտար, այդ թվում՝ պրոֆ. Ավետիս Փափազյանը, որ ոճրագործի լեզվով, ոճրագործի ձեռքով իսկ գրված օսմաներեն փաստաթղթերն է թարգմանաբար հրատարակում:

Պետական շահերը խանգարում են բացել այս արխիվները, որ դեռ կան Ստամբուլում, Վաշինգտոնում, Սոֆիայում, Վատիկանում, Փարիզում, Բեռլինում ու Լոնդոնում:

Տասնամյակներ շարունակ մենք փորձեցինք ցեղասպանության պատմական ճշմարտությունը ընդունել տալ պետություններին և մինչև այսօր շարունակում ենք, բայց ճշմարտության դեմ պայքար է մղում ոճրագործների հաջորդական

սերունդը՝ դիտակցելով պետական շահերի դերը այդ ձախավեր պայքարում, քանզի գիտե, որ ճանաչել ցեղասպանությունը, նշանակում է վարկաբեկել իր ժողովրդին իբրև ոճրագործ, այլև գիտե, որ նա իր հետ բերում է հատուցման բազմաձև պահանջներ։

Եթե պահանջելը չի նշանակում ստանալ, ապա չպահանջելը նշանակում է մեղակից դառնալ անարդարության։

Մեզ հայտնի է դարձել այն ահավոր ելույթը, որ ունեցել է Օսմանյան կայսրության պաշտպանության նախարար Էնվեր փաշան.

_Երբ կվերանա հայը աշխարհի երեսից, կվերանա հայկական հարցը։ Չի՛ լինի հայ, չի լինի հայի հարց։

Այս նույն միտքը հաճախ կրկնել են նաև Թալեաթն ու Ջեմալը։

Բայց մենք մնացինք։

Մեզ հետ մնում, մեզ հետ ապրում է մեր հարցը, որ բարեփոխված է ու կոչվում է՝ Հայկական դատ, կամ Հայ դատ։

Ուստի շարունակվելու է պայքարը հանուն պատմական ճշմարտության, հանուն այն բանի, որ այլևս չկրկնվեն նման ոճիրներ։

Մեր Դա՛տը. մեր պատմական, օրինական իրավունքը ճանաչել տալու ամեն ջանք ու ճիգ, ամեն միջոց ու զոհողություն անում է մեր ժողովուրդը, հատկապես, սփյուռքահայ կազմակերպությունների միջոցով, քանզի մեր Հայաստանի պետականությունը տնտեսական, դիվանագիտական ու քաղաքական պատճառներով անմիջապես մասնակցություն չի կարող բերել այդ սրբազան գործին, բայց բարոյապես, ազգային իրավունքի իմաստով երբեք չի նահանջել։

Այս բոլորի մեջ ամեն մեկս մեր բաժինն ունենք, ամեն մեկս մեր ձևով մասնակցում ենք այս նվիրական գործին։

Շնորհավորենք պրոֆ. Ավետիս Փափազյանին իր անխոնջ, անձնվեր և պատվաբեր մասնակցության համար։ Նրա վաստակը նպատակաուղղված է հիշեցնելու. մոռացության չտալու պատմական ճշմարտությունը, իսկ մենք, գնահատելով նրա աշխատանքը, չենք մոռանա նրա վաստակը։

ՍՏԵՓԱՆ ԱԼԱՋԱՋՅԱՆ
Մշակույթի վաստակավոր գործիչ

ԱՌԱՋԱԲԱՆ

1877-78 թվականներին տեղի ունեցած ռուս-թուրքական պատերազմում, ռուսական զորքերը մեծ հաջողությունների հասան Բալքանյան և Կովկասյան ռազմաճակատներում: Պատերազմը ավարտվեց Ռուսաստանի կատարյալ հաղթանակով: Բուլղարները և հայերը, որպես օսմանյան ծանր լծից իրենց ազատարարների, ցնծությամբ դիմավորեցին ռուսական բանակի հաղթական երթը: Աստիճանաբար մեծ վերելք ապրեց կեղեքված ժողովուրդների ազգային ազատագրական պայքարը:

1878 թ. մարտի 3-ին Կ. Պոլսից 12 կմ հեռավորության վրա գտնվող Սան Ստեֆանոյում ստորագրվեց հաշտության պայմանագիր: Այն բաղկացած էր 29 կետերից, որի 16-րդ հոդվածը վերաբերում էր Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելուն:

Այսպիսով, Բարձրագույն դուռը ճանաչում էր Հայաստանի և հայ ազգի գոյությունը Օսմանյան կայսրությունում և բարենորոգումների անվան տակ Հայկական հարցը դառնում էր միջազգային դիվանագիտության հարց:

Բնականաբար, եվրոպական մեծ տերությունները չէին հանդուրժելու Ռուսաստանի միակողմանի հաջողությունը, ուստի պահանջեցին միջազգային վեհաժողով հրավիրել և համատեղ քննարկել հաշտության պայմանագիրը:

Այս իրավիճակում, 1878 թ. հունիսի 13-ին բացվեց Բեռլինի վեհաժողովը՝ Անգլիայի, Ռուսաստանի, Իտալիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի պատվիրակների և մի քանի փոքր երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ: Վեհաժողովին մասնակցելու համար Բեռլին էին մեկնել Խրիմյան Հայրիկը, նրա քարտուղար Մինաս Չերազը, Նար Բեյը, Ստեփան Փափազյանը: Սակայն բուլղարական և հայկական պատվիրակություններին թույլ չտրվեց մասնակցելու վեհաժողովին:

Հուլիս 8-ին Անգլիայի արտաքին գործերի նախարար՝

Սորբերին վեհաժողովին ներկայացրեց հայերին վերաբերող հոդվածի իր մշակած նախագիծը, որը մասնակի խմբագրությամբ, հայկական բարենորոգումների անվան տակ, ընդունվեց որպես 61-րդ հոդված, հետևյալ բովանդակությամբ. «Բարձրագույն դուռը հանձն է առնում հայկական վայրերում անհապաղ իրագործել տեղական պահանջներից բխող բարեփոխումներ ու բարենորոգումներ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից։ Այդ նպատակով ձեռնարկված միջոցառումների մասին նա պարբերաբար պարտավոր է հաղորդել պետություններին, որոնք պետք է հսկեն դրանց գործադրության»։

Իրականում, Բեռլինի վեհաժողովից հետո, երբ Հայկական հարցը միջազգային բնույթ ընդունեց, սուլթանական կառավարության ազգային ու կրոնական հալածանքները, կյանքի ու գույքի անապահովությունը, հարկային ծանր գանձումներն ու գավառային պաշտոնյաների չարաշահումներն ավելի մեծ չափերի հասան։

Բեռլինի վեհաժողովից հետո հայ ժողովուրդը նկատելով մեծ տերությունների անտարբեր վերաբերմունքը Հայկական հարցի նկատմամբ, իր փրկության համար բռնեց սեփական ուժերով պայքարելու ուղին։ Բուռն վերելք ապրեց հայ ժողովրդի ազատագրման շարժումը օսմանյան բռնակալության լծից, սակայն թշնամու գերակշռող ռազմական սպառազինության դեմ չկարողացավ պայքարը հասցնել իր հաղթական ավարտին։

1894 թ. օգոստոսին և հետագայում թուրքական բանակը ծավալուն հարձակում նախաձեռնեց Սասունի և շրջակա նահանգների վրա։ Տեղի ունեցավ սարսափելի ջարդ, որին զոհ գնացին 300 000 անմեղ հայեր։

1895 թ. մայիսի 11-ին Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան համատեղ մի ծրագիր ներկայացրին Բարձրագույն դռանը հայաբնակ նահանգներում (Էրզրում, Բիթլիս, Վան, Սեբաստիա, Խարբերդ և Դիարբեքիր) բարենորոգումներ

անցկացնելու համար։ Այն վավերացվեց Բարձրագույն դռան կողմից հոկտեմբեր 18-ին, բայց չգործադրվեց կյանքում։

Աբդուլ Համիդի բռնատիրության շրջանում հայերի բնաջնջման վերաբերող նենգ արարքները հետագայում նույնությամբ որդեգրեցին նաև 1908 թ. իշխանության գլուխ եկած երիտթուրքական կառավարությունն ու «Իթթիհատ վե թերաքքի» (Միություն և առաջադիմություն) կուսակցության պարագլուխները։ Դրա վառ ապացույցն է 1909 թ. Ադանայում և Կիլիկիայի մի շարք այլ վայրերում տեղի ունեցած 30 000 հայերի կոտորածները, որոնք նախօրոք պատրաստված և հրահրված էին երիտթուրքերի կողմից։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին արևմտահայության վիճակը ավելի վատթարացավ։ Տվյալ ժամանակաշրջանի հայկական հալածանքների հիմնական դրդապատճառը կապված էր Հայկական հարցի աշխուժացման հետ, քանի որ հայաբնակ 6 նահանգներում բարեփոխումներ անցկացնելու նպատակով բանակցություններ էին տեղի ունենում մեծ տերությունների շրջանակներում։ Չնայած այն ի վերջո ստորագրվեց թուրքական կառավարության կողմից (փետրվար 8, 1914 թ.), սակայն հենց սկզբից թուրքերը դեմ էին դրսից պարտադրվող բարենորոգումներին և հսկողությանը ու երբեք նպատակ չունեին կյանքի կոչելու այն։

Հայկական հարցը լուծելու համար Երիտթուրքերն ընտրեցին արևմտահայությանը իսպառ ջնջելու ճանապարհը։ Եվ այդ դաժան ծրագրի իրագործման հարմար ժամանակը հանդիսացավ Առաջին համաշխարհային պատերազմը։ 1914-1916 թթ. Երիտթուրքերի կառավարության կիրառած ցեղասպան քաղաքականության հետևանքով նահատակվեցին մեկուկես միլիոնից ավելի անմեղ հայեր։

Անցած 86 տարիների ընթացքում թուրք պատմագրությունը չարամտորեն աղավաղել և նենգափոխել է իրականությունը, և այսօր էլ շարունակում է նույնը կատարվել թե՛

պատմաբանների և թե՛ պետական գործիչների կողմից։

Թուրք պատմաբանները պնդում են, որ երկրի ներսում առաջացած ապստամբության հետևանքով կառավարությունը նախաձեռնեց հայերի տեղահանությանը, ոմանք էլ փորձում են ապացուցել, որ տեղահանությունը իրականացվել է կովկասյան ճակատում թուրքական բանակի թիկունքը ապահովելու նկատառումով։

Ավելի ուշ սկսվեց խոսվել այն մասին, որ այդ տարիներին երկու ժողովուրդների միջև տեղի են ունեցել փոխադարձաբար սահմռկեցուցիչ դեպքեր և այդ սարսափելի բախումներին զոհ են գնացել ոչ միայն հայերը, այլև թուրքերը։

Իսկ 1980-ական թվականներին թուրքերը ավելի առաջ գնալով աշխարհով մեկ սկսեցին հայտարարել, թե հայերն են կոտորել թուրքերին։ Թուրքական մամուլն ու հեռուստատեսությունը նախաձեռնեցին ինչ որ «թուրքական եղբայրական գերեզմանների» հայտնաբերման և պեղումների մասին հաղորդումների կազմակերպմանը։ Այս կապակցությամբ հրավիրվեցին մասնագետներ, կազմակերպվեցին գիտաժողովներ, որպեսզի աշխարհով մեկ ապացուցեն, որ դրանք հայերի կողմից կոտորածի ենթարկված թուրքերի գերեզմաններ են։ Այնուհետև այդ «զոհերի» հիշատակին սկսեցին հուշարձաններ կառուցել մի շարք վայրերում։

Թուրք պետական գործիչները իրենց անհիմն քարոզչական ծրագրերը իրականացնելու համար տևապես միլիոններ են ծախսում և դիմում՝ ամեն մի նենգ միջոցի։ Կազմակերպվում են գիտաժողովներ։ Հրատարակվում են կեղծիքներով լի գրքեր։ Նկարահանվում են բազմասերիանոց ֆիլմեր, որոնք ցուցադրվում են թուրքական հեռուստատեսությամբ։

Հայերի ցեղասպանությունը հերքելու և ընդհանրապես հայ ժողովրդի պատմությունը աղավաղելու միտումներով առ այսօր Թուրքիայում լույս են տեսել բազմաթիվ գրքեր, որոնց հեղինակները, հիմնականում, չեչտը դրել են հետևյալ հարցերի վրա.

իբր թե,

1. Օսմանյան կայսրությունում հայերը երբեք չեն ենթարկվել ճնշման. օգտվել են ամեն կարգի արտոնություններից և վարել են խաղաղ ու բարվոք կյանք։

2. Օսմանյան կայսրության ոչ մի տարածքում հայերը մեծամասնություն չեն կազմել։

3. Հայաստանը, որպես ինքնուրույն պետություն, երբեք գոյություն չի ունեցել։

4. Հայերը եկվոր ժողովուրդ են և չեն ունեցել ինքնուրույն մշակույթ։

5. Հայկական հարցը անգլո-ռուսական հակամարտությունների արդյունք է, Թուրքիայի ներքին գործերին միջամտելու համար։

6. Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում հայերը ապստամբել են։ Ռուսաստանի հետ համագործակցելու համար, թուրքական կառավարությունը հարկադրված՝ հայերին տեղափոխել է մի այլ վայր։

7. Եղել են փոխադարձ բախումներ։ Հայերի ցեղասպանություն չի եղել, այլ, հակառակը, թուրքերն են զոհ գնացել հայերի բռնություններին։

Նշենք նաև, որ այդ ստապատիր գրքերը հաճախ թարգմանվում են արևմտաեվրոպական լեզուներով, որպեսզի ապակողմնորոշեն միջազգային հասարակական կարծիքը ի նպաստ թուրքերի։

Թուրքիայում հրատարակվող գրքերի բովանդակության և դրանց մեջ շոշափվող հարցերի մասին գաղափար կազմելու համար ստորև բերում ենք մի քանի գրքերի թունոտ վերնագրերը, ուր բացահայտ երևում է դրանց հետապնդման նենգ նպատակները հայ ժողովրդի պատմությունն ու հայերի ցեղասպանությունը քողարկելու և աղավաղելու խնդրում։

1. Ինայեթուլլա Ջեմալ Օզքայա. «Հայ ժողովուրդը և թուրքերին ստրկացնելու փորձերը», Ստամբուլ, 1971։

2. Վեյսել Էրօղլու. «Հայկական դաժանությունը», Ստամբուլ, 1973։

3. Մեհմեդ Հոջաօղլու. «Հայերը և հայկական բռնությունները արխիվային պատմական փաստաթղթերի հիման վրա», Ստամբուլ, 1976։

4. Հալիլ Քեմալ Թյուրքօզյու, «Հայկական գազանությունները օսմանյան և ռուսական փաստաթղթերի համաձայն», Անկարա, 1986։

5. Էմիրջան Աբդուլ Ալի, Մեհմեդ Էմին Գերկեր. «Մեծ Հայաստանի երազը և Կարսից մինչև Ղարաբաղ հայերի կատարած գազանությունները», Ստամբուլ, 1992։

6. Էրդալ Իլթեր. «Հայ եկեղեցին և ահաբեկչությունը», Անկարա, 1996։

1995 թ. Մեծ եղեռնի 80-ամյա տարելիցի օրերին Վանում լույս տեսավ «Էրզրումում, Մարիկամիշում և Կարսում հայերի կատարած դաժանությունները 1918-1920 թթ.» խորագրով գիրքը, Գյուրսոյ Սոլմազի առաջաբանով։ Գրքում ընդգրկված են այդ «դաժանությունների» 99 ականատեսների նկարագրությունները։ Գիրքը ընթերցողը կնկատի, թե ինչպիսի չինծու, երևակայական նկարագրություններ են կատարված հայերի «կատարած» դաժանությունների մասին։ Իբր, այդ դաժանությունները զսպելու համար 1920 թ. սեպտեմբերի 28-ին Արևելյան ռազմաճակատի հրամանատար զորավար Քյազիմ Կարաբեքիրը հարձակվում է հայերի վրա (էջ 15)։ Մինչդեռ Կարաբեքիրի կատարած ավերածությունները ու կոտորածները հայտնի են բոլորին։

Նույնիսկ թուրք պատմաբան Ջեմալ Քութայը մի գիրք գրեց, որի խորագիրն էր «Ինչպես Կարաբեքիրը բնաջնջեց Հայաստանը»։

Այս բոլորից հետո, վերոհիշյալ գրքում, Շեվքեթ Օղլու Հաջի Լեզգի Ուրայ անունով թուրք ականատեսներից մեկը Կարաբեքիրին նկարագրում է որպես բարի և գթասիրտ մի

անձնավորություն։ Այսպես. «Մենք առաջացանք մինչև Գյումրի։ Կարաբեքիր Փաշան շատ գթասիրտ մի անձնավորություն էր։ Մեր մեջ գտնվող հայ գերիներին ու երեխաներին նա ուտելիք էր բաժանում, հագուստեղեն էր տալիս։ Հայերի տներին և հայ կանանց ոչ ոք չհամարձակվեց ձեռք տալ» (էջ 18)։

Այս բոլորը, բնականաբար, բացահայտ կեղծիք է, քանի որ Քյազիմ Կարաբեքիրը, նույնիսկ, բացահայտ խոստովանել է, որ ինքը ջնջելու է Հայաստանը աշխարհի երեսից։

Թուրքական մյուս հրատարակությունների նման, այստեղ ևս խոսվում է, որ ոչ մի նահանգում հայերը մեծամասնություն չեն կազմել։ Եվ ընդհանրապես հայերին տրվում է իրականության հետ ոչ մի առնչություն չունեցող հետևյալ նենգամիտ բնութագիրը. «Իրենց «հայ», իսկ բնակավայրը Հայաստան անվանող հայերը, պատմության մեջ և այսօր ոչ մի ժամանակ Հայաստան, հայաստանցի, հայ անունները իրենց համար երբեք չեն օգտագործել» (էջ 19)։

Ահա այս ձևով թուրք պատմաբանները աղավաղում և նենգափոխում են հայ ժողովրդի պատմությունը։ Իրականում պատմական փաստերը ցույց են տալիս, որ Օսմանյան կայսրության «իրավական» համակարգը շատ ծանր է եղել, հատկապես, ոչ-մահմեդական հպատակների համար։ Օսմանյան վարչա-իրավական վերնախավի չարաշահումներն ու բռնությունները, հարկերի գանձման գործում արմատացած ապօրինությունները, երկրում ստեղծված անապահովությունը, թալանն ու կողոպուտը անտանելի էին դարձնում կյանքը Օսմանյան կայսրությունում։

Մահմեդական հոգևոր ու աշխարհիկ վերնախավի համար սկզբունքային հարց է եղել այլահավատ հպատակների մահմեդականացումը, որի իրականացման համար նրանք գործադրում էին ամեն տեսակ բռնություն։ Նշենք, որ բալկանյան երկրներում, Վրաստանում, ինչպես նաև Հայաստանում դեվշիրմե-մանկահավաքի կիրառման քաղաքականությունը կատարյալ մի պատուհաս է եղել հայ ժողովրդի

համար։ Հայտնի է, որ մանկահավաքի ենթարկված պատանի-ներին հատուկ զորանոցային պայմաններում դաստիարակում էին մոլեռանդ մահմեդականության ոգով և դարձնում՝ ենիչե-րի։ Անկասկած, մանկահավաքը մի հզոր միջոց է եղել թուրք կառավարողների ձեռքին՝ իրենց համաձուլման քաղաքակա-նության իրականացման ճանապարհին։

Կատարյալ խտրականություն է եղել նաև ազգային տարազը կրելու և կենցաղային սովորությունները գործադ-րելու հարցերում։

Այս բոլոր ճնշումներին պետք է ավելացնել նաև սուլ-թանական կառավարության կողմից հաճախակի կազմա-կերպվող ջարդերը։ Հատկապես, 19-րդ դարում զանգվածային կոտորածի ենթարկվեցին սերբերը՝ 1813 թ., հույները՝ 1826 թ., բուլղարները՝ 1876 թ., հայերը՝ 1894-1896 թթ.։

20-րդ դարի սկզբին արևմտահայության վիճակը աստի-ճանաբար դարձավ ավելի վտանգավոր և օրհասական։ Առաջին համաշխարհային պատերազմի նախաշեմին «Միու-թյուն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարները իրենց գաղտնի նիստերում, երբ ընդունեցին հայերին բռնի տեղահանելու, կոտորելու և խպառ ոչնչացնելու որոշումը, դա պատահական չէր, քանի որ նախորդ տարիներին արդեն նկատվում էին դրա պարզորոշ նշանները, ուղղակի սպասում էին հարմար ժամանակի։ Եվ այդ հարմար ժամանակը հանդի-սացավ Առաջին համաշխարհային պատերազմը, որի ընթաց-քում էլ նրանք իրագործեցին իրենց անմարդկային նպատակ-ները գազանային վայրագությամբ։

Այնպես, որ 1915-1916 թթ. հայերի զանգվածային տեղահանություններն ու կոտորածները Արևմտյան Հայաս-տանի քաղաքներում ու գյուղերում, ինչպես նաև Փոքր Ասիայի տարածքում գտնվող հայաբնակ վայրերում, չէին առնչվում ռազմական նկատառումներով կատարվող միջոցա-ռումների հետ, քանի որ հայության բնաջնջման հարցը

նախօրոք մշակված և որոշված էր «Միություն և առաջադի-մություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից։ Հայկական հարցը լուծելու համար Երիտթուրքերն ընտրել էին արևմտահայությանը խպառ բնաջնջելու ճանապարհը։

Եվ այդպես ժամանակակից թուրք պատմաբաններն իրենց ուսումնասիրություններում, շրջանցելով պատմական փաստերը, փորձում են քողարկել Արևմտյան Հայաստանում և, առհասարակ, ամբողջ Թուրքիայում տեղի ունեցած հարա-ծանքներն ու ցեղասպանությունը։ Նրանք իրենց ազգայ-նամոլական շահադիտումներից ելնելով փորձում են նույնիսկ աղավաղել մոտ անցյալի մի շարք թուրք պետական և մշակույթի գործիչների որոշ չափով առարկայական տվյալ-ները։ Հարցն այն է, որ ինչ որ տեղ թուրք պատմաբանների և պետական գործիչների գրիչները չեն խուսափել նշելու այն ողբերգությունները, որոնք տեղի ունեցան արևմտահա-յության հետ Աբդուլ Համիդյան բռնատիրության և Երիտ-թուրքերի իշխանության օրերին՝ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում։ Օրինակ, զորավար Ալի Ֆուադ Էրդենը, որն ականատես է եղել տասնհինգի հայկական ողբեր-գությանը, իր հուշերում ամեն կերպ աշխատում է խուսա-նավել և մեղքը բարդել կուսակցությունների գործունեու-թյան վրա։ Այնուհանդերձ, տվյալ դեպքերից 40 տարի հետո թղթին հանձնած իր հուշերի մեջ գրում է հետևյալը.

«Հարյուր հազարավոր մարդկանց, հազարավոր կիլո-մետրերով հեռավորությունների վրա առանց նախապատ-րաստման և կազմակերպման տարագրելը նմանվեց հնագույն դարերում տեղի ունեցած ցեղերի գաղթին։ Այն ճանապարհ-ները, որոնք հանդիսանում էին երեք բանակների (Կովկասյան, Իրաքյան և Սիրիական բանակների) ընդհանուր մատակա-բարման գիծը, համակվեց վարակիչ հիվանդություններով։ Գաղթականների թշվառ վիճակը շատ ծանրանում էր բազմաթիվ և որոշակի տիպի տարածման հանգամանքներից։ Իրենց ճանապարհի

3108

ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т Востоковед. АН Арм. ССР

ընթացքում դաղթականները տարածեցին այս բոլոր հիվանդությունները, վարակելով նաև բանակները։ Իսկ ի՞նչ եղավ հետևանքը։ Բանակում և ժողովրդի մեջ, մահացող դաղթականների թվի չափ, նույնիսկ ավելի մահ տեղի ունեցավ»[1]։

Հասկանալի է, որ այստեղ խոսքը միմիայն տեղահանության և վարակիչ հիվանդությունների հետևանքով զոհված հայերի մասին է և ոչ մի խոսք չկա դաժան եղանակներով ջարդի ենթարկված հայերի վերաբերյալ։ Այնուհանդերձ, նշված փաստն էլ շատ բան է ասում։

Այստեղ տեղին է բերել նաև հայերի տեղահանության և կոտորածներին ականատես Թուրք պատմաբան Ահմեդ Ռեֆիկի հետևյալ վկայությունը.

«Այս Մեծ եղեռնի գործադրման արդարացիությունը հաստատելու համար Ստամբուլում նախաձեռնվել էր քարոզչական անհրաժեշտ աշխատանքներ կատարել։ Լուրեր էին տարածում, որ հայերը գործակցում են թշնամու հետ. նրանք ապստամբություն են բարձրացնելու Ստամբուլում. սպանելու են իթթիհատական ղեկավարներին. անարգել բացելու են նեղուցը։ Ստապատիր այս գռեհիկ լուրերը դերևս կարող էին համոզել միմիայն հասարակ և տգետ մարդկանց»[2]։

Ուստի մեզ համար խիստ կարևոր է իմանալ, թե թուրք պետական գործիչները ինչպես են մեկնաբանել իրենց հուշագրություններում 19-րդ դարի վերջի քառորդին և 20-րդ դարի սկզբին տեղի ունեցած ողբերգական դեպքերը։

Ջնայած նրանց թուրքամետ դատողություններին, դեպքերի նկարագրման ընթացքում դրսևորած կողմնապահության, այդ մենագրություններում կան բավականաչափ ուշադրության արժանի նյութեր։

Ահա այս նկատառումով է, որ սույն գրքում քննադատական վերլուծություններին զուգընթաց հայ ընթերցողին է ներկայացվում թուրք գործիչների երկերից քաղված առանձին հատվածների թարգմանություններ։

Ա. ԹՈՒՐՔ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՔՅԱՄԻԼ ՓԱՇԱՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեհմեդ Քյամիլ փաշան սուլթան Աբդուլ Համիդի դահակալության շրջանի հանրահայտ պետական գործիչներից մեկն էր։

1884-1912 թվականների ընթացքում Քյամիլ փաշան չորս անգամ վարել է Օսմանյան կայսրության մեծ վեզիրի պաշտոնը։ Գրել է Օսմանյան կայսրության պատմությունը սկզբից մինչև 1861 թվականը. «Օսմանյան պետության քաղաքական պատմությունը» խորագրով, որը տպագրվել է 1909-1910 թվականներին 3 հատորով։ Նա ծրագրել էր երեք հատորով տպագրել իր քաղաքական հուշերը, սակայն լույս է ընծայել միայն առաջին հատորը՝ 1911 թ.։

Քյամիլ փաշայի հուշագրության մեջ հայությանն առնչվող նյութերը և Աբդուլ Համիդ երկրորդին ներկայացրած նրա զեկուցագրերը հիմնականում վերաբերում են 1894 թ. ամռանը տեղի ունեցած Սասունի ջարդերին և 1895 թ. Արևմտյան Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ երեք մեծ տերությունների Բարձրագույն դռանը ներկայացրած հուշագրերին։ Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Հայկական հարցի և դրա նկատմամբ մեծ տերությունների դիրքորոշմանը վերաբերող՝ Քյամիլ փաշայի քաղաքական հայացքները, մեկնաբանություններն ու խորհրդածությունները։

Քյամիլ փաշան աչքի էր ընկնում իր հայատյացությամբ։ Դեռևս 1880-ական թվականներից սկսած նրա մոտ որոշակիորեն երևան են գալիս ծայրահեղ ազգայնամոլական գաղափարներ, որոնք զարգանալով, հետագայում հանդեցրին ցե-

պասպանութեան հանցագործութեան։

Նա ցինիկորեն հայտարարում է.

«Եթէ Եւրոպայի մէջ մեր ծոցը օձ սնուցինք, սակայն պէտք չէ, որ նոյն յիմարութիւնն ընենք մեր Ասիական Տաճկաստանի մէջ։ Խելօքութիւնը՝ ջնջել վերացնելն է այն ամէն տարերքը, որ օր մը կրնան մեզ նոյն վտանգը ծնանիլ եւ օտարին ձեռնամխութեան առիթ ու գործիք լինել։ Հիմա, այսօր գոնէ, Անգլիոյ շահերն կը պահանջեն, որ Փոքր Ասիոյ (մենք եւ Անգլիա «Հայաստան» բառը ոչ միայն չենք ճանչնար, այլ այդ անունը հնչող կազմերը պէտք է ջախջախենք) մեր ունեցած երկիրները ազատ մնան օտարի միջամտութենէն եւ միջամտութեան ամէն առիթներէն, ուստի այդ սուրը նպատակին համար պէտք է եւ պետական իրաւունքը կը պահանջէ, որ որեւիցէ կասկածելի տարր անհետ ընենք, որպէսզի ապագան ապահովենք, ուրեմն այդ հայ ազգը վերցնելու, անհետ եւ անճիտ ընելու ենք։ Եւ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակսիր մեզ. ամէն գործիք պատրաստ ունինք՝ Քիւրտ-չերքէզ, կուսակալ, դատաւոր, հարկահան, ոստիկան, վերջապէս ամէնայն ինչ, կրօնական պատերազմ մը կը հայտարարենք եւ դիւրին պատերազմ այնպիսի ազգի մը դէմ, որ ոչ զէնք ունի, ոչ զինուորութիւն եւ ոչ պաշտպան, երբ, ընդհակառակը, մենք զէնք էլ ունինք, զինվորութիւն էլ, և աշխարհիս ամենամեծ տէրութիւններէն մէկը (Անգլիան–Ա. Փ.), եւ ամէնէն հարուստը մեզ զինակից է եւ մեր Ասիական աշխարհքին երաշխաւոր։ Եւ եթէ այդ հայ ազգը բնաջինջ լինի եւ քրիստոնեայ Եւրոպա կրօնակից մը փնտռէ եւ չի գտնէ տաճկական Ասիոյ մէջ, կթողու զմեզ հանգիստ եւ այն ատեն կը զբաղինք ներքին գործերով եւ բարեկարգութեամբ»[1]։

Բերված հատվածը պարզորոշ ցույց է տալիս, թե Քյամիլ փաշան ինչպիսի նենգ մտահղացումներ է ունեցել արևմտահայության նկատմամբ։

Հայտնի է, որ Բեռլինի վեհաժողովից հետո սուլթանական կառավարության ջարդարարական քաղաքականությունը հայերի նկատմամբ առավել բացահայտ դարձավ, հատկապես, 1890-ական թվականներին։ Թուրքական իշխանությունների անկաշկանդ կամայականությունները, հարկերի անտանելի ծանրությունը և անասելի հարստահարությունը այլևս անհնար էր տանել։ Սասունի հերոս հայությունը, զգալով իրեն սպառնացող վտանգը, պատրաստվեց ինքնապաշտպանության։ 1894 թ. օգոստոսին թուրքական բանակը ծավալուն հարձակում նախաձեռնեց Սասունի վրա։ Սուլթանի կողմից զինված զինվորները սարսափելի ջարդի մատնեցին հայ տղամարդկանց, կանանց ու երեխաներին։

Իր վրա բարդված մեղադրանքը թեթևացնելու միտումներով թուրքական կառավարությունը հաճախ ձգտել է հերքել կառավարական զորքերի մասնակցությունը Սասունի կոտորածներին։ Քյամիլ փաշայի հուշագրության մեջ պարզ կերպով նշված է, որ ջարդը տեղի է ունեցել Աբդուլ Համիդի հրամանով։ Այն իրագործել է Բիթլիսի 4-րդ բանակի հրամանատարությունը՝ Զեքի փաշայի գլխավորությամբ։

Սասունի կոտորածները մեծ հուզում առաջացրին ամբողջ քաղաքակիրթ աշխարհում։ Մամուլում լույս տեսան բազմաթիվ հոդվածներ, որոնք լիովին բացահայտում էին անմեղ մարդկանց կոտորելու պատճառները և մեղադրում էին Աբդուլ Համիդին հայերի հանդեպ վարած վայրագ քաղաքականության համար։ Անգլիայում առաջադեմ հասարակայնությունը կառավարությունից պահանջում էր դիմել գործնական միջոցների՝ կանխելու համար հայերի հարածանքները Օսմանյան կայսրությունում։

Բողոքների ճնշման ներքո, ի վերջո սուլթանական կառավարությունը համաձայնեց հանձնաժողով ուղարկել Սասուն՝ կոտորածի հանգամանքները ստուգելու նպատակով։ Սակայն այդ հանձնաժողովի հետաքննությունները առանձ-

նապես արդյունք չտվին, քանի որ սուլթանական կառավարությունը արդեն նախօրոք հանձնարարել էր նրան, առանց քննության արդարացնել տեղական իշխանություններին և մեղադրանքը բարդել հայ գյուղացիության վրա։

Այդ հանձնաժողովին մասնակցեցին նաև երեք մեծ պետությունների դիտորդ պատվիրակները։ Հանձնաժողովի կազմում էին Ջելալ բեյը, Մեհիդ բեյը, Թեվֆիք փաշան։ Այն գլխավորում էր Շեֆիք բեյը։ Հանձնաժողովը Սասուն հասավ 1895 թ. հունվարի 23-ին։ Թուրքական հանձնաժողովը ձգտում էր դեպքերը ներկայացնել խեղաթյուրված տեսքով։ Իսկ Թուրքական իշխանությունները բոլոր միջոցներով աշխատում էին խանգարել նրա աշխատանքը, հատկապես՝ արտահայտվելու ականատես վկաներին։

Մյուս կողմից, մեծ պետությունները իրենց ընդհանուր շահերից ելնելով, հրահանգել էին իրենց ներկայացուցիչներին՝ չսրել հարաբերությունները Թուրքական հանձնախմբի հետ։

Երեք տերությունները, բնականաբար, իրենց շահերն ունեին Թուրքիայում։ Հայերի ու Հայկական հարցի համար Թուրքական կառավարությանը հայտագիր ներկայացնելու ձևական արարողությունից բացի, նրանք ոչ մի քայլ առաջ չգնացին։ Իսկ Թուրքական կառավարությունը ամեն կերպ փորձում էր նվազեցնել հայերի թիվը, որպեսզի հիմնավորեր բարենորոգումների ավելորդությունը։

Դեպքերի ժամանակակից Երվանդ Օտյանը այդ օրերին շատ դիպուկ գրում էր.

«Հայերը կը ջարդուին, հայերը կը կողոպտուին, հայ կիները կ'առեւանգուին, հայերուն հողերը կը հափշտակուին։ Կառավարությունը կ'ուզէ այդ չարիքներուն դարման մը տանել՝ ասոր համար ի՞նչ հարկ կա նախ հասկանալու, թէ քանի՞ հայ, քանի՞ թուրք, քանի՞ քիւրտ կա այդ նահանգներուն մէջ։ Ասոնց քանակութեանը չափո՞վ արդարությունը պիտի գործադրուի միթէ։ Մեծամասնութեան համեմա՞տ բարենորոգումներ պիտի ներմուծուին։ Ենթադրենք, որ գավառի մը մէջ հազար հայ եւ հարիւր հազար քիւրտ գտնուի, միթէ այդ հազար հայերը արդարությունն պահանջելէ պիտի զրկուի՞ն, կամ հարիւրի մէկ հարաբերությա՞մբ իրենց բողոքները պիտի լսուին»[2]։

Հայերին զանգվածաբար բնաջնջելով և նրանց թիվը արհեստականորեն նվազեցնելով, Թուրքական կառավարությունը ձգտում էր մոռացության տալ Բերլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, ինչպես նաև 1895 թ. «Մայիսյան բարենորոգումներ»ի ծրագիրը։ Միևնույն ժամանակ սուլթանական կառավարությունը մեծ ջանքեր է թափում հանդարտեցնելու միջազգային հասարակայնության կարծիքը կոտորածների կապակցությամբ։ Այս առթիվ Քյամիլ փաշան հետևյալ խորհուրդն էր տալիս Աբդուլ Համիդին.

«Սասունի դեպքը, ավելի ճիշտ այնտեղի ապստամբության ճնշումը հայերի կողմից այնպես է ուռճացվել և անգլիական մամուլում այն աստիճան դաժանությամբ է նկարագրվել, որ այդ հրապարակումները չէին կարող ազդեցություն չգործել ոչ միայն Անգլիայում, այլև նույնիսկ այստեղ՝ Օսմանյան կայսրության տարբեր հպատակների վրա»[3]։ «Եվ եթե այժմ որևիցե հրատապ բան կա անելու, դա այն է, որ հետաքննող հանձնաժողովի զեկույցը շտապ կերպով հրատարակվի Անգլիայում, որպեսզի հանդարտեցվի ընդհանուրի տրամադրությունը։ Եվ այդ հանդարտեցման նպատակին հասնելու համար, բավական է, որ նշված զեկույցը հրապարակվի օտար պաշտոնյաների ստորագրությամբ»[4]։

Քյամիլ փաշայի խորհրդով Աբդուլ Համիդը փորձեց հերքել կատարված եղելությունը և դրանց վերաբերյալ եղած հաղորդումները։ Նրա հրամանով եվրոպական հանդեսներին ուղարկվեցին հերքումներ՝ աշխատելով փոխել միջազգային հասարակայնության կարծիքը։ Սակայն Աբդուլ Համիդի այս նենգ քայլը չտվեց սպասված արդյունքը։ Այդ առթիվ ռուսական պետական խորհրդական Ժաղովսկին, արտաքին գործերի

նախարարությանը ուղղված իր զեկուցագրում հայտնում է.

«Հայերի դեմ ձեռնարկված վրդովեցուցիչ ռազմական միջոցառումների մանրամասնությունները թափանցել են եվրոպական մամուլ և Հայաստանի քրիստոնյա բնակչության նկատմամբ թուրքական զորքերի գազանաբարո արարքների դեմ ամենուրեք մերկացնող հոդվածներ ի փոթորիկ բարձրացրել։ Այդ պարապանքների անպատկառ կեղծ հերքումը, որն անձամբ սուլթանի հրամանով օրերս հեռագրերով ուղարկվել էր արտասահմանի բոլոր թուրք ներկայացուցիչներին՝ հնարավոր հրապարակումների համար, չկարողացավ ցանկալի տպավորություն գործել Եվրոպայի հասարակական կարծիքի վրա և չդադարեցրեց մեղադրանքների ու մերկացումների հեղեղը, ինչը և Դոանն ստիպեց վերջին օրերս արգելել արտասահմանյան համարյա բոլոր թերթերի մուտքը երկիր»[5]։

1895 թ. մայիսի 11-ին Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանների կողմից Բարձրագույն դռանը համատեղ ներկայացրած բարենորոգումների նոր ծրագիրը, իր թերություններով հանդերձ, նույնպես կյանքի չկոչվեց։ Այն բաղկացած էր 13 գլուխներից և 40 հոդվածներից։ Բարձրագույն դուռը որոշ ժամանակ անց դեսպաններին ներկայացրեց իր ծրագիրը, որտեղ ամեն կերպ խուսանավում էր ընդունելու դեսպանների ներկայացրած առաջարկությունները։ Նրա առաջարկած ծրագիրը բոլորովին չէր կարող ապահովել հայերի կյանքը, գույքը, թուրքական պաշտոնյաների կամայականություններից և քրդերի հարստահարություններից։ Մեծ տերությունները չընդունեցին Բարձրագույն դռան ծրագիրը, և շարունակվեցին բանակցությունները։ Այս ընթացքում տեղի ունեցավ Կ. Պոլսի հայության կոտորածը (1895 թ. սեպտեմբերին)։ Կոտորած տեղի ունեցավ նաև Տրապիզոնում։ Եվրոպական պետությունների և համաշխարհային հասարակայնության պահանջով 1895 թ. սեպտեմբերին, սուլթան Աբդուլ Համիդի կարգադրությամբ,

մեծ վեզիր Սայիտ փաշան ստորագրեց բարենորոգումների ծրագիրը, սակայն նրա մեջ մտցնելով այնպիսի փոփոխություններ, որոնք կարող էին նպաստել թուրքական բռնություններին։ Աբդուլ Համիդը ամեն կերպ աշխատում էր չկատարել ծրագրի պահանջները և, նույնիսկ, սպառնում էր նոր կոտորածներով։

Հետագայում, հիշյալ բարենորոգումների իրականացման հարցում տարակուսանք է հայտնել նաև Քյամիլ փաշան.

«Ընթերցելու ընթացքում ես նկատել էի,—գրում է նա,—որ այդ հոդվածները հագիվ թե գործադրվեին կյանքում, քանի որ քրդերի զինաթափումը և քրիստոնյա պաշտոնյաների նշանակումը ծանր էր անդրադառնալու քրդերի վրա։ Այնուամենայնիվ, քանի որ տվյալ որոշումը հաստատվել էր կայսերական հրամանով, ես էլ իմ հերթին ստիպված էի ստորագրել այն, մատնանշելով նաև, որ տվյալ հոդվածների կիրառումը կապված է դժվարությունների հետ»[6]։

Հատկանշական է, որ ժամանակակից թուրք պատմաբանները իրենց ուսումնասիրություններում չբջանցելով պատմական իրական փաստերը, նենգափոխում են, նույնիսկ, իրենց ազգակից նախորդների գրի առած վկայությունները։

1954 թ. Հիլմի Քյամիլ Բայուրը Անկարայում լույս ընծայած «Սադրազամ Քյամիլ փաշայի քաղաքական կյանքը» խորագիրը կրող իր աշխատության առաջաբանում շեշտում է, որ ինքը ձգտել է բերել փաստացի նյութեր և, հատկապես, ամբողջական հատվածներ Քյամիլ փաշայի հուշերից։ Սակայն, բերված հատվածների և բնագրի մեր կողմից կատարված համեմատությունից պարզվեց, որ Հիլմի Բայուրը դիտումնավոր կրճատել և աղավաղել է բնագրից քաղված հատվածները։ Նախ բոլորովին հանված են քրդերի մասին եղած տեղեկությունները, քանի որ այսօր թուրքերի կարծիքով Թուրքիայում քրդեր կամ քրդական հարց գոյություն չունի։ Բերված հատվածներում նա բաց է թողել արևմտա-

հայության վիճակին վերաբերող այն մասերը, որոնց հրատարակումը նպատակահարմար չի գտել։ Օրինակ, Սասունի դեպքերին վերաբերող հատվածից հանել է հետևյալ խոսուն տողերը.

«(Սասունի հարցում) Աբդուլ Համիդը հանդիմանել էր գլխավոր քարտուղար Սուրեյա փաշային խիստ հեռագիր ուղարկելու համար «Ես ասել էի խփե՛ք, ոչ թե կոտորած սարքեք»»[7]։

Ժամանակակից թուրք պատմաբանները պնդում են, որ թուրքերը չեն կոտորել հայերին։ Մինչդեռ բերված հատվածում կա «կոտորած» բառը։ Կոտորածի մասին է խոսվում նաև ստորև բերված հատվածում, որը Բայուրը բաց է թողել Քյամիլ փաշայի հուշագրությունից քաղված հատվածում.

«Նա (Ավստրիայի դեսպանը) հայտնեց, որ նախորդ օրը տեղի ունեցած ժողովում, հյուպատոսարաններից դեսպանատները ուղարկված զեկուցագրերի ընթերցումից պարզվել է, որ կոտորվել են հազարավոր հայեր, որ Դիարբեքիրում քրդերի կողմից առանց խտրականության քրիստոնյաների սպանությունները, կողոպուտն ու բռնությունները, ինչպես նաև Անատոլիայի այլ վայրերում տեղի ունեցած նույն խժդժությունները տվյալ դարում չտեսնված բաներ են»։

Ծանուցագիրը գրված է 15 ջեմազի էլ-էվվել 1313 թ. (նոյեմբեր 3, 1895 թ.)[8]։

Ինչպես ասվեց վերևում, սուլթանական կառավարությունը միշտ ձգտել է կեղծել և նվազեցնել հայերի թիվը Արևմտյան Հայաստանում՝ արդարացնելու համար բարեփոխությունների ձգձգման իր նենգ դիտավորությունը։ Հայերի մեծամասնություն կազմելու մասին փաստ է Քյամիլ փաշայի ուշադրության արժանի հետևյալ խոստովանությունը.

«Անատոլիայի (իմա՝ Արևմտյան Հայաստան-Ա. Փ.) այն գյուղերում և քաղաքներում, ուր հայերը մեծամասնություն էին կազմում, ապստամբությունը ավելի կազմակերպված բնույթ էր կրում»[9]։

Այսպիսով, բերված հատվածները, որոնք միտումնավոր կերպով կրճատված են Հիլմի Բայուրի աշխատության մեջ, ցույց են տալիս, թե ինչպես թուրք ժամանակակից պատմագրությունը խեղաթյուրում և աղավաղում է հայ ժողովրդի պատմությունը։

Ահա այս առումով անհրաժեշտ են դառնում թուրքական պատմական բնագրերի և այդ թվում նաև Քյամիլ փաշայի հուշերի գիտական թարգմանության հրատարակումը հայերեն և այլ լեզուներով։

Քյամիլ փաշայի հուշերից քաղվածաբար բերված նյութերը թարգմանելիս աշխատել ենք հարազատ մնալ նրա ոճական առանձնահատկություններին։

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԳՐԻՑ

Աբդուլ Համիդը հայերի ապստամբության և Սասունի դեպքերի կապակցությամբ հարցնում է նախկին մեծ վեզիր Քյամիլ փաշայի կարծիքը[10]։

Իմ պաշտոնավարության ընթացքում աշխատել եմ բոլորովին չվշտացնելով նորին պայծառափայլություն փադիշահին, հավատարմությամբ ծառայել և պաշտպանել եմ պետության շահերը և փառապանծ սուլթանության իրավունքները։ Նույնիսկ մի շարք հարցերում առաջ եկած տարաձայնություններն էլ հարթվել են հետագայում։ Այժմ էլ առանց վշտացնելու նորին պայծառափայլությանը, պատրաստ եմ պատասխանելու այդ հարցերին։ Երեք պետությունների կողմից կատարված առաջարկի մասին ոչինչ չեմ կարող ասել։ Նրանց հետ չփում չունենալու պատճառով, ոչինչ չեմ կարող ասել նաև հիշյալ առաջարկը ձևափոխելու հնարավորության մասին։ Այդ առաջարկը փոխելու հնարավորության մասին կարող եմ ասել, հիմնվելով միմիայն դեսպանների հետ ունեցած իմ հարաբերությունների վրա։ Սակայն ի՞նչը կարող է պատճառ հանդիսանալ այդ առաջարկին։ Ծայրահեղ դեպքում այդ առաջարկին կարող են հիմք ծառայել Բեռլինի դաշնագիրը կամ էլ խլամի հանդեպ ունե-

ցած նրանց վրեժխնդրությունը։ Այսուհանդերձ, այն չի կարող դաշնագրի հետևանքով առաջ գալ, քանի որ դաշնագրից առաջ եկած սխալների համար պետություններին նախազգուշացման իրավունք է վերապահվում։ Հետևաբար հիշյալ առաջարկի համար պետք է հիմք ծառայի վրեժխնդրությունը, քանի որ Սասունի դեպքերը չափից ավելի ուռճացվելով՝ Եվրոպայում արտակարգ լուրեր տարածվեցին, որ, իբր թե, (կառավարության) հրամանով զինվորներ են առաքվել, որոնք բռնություն և դաժանություն են գործադրել հայերի նկատմամբ և ոչնչացրել 10 000 հայեր։ Եվ քանի որ այդ սուտ լուրերը և չափազանցությունները չհերքվելով, լուության մատնվեցին, ուստի այդ դեպքերը նկատի առնվեցին որպես իրականություն։

Անգլիական հասարակությունը ցասումով արտահայտեց իր հուզմունքը այդ առթիվ։ Տեղի ունեցան բազմաթիվ ժողովներ, որտեղ արտասանվեցին զանազան անհեթեթություններ պարունակող ճառեր։ Ստեղծվեց այնպիսի վիճակ, որ ոչ անգլիական կառավարությունը և ոչ էլ անգլիական դեսպանությունը չէին կարող մի բան անել այս խնդրում։ Ինչ վերաբերում է Ռուսաստանին և Ֆրանսիային, ինչպես ասվեց, նրանք մասնակցել են այդ առաջարկին ոչ թե (Օսմանյան) պետության իրավունքներն ու շահերը պաշտպանելու և Անգլիայի ցասումը հանդարտեցնելու նպատակով, այլ միգուցե Անատոլիայում անգլիացիների ազդեցությունը թուլացնելու և իրենցը ուժեղացնելու նկատառումներով։ Այնպես, որ եթե հիշյալ պետությունների կողմից այդ առաջարկի գործադրումը վճռականապես հաստատվել է, ապա դրա չընդունելը բավական վտանգավոր կլիներ, քանի որ, հակառակ դեպքում, նրանք կարող էին դիմել այլ միջոցների։ Եվ եթե նրանք վճռականորեն են տրամադրված այդ առաջարկի նկատմամբ, ապա անհնար կլինի փոփոխության ենթարկել այն։ Հետևաբար, եթե այժմ որևէ հրատապ բան կա անելու, դա այն է,

որ հետաքննող հանձնաժողովի զեկույցը շտապ կերպով հրապարակվի Անգլիայում, որպեսզի հանդարտեցվի ընդհանուրի տրամադրությունը։ Եվ այդ նպատակին հասնելու համար բավական է, որ հիշյալ զեկույցը հրապարակվի օտար պաշտոնյաների ստորագրությամբ։ Այդ զեկույցի հրապարակումից հետո կարելի է տվյալ առաջարկի ավելորդության մասին հարցապնդում կատարել երեք տերություններին[11]։

* * *

1311 (1894) թվականի սկզբին Անատոլիայում բռնկվեց հայերի ապստամբությունը։ Սասունում սկսված մի վտանգավոր իրադարձության հետևանքով, մի գիշեր, սուլթանի մտերիմներից հաջի Ալի բեյը բնակարանս գալով հայտնեց, որ փատիշահը ուզում է ինձ տեսնել։ Հենց որ պալատ հասա, դարպասի առաջ սպասող երկու ծանոթ անձնավորություններ ինձ առաջնորդեցին հարեմի հատվածը։ Ներս մտնելիս նկատեցի, որ փատիշահը ոտնկայս, գտնվում է չափազանց տագնապալի վիճակում։ Նա խոսքը ինձ ուղղելով ասաց. «Ախ, ինչո՞ւ չեք հետաքրքրվում, երեք օր է քուն չունեմ»։ Իսկ ես մտնելով նրա հուսահատ դրության մեջ, ցանկացա իմանալ նրա տագնապի պատճառների մասին։ Վեհապետը ինձ բացատրեց Սասունի ապստամբած հայերի դաժան արարքները և ավելացրեց, որ ինքը հրամայել է հեռագրել 4-րդ բանակի հրամանատարությանը՝ ապստամբներին ճնշելու համար և, որ այդ հրամանի գործադրումը չարժանացել է դարձել Անգլիայի միջամտությանը։ Նա ավելացրեց, որ ինքը հանդիմանել էր իր գլխավոր քարտուղար Սուրեյա փաշային խիստ հեռագիր առաքելու համար։ «**Ես ասել էի խփեք, ոչ թե կոտորած արքեք**» (ընդգծումը մերն է-Ա. Փ.)։ Այնուհետև, սուլթանը հրամայեց, որպեսզի ես գնամ անգլիական դեսպանի մոտ և հորդորանքով հայտնեմ իր կարգադրությունը այն մասին, որ դեսպանի կողմից հետաքննության համար

դեպքի վայրը ուղարկված հատուկ պաշտոնյային ընկերանան նաև Ֆրանսիայի և Ռուսաստանի ներկայացուցիչները, և տեղի դատարանում դատավճիռ կայացնելու համար կազմվի նաև բողոքարկման հանձնաժողով, որպեսզի տեղում ի կատար ածվի վերջնական դատավճիռը։

Ես անմիջապես մեկնեցի դեսպանատուն, որտեղ դյուրագրգիռ բնավորություն ունեցող դեսպանին՝ պրն. Ֆիլիփ Քերրիին գտա հուզված վիճակում։ Մտերմիկ զրույցից հետո նրան հայտնեցի վեհապետի հրամանը։ Իր պատասխանում դեսպանը հայտնեց, որ փատիշահի կողմից այդ առթիվ նախօրոք իր մոտ եկած արտաքին գործերի նախարարին ինքը հարցում էր կատարել, թե Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները այդ գործին ինչ պայմաններով են ներգրավվելու։ Այնուհետև, նա կարդաց Անգլիայի արտաքին գործերի նախարարության իր գրած հեռագրերի պատճենները, իսկ դեպքի վայրում բողոքարկման հանձնաժողով ստեղծելու հարցի շուրջ ակնարկություն չարեց։ Վերադարձիս, իրադրությունը հայտնեցի փատիշահին։

Որոշ ժամանակ անց, երբ փոփոխություն տեղի ունեցավ կաբինետում, սուլթան Համիդը իր Սեր Կարինի[12] միջոցով ինձ հայտնեց, որ մտադիր է ինձ հանձնել պետական խորհրդի նախագահության պաշտոնը։

Իսկ ես անցյալի դեպքերը մտաբերելով խուսափում էի վեզիրությունից և դրա համար էլ իմ պատասխանում նշեցի, որ կայսրությունում պաշտոնական ծառայության մեջ գտնվելը պատվի հարց է, ես պաշտոնից դուրս էլ միշտ պատրաստ եմ եղել ծառայելու իմ վեհապետին[13]։

Հայերի ապստամբությունը հետզհետե ընդարձակվելով, սկսել էր տարածվել նաև Անատոլիայի այլ շրջանները, մեծ հոգս պատճառելով պետությանը։ Մյուս կողմից էլ անգլիական, ռուսական և ֆրանսիական պետությունները, միաձայնության գալով, մի հուշագիր էին ներկայացրել Բարձրագույն դռանը, որպեսզի բարենորոգումներ անցկացվեին Անատոլիայում։ Ահա, այս դժվարին կացությունից դուրս գալու համար, սուլթան Համիդը արձակել էր մի հրաման, որպեսզի ձեռք առնվեն անհրաժեշտ միջոցներ։ Այդ առթիվ ես էլ հայտնել էի իմ կարծիքը հետևյալ գրությամբ[14].

ՀԱՏՈՒԿ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

«Թե ինչ վտանգավոր հետևանք կունենա Հայկական հարցի շուրջ երեք պետությունների կողմից կատարված առաջարկը, ակնհայտ է։ Այդ առաջարկները հաստատելու համար, եթե Բարձրագույն դուռը համաձայնություն տա դեսպաններին, ըստ երևույթին, կխարխլի մեր ապահովությունը և կթուլանա կայսրության ունեցած իրավունքները»։

Այս հարցադրումը կատարել էր նորին մեծության մտերիմներից մեկը՝ ծածկագրության գրասենյակի քարտուղար Քյամիլ էֆենդին, միևնույն ժամանակ առաջարկելով մի ելք գտնել այդ խնդրի լուծման համար։

Ինչպես ինձ հայտնի է, սրանից երեք-չորս ամիս առաջ, այսինքն այս հարցում՝ անգլիացիների միջամտության ժամանակ միգուցե հնարավոր էր նրանց առաջ քաշած պահանջները, այդ թվում մեզ համար աննպաստ բարենորոգումներ անցկացնելու ծրագիրը կանխել։ Մինչդեռ այսօր, ներկա առաջարկի մերժումը վտանգավոր լինելով հանդերձ, նրա փոփոխման համար պահանջ ներկայացնելն անգամ արդյո՞ք ընդունելի կհամարվեր նրանց կողմից, թե ոչ, ինձ համար անհայտ է։ Անհրաժեշտ է նախ պարզել, թե որքանով հնարավոր է փոփոխել այն։ Բացի այդ, տվյալ հուշագրի մեջ պետությունների կողմից նախատեսված կետերի փոփոխման հարցը կախված է այն բանից, թե մինչև հիմա այդ հարցի շուրջ դեսպանների հետ տեղի ունեցած բանակցությունների և զրույցների ընթացքում ինչպիսի կողմնո-

բոչում են ունեցել երկու կողմերը։ Այնուհանդերձ, եթե Բարձրագույն դուռը կարողանա ճիշտ ուղու վրա կանգնել, ապա իմ կարծիքով հնարավոր է ուղղել երեք պետությունների, հատկապես Անգլիայի սխալ տեսակետը։ Իսկ եթե Օսմանյան կայսրության Անատոլիայում ունեցած իրավունքներին մյուս պետություններն էլ իրենց մասնակցությունը ցուցաբերեն, ապա մոտ ժամանակներս նույն իրավիճակը կտարածվի նաև Ռումելիի[15], Միջերկրական ծովում գտնվող կղզիների և այնուհետև այլ վիլայեթների վրա, այնպես, որ Արևելյան հարցը կլուծվի յուրովի, առանց պատերազմի։

Եթե ուշադրություն դարձվի պետությունների առաջարկության բովանդակությանը, ապա Հայկական հարցում կարելի է անել հետևյալ երկու ենթադրությունները։ Մեկը՝ Բեռլինի պայմանագրի հիման վրա հայաբնակ նահանգներում բարենորոգումների պահանջն է, մյուսը՝ տեղի ունեցած կոտորածների պատրվակով, ապստամբած հայերին արդարացնելը, և Օսմանյան կայսրության իրավունքները վրեժխնդրությամբ խլելն է նրա ձեռքից։ Իմ կարծիքով անգլիացիների դիրքորոշումը հանդում է այս երկրորդ ենթադրությանը։ Սրա պատճառն էլ, այսինքն՝ անգլիացիներին նման դատարկ համոզման հանգեցնողը մեր լռակյացությունն է։ Սասունի դեպքը, ավելի շուտ այնտեղի ապստամբության ճնշումը, հայերի կողմից այնպես է ուրճացվել և անգլիական մամուլում այն աստիճան դաժանությամբ է նկարագրվել, որ այդ հրապարակումները չէին կարող ազդեցություն չգործել ոչ միայն Անգլիայում, այլ նույնիսկ այստեղ՝ Օսմանյան կայսրության տարբեր հպատակների վրա։

Լոնդոնում տեղի ունեցած մեծ ժողովներում հայերը արդարացվել են իրենց ապստամբության համար, իսկ Օսմանյան կայսրության պաշտոնյաները ենթարկվել՝ խիստ պարսավանքի։ Այնպես, որ հայերի ապստամբությունը վերադրվել է վատ կառավարման և, հատկապես, կրոնական

խտրականության հետևանքով կառավարության կողմից հայերի հանդեպ ցուցաբերած դաժանաբարո արարքների։ Հասարակության կարծիքը մեր հանդեպ այնպես էր բռնկվել, որ Անգլիական կառավարությունը մտքերը հանդարտեցնելու համար, առանց սպասելու տեղում հետաքննություն կատարող հանձնաժողովի զեկույցներին, իր դաշնակիցներ Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ նպատակադրվել էր պահանջելու Բեռլինի դաշնագրով Օսմանյան կայսրության կողմից ստանձված բարենորոգումների գործադրումը։ Նույնիսկ իրենց վերագրելով այդ բարենորոգումների կատարման իրավասությունը, ձգտել էին զրոյի հավասարեցնել Օսմանյան կայսրության իրավունքները[16]։

Մինչդեռ իրականում, որոշ ժամանակից իվեր հայերի ապստամբության դիմելը պետության վատ կառավարման կամ դաժանաբարո արարքների հետևանք չէր, այլ դաշնագրից բխած մի երևույթ։ Ամեն մի պատերազմի վերջում կնքված պայմանագրով բերվում է այնպիսի հոդված, որը կարող էր նոր նվաճումների տենչով պատերազմ հրահրելու առիթը ծնել։ Այսպիսով, Ռուսաստանի դիվանագիտական միջոցներից մեկն էլ հանդիսացավ Բեռլինի դաշնագրով վերահաստատված Սան-Ստեֆանոյի պայմագիրը, որը թե՛ Ռումելիի նահանգների, թե՛ Անատոլիայի հայաբնակ նահանգների համար բովանդակում էր մեկական հոդված։ Կասկած չկա, որ հայերի ապստամբության ելակետը հանդիսացավ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը։ Դրանից առաջ նույն ձևով անկախության հասած Ռումինիայի, Սերբիայի, Չեռնոգորիայի, Հունաստանի և Բուլղարիայի ժողովուրդների նման, հայերը ևս ինքնուրույն մի պետություն հիմնելու մտադրությամբ, հիշյալ դաշնագրի կնքումից հետո սկսեցին նախապատրաստվել ապստամբության։

Իմ կարծիքով ներկայումս հանդուցակետը ոչ անգլիական դեսպանի և ոչ էլ նրա կառավարության ձեռքին է։ Այս

հարցում առաջին հերթին անհրաժեշտ է մտափոխել անգլիական հասարակայնության կարծիքը։ Եթե մի կողմից հնարավոր լինի որոշ ժամանակ հետաձգել դեսպանների հուշագրերի պատասխանները, ապա մյուս կողմից անհրաժեշտ է, որ չեզոք մի անձնավորություն հանդես գա Լոնդոնի մամուլում, մատնանշելով, որ հայերի ապստամբությունը լոկ դաշնագրից բխած մի երևույթ է։ Իսկ Օսմանյան պետությունը պետք է որոնի բողոքարկելու ուղիներ Անգլիայի անիրավացի դիրքորոշման դեմ[17]։

Լոնդոնի մեր դեսպանության միջոցով անհրաժեշտ է հայտարարել նաև, որ կառավարական և զինվորական պաշտոնյաների հրամաններից բացի հայ ապստամբներին ճնշելու և հնազանդեցնելու գործում օրենքից դուրս գործողություններ ծավալողները դատի են տրվելու և պատժվելու են ըստ օրենքի։ Բացի դա, մինչև հիմա հետաքննող հանձնաժողովի բացահայտած փաստաթղթերը առանց ուշացնելու անհրաժեշտ է հրապարակել Լոնդոնում, Փարիզում և Պետերբուրգում՝ բացահայտելով դեպքերի ուռճացումը։ Այնուհետև, կարծում եմ, որ բանակցելով դեսպանների հետ կարելի կլինի սահմանափակել ներկայացված առաջարկությունները։

Այս հարցում կամքն ու հրամանը նորին պայծառափայլություն սուլթանինն է։ 17 մայիս, 1311 (1895 թ.)[18]։

* * *

Նվաստիս հատուկ գրությունը նորին պայծառափայլություն սուլթանին, վերջերս երեք պետությունների կողմից հայաբնակ վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու կապակցությամբ 6 կետերից բաղկացած առաջարկության վերաբերյալ։

Նորին պայծառափայլությունը իր մտերիմներից՝ Ֆայիք բեյի միջոցով կարգադրել էր իմանալ նվաստիս կարծիքը երեք պետությունների կողմից Օսմանյան կայսրության

հայաբնակ վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու կապակցությամբ 6 կետերից բաղկացած առաջարկությունների մասին, այն իմաստով, որ կառավարության կողմից այդ առաջարկը ընդունելու դեպքում կարո՞ղ էր արդյոք կայսրության ապահովությանը վտանգ սպառնալ։

1. Բարենորոգումների գործադրման խնդրում դեսպանատան ներկայացուցիչներին իրավունք է վերապահվելու անհրաժեշտության դեպքում դիմելու բարենորոգման հանձնաժողովին։

2. Ժանդարմերիայում ունենալ քրիստոնյա սպաներ։

3. Նահիյի տեսուչները պետք է նշանակվեն կայսրության վիլայեթներին վերաբերող կանոնադրության համաձայն. այսինքն՝ տեսուչները պետք է նշանակվեն տեղի մարդկանցից։

4. Դաշտային պահակների նշանակումը։

5. Բանտերին վերաբերող կանոնադրության գործադրումը։

6. Համաձայն կանոնադրության նշանակել քրիստոնյա պաշտոնյաներ[19]։

Տվյալ առաջարկությունների դրդապատճառը Բեռլինի պայմանագիրը լինելով հանդերձ, Սասունի դեպքերի համար հայերին արդարացնելու պատրանքով տարված անգլիացիները, կատարելով սխալ հետևություն, առավել բարդացրին Բեռլինի դաշնագիրը և սկսեցին հանդես գալ այնպիսի հայտարարություններով, որ Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերի տեղական կարիքների համար անհրաժեշտ բարենորոգումները թելադրվելու են իրենց կողմից, միևնույն ժամանակ հսկողության տակ առնելով դրանց գործադրումը։ Եվ քանի որ Բարձրագույն դուռը ժամանակին չի նախաձեռնել ուղղելու այդ սխալ հետևությունները, ուստի ընդհանուր հասարակական կարծիքը համակվել էր այն համոզմունքով, որ հայերի ապստամբությունը արդյունք է հոսի կառավար-

ման։ Ներկայումս անհրաժեշտ է մեղմ վերաբերվել առաջ եկած որոշ հարցերին։ Բացի այդ, նկատի ունենալով, որ Ռուսաստանը և Ֆրանսիան ևս այս խնդրում միացել են Անգլիային, ուստի այս երեք պետությունների պահանջներին, ընդհանրապես, դիմակայելը կարող է վտանգավոր հետևանք ունենալ։ Այս խնդրում ամենակարևոր կետը Օսմանյան կայսրության իրավունքների պահպանման հարցն է, այնպես, որ դեսպանների հետ վիճելի հարցերը հարթելու ընթացքում անհրաժեշտ է, որ այդ պարագան լինի ուշադրության կենտրոնում։ Հետևաբար, նկատի ունենալով, որ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի համաձայն պետություններին իրավունք է վերապահվել հսկելու հայաբնակ վիլայեթներում Օսմանյան կայսրության կողմից ստանցված բարենորոգումների ծրագրի գործադրմանը, ապա իմ կարծիքով չպետք է առարկություն հարուցել դեսպանների այս առաջարկությանը։ Սակայն տվյալ հսկողությունը պետք է տարածվի ոչ թե բարենորոգումների հանձնաժողովի վրա, այլ այն վայրերի վրա, որտեղ գործադրվելու է տվյալ բարենորոգումը, այսինքն՝ վիլայեթներում իրագործվող բարենորոգումների հսկողությունը անհրաժեշտ է թողնել հանձնաժողովի հայեցողությանը։ Երկրորդ և երրորդ կետերում նշված՝ քրիստոնյա սպաների նշանակումը ժանդարմերիայում, վիլայեթների կանոնադրության համաձայն տեսուչների տեղացի լինելու խնդիրը, ինչպես այլ կանոններում նշված քրիստոնյա պաշտոնյաների նշանակման հարցը հաստատվել է դեռևս մեր նախկին սուլթանների կողմից տրված բարենորոգումների ֆերմաններով, ուր մատնանշվել է ոչ-մահմեդական հպատակների հավասարության հարցը, ինչպես նաև նրանց ընդհանուր օրենքներից օգտվելու իրավունքը[20]։

Ներկայումս այդ խնդրում գոյություն ունեցող կայսերական հրամանների և կանոնադրությունների գործադրումից խուսափելը առավել կգրգռեր օտար պետությունների միջամտությունը, այնպես, որ այս պարագային, առանց տուժելու, առաջին հերթին չանք գործադրել Անգլիայում հասարակական կարծիքը վերափոխելու շուրջ, ինչպես մատնանշել եմ, անհրաժեշտ է որոշ վերապահումներով հավանություն տալ նրանց առաջարկություններին, այսինքն հայաբնակ նահանգների համար անգլիական, ֆրանսիական և ռուսական պետությունների կողմից առաջարկված բարենորոգումների ծրագրերի շուրջ բանակցությունների մեջ մտնել դեսպանների հետ և նրանց առաջարկությունները ընդունելով հանդերձ որոշ ուղղումներ մտցնել, որպեսզի հսկողությունը ապահովվի վիլայեթներում նախատեսված բարենորոգումների վրա, առանց վտանգելու Բեռլինի դաշնագրով հաստատված Օսմանյան կայսրության իրավունքները։ Հետագայում այս առաջարկության գործադրման ընթացքում ուշադրություն կդարձվի թե՛ վերոհիշյալ 6 կետերի գործադրման և թե՛ քրդերին առանց վկայականի զենք կրելու հարցերին։ Մյուս կողմից, միգուցե անհրաժեշտ կլինի մտածել անիրագործելի թվացող այդ բարենորոգումների և քրդերին զենքից զրկելու անհնար գործի մասին։ Այսպիսով դեսպանների հետ բանակցելու համար հրատապ թվացող հարցը միմիայն բարենորոգումների գործադրմանը հսկելու խնդիրն է։ Իսկ բարենորոգումը ստուգանաբար գործադրելու դեպքում էլ Բարձրագույն դուռը իրադրության մասին առաջին հերթին կտեղեկացնի դեսպաններին։ Իմ կարծիքով, եթե տեղերում իրենց կողմից հսկողություն կատարելու պարագան հավանության արժանանա և նշվի բարենորոգումների ծրագրի մեջ, տվյալ հարցը դուրս կգա իր ճգնաժամային վիճակից։

Այս հարցում կամքն ու հրամանը նորին պայծառափայլություն սուլթանինն է[21]։

* * *

Այդ ժամանակ Սեր Կարին Հաջի Ալի բեյը, նախկինում վեհափառ սուլթանի ժամանակ ընդունված սովորության համաձայն, հրամաններ հաղորդելու կապակցությամբ ամեն օր գալիս էր ինձ մոտ: Շարունակելով այդ սովորությունը, ամեն գիշեր գաղտնապես այցելում էր ինձ և այցելության ընթացքում աշխատում էր համոզել, որպեսզի ստանձնեմ Մեծ վեզիրի պաշտոնը: Այդ ընթացքում Ստամբուլում առաջ եկած առաջին հայկական ապստամբությունը ժողովրդին մատնելով ահ ու սարսափի, խառնաշփոթ վիճակ էր ստեղծել Բարձրագույն դռանը և պալատում[22]:

Զեռք առնված միջոցառումները չէին հանդարտեցրել մահմեդական ժողովրդի մտքերը: Մահմեդական ժողովուրդը, հայերի մի նոր շարժման սպասելով, մնացել էր աչալուրջ վիճակում: Նույնիսկ օտարները զգուշացել էին այս խնդրի վտանգավոր հետևանքներից: Այնպես, որ դեսպանները, ուշադրություն բևեռելով այս խնդրին, տևական ծանուցագրեր էին հղում Օսմանյան պետությանը:

Երեք օր տևած այդ խառը վիճակի առթիվ Հաջի Ալի բեյը, կրկին գիշերվա ընթացքում բնակարանս գալով, ասաց.

«Վեհապետը Ձեզ է ուզում և կարծում եմ այս անգամ ձեռքից չեք պրծնելու»:

Ալի բեյի ընկերակցությամբ մեկնեցի պալատ: Պալատում սուլթանի մտերիմներից Արիֆ բեյը հայտնեց, որ փատիշահը նպատակահարմար է գտել ինձ հանձնելու վեզիրության պաշտոնը, նկատի ունենալով, որ ներքին անկարգություններին ավելացել են նաև արտաքին միջամտությունները, իրադրությունը դարձել էր առավել վտանգավոր և նույնիսկ հասել էր այնպիսի մի աստիճանի, որ չէր կարելի անտարբերությամբ անցնել այդ բոլորի կողքով և պետության իրավունքները պաշտպանելու համար հարկ էր ձեռք առնել անհրա- ժեշտ միջոցներ:

Հաշվի առնելով այս հույժ կարևոր իրավիճակը ավելորդ համարեցի ծառայությունից խուսափել: Եվ նույնիսկ աչքի առաջ ունենալով պալատի բանակարկությունները, ավելի իմ համաձայնությունը: Այնուհանդերձ, նախքան կայսերական կնիքը ստանձնելս և մինչև պաշտոնապես գործի անցնելս, համաձայն սուլթանի հրամանի, այդ գիշերվանից անցա մեծ վեզիրության պաշտոնին և կատարեցի անհրաժեշտ կարգադրություններ՝ ուղղված մի շարք վիլայեթներին և պաշտոնատներին:

Այդ գիշեր մնացի պալատում: Հաջորդ օրը պաշտոնական համազգեստով ներկայացա նորին պայծառափայլություն սուլթանին, որը իր մաղթանքների հետ զուգընթաց ինձ հանձնեց կայսերական կնիքը: Այնուհետև կայսերական հրամանագիրը տանող գլխավոր քարտուղարի, ինչպես նաև շեյխ-ուլ-իսլամի ընկերակցությամբ մեկնեցինք Բարձրագույն դուռ, ուր ընդունված արարողությունից հետո անցա պաշտոնի: Ճգնաժամի դրդապատճառները չեզոքացնելու համար առաջին հերթին ձեռնարկվեցին անհրաժեշտ միջոցառումներ: Դրանց հետևանքը եղավ այն, որ Կ. Պոլսում վերահաստատվեց անդորրությունն ու խաղաղությունը:

1313 թ. ռեբի ուլ-ահիրի 13-ին (հոկտեմբեր 8, 1895 թ.) մեծ վեզիր պայծառափայլ Սայիդ փաշան նախքան իր պաշտոնաթողությունը, երեք դեսպանների հետ բանակցելու ընթացքում համաձայնության գալով, ստորագրել էր բարեկարգումների ծրագիրը: Վերոհիշյալի պաշտոնից հեռանալու պատճառով անհրաժեշտություն էր զգացվել իմ կողմից ևս ստորագրելու այն: Սակայն ընթերցելու ընթացքում ես նկատել էի, որ այդ հոդվածները հազիվ թե գործադրվեին կյանքում, քանի որ քրդերի զինաթափումը և քրիստոնյա պաշտոնյաների նշանակումը ծանր էր նստելու քրդերի վրա: Այնուհանդերձ, քանի որ ավյալ որոշումը հաստատվել էր կայսերական հրամանով, ես ստիպված ստորագրեցի այն,

մամիայն մատնանշելով, որ տվյալ հողվածների կիրառումը կապված է դժվարությունների հետ, որ հողվածները փոփոխելու համար անհրաժեշտ է համաձայնության գալ դեսպանների հետ:

Այնուհանդերձ, գավառներում հայերի ապստամբությունը գնալով ընդլայնվում էր: Անատոլիայի այն գյուղերում և քաղաքներում, ուր հայերը մեծամասնություն էին կազմում, ապստամբությունը ավելի կազմակերպված ընույթ էր կրում, և այդ հանգամանքը ստիպում էր կառավարությանը առավել զբաղվելու ապստամբությունը ճնշելու միջոցառումներով:

Սրանով հանդերձ, Եվրոպայում հայերի խռովության պատճառը վերագրվում էր կառավարության բիրտ քաղաքականությանը, իսկ Սասունի դեպքը՝ հատկապես սուլթան Համիդի վարած բռնատիրությանը: Այնպես, որ վեհապետը Անգլիայի լիբերալ կուսակցության կողմից քննադատության թիրախ էր դարձել, իսկ կառավարությունը թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության ասպարեզում գտնվում էր մեծ դժվարությունների մեջ: Մեծ պետությունների դեսպանների Բարձրագույն դռանը ներկայացրած հայտարարությունն ու հուշագիրը, իրոք, որ ճգնաժամային վիճակ էին ստեղծել: Այս կապակցությամբ ստորև բերվում է փաղիշահին ուղղված հատուկ ծանուցագրի պատճենը[23]:

ՀԱՏՈՒԿ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Գերմանիայի, Ռուսաստանի, Ավստրիայի և Իտալիայի դեսպանները, ինչպես նաև Անգլիայի հավատարմատարը և Ֆրանսիայի դեսպանության գլխավոր թարգմանը, միատեղ այցելելով արտաքին գործերի նախարարություն, հայտնել են, որ հայերի աղետը, փարատված լինելով հանդերձ, մի շարք վիլայեթներում նկատվում է, որ քրիստոնյաները համակված են տևապես սարսափի տագնապով: Նույնիսկ,

հայ բնակչությունից զուրկ Մուսուլը, Բաղդադը և Սիրիան բռնկված են օրեօր աճող վտանգներով: Այս կապակցությամբ դեսպանները պահանջեցին, որպեսզի Բարձրագույն դուռը չուտափույթ ձեռնարկի ազդեցիկ միջոցներ: Հակառակ դեպքում նրանք պարտավորվել էին տվյալ իրադրությունը տեղեկացնել իրենց կառավարություններին:

Այս կապակցությամբ դեսպաններից մի քանիսը ցանկացել էին իմանալ, թե Օսմանյան կառավարությունը ինչպիսի՞ մտադրություն ունի այդ խռովություններին վերջ տալու գործում, իսկ ոմանք էլ հայտնել էին, որ այդ խառնակ իրադրության տուրք տվողները ովքեր էլ լինեն՝ մահմեդականներ, թե՛ հայեր, խռովությունը կանխելու խնդիրը վերաբերում է Օսմանյան պետությանը: Դեսպանները հնարավոր են համարել նաև, որ կայսրության վիլայեթներում կոտորածները հարատևելու դեպքում անհրաժեշտություն էր զգացվելու խորհրդաժողով գումարելու և պահանջ ներկայացնելու իրենց պետություններին: Իսկ Ռուսաստանի դեսպանը նկատի ունենալով Էրզրումում առաջ եկած խռովությունը, ակնարկել էր տվյալ վայրում արտակարգ դրություն մտցնելու միտքը, ավելացնելով, որ հնարավոր չէ հայերին զանգվածաբար ձերբակալության ենթարկել: Այս բոլոր ակնարկություններին արտաքին գործերի նախարար-փաշան տվել էր համապատասխան բացատրություն և այնուհետև գրավոր ծանուցագրեր:

Այսօր ինձ այցելած Գերմանիայի դեսպանը, ակնարկելով Անատոլիայում տեղի ունեցող խռովությունները, նշեց դրանց վերացնելու անհրաժեշտությունը: Նա ասաց նաև, որ ինքը չի կասկածում, որ Օսմանյան կայսրությունն ունի բավականին կարողություն այդ խռովությունները կանխելու համար: Մինչդեռ, նրանից հետո ինձ այցելած Ավստրիայի դեսպանը, այդ խռովությունների կապակցությամբ հայտնեց, որ քրիստոնյաների ծանր վիճակը զանազան վիլայեթներում այնպես

չէ, ինչպես որ այն ցույց է տրվել վալիների և մութասարիֆների կողմից Բարձրագույն դռանը ներկայացված զեկուցագրերում։ Նա հայտնեց, որ նախորդ օրը տեղի ունեցած ժողովում հյուպատոսարաններից դեսպանատները ուղարկված զեկուցագրերի ընթերցումից պարզվել է, որ կոտորվել են հազարավոր հայեր, որ Դիարբեքիրում քրդերի կողմից, առանց խտրականության, քրիստոնյաների սպանությունները, կողոպուտն ու բռնությունները, ինչպես նաև Անատոլիայի այլ վայրերում տեղի ունեցած նույն խժդժությունները տվյալ դարում չտեսնված բաներ են։ Նա ավելացրեց նաև, որ միմիայն Զեյթունում կայսերական զորքերի հարձակման հետևանքով զոհված հայերի թիվը հասել է 4 500-ի։ Եթե Օսմանյան պետությունը շուտափույթ կերպով այս կոտորածների առաջը չառնի, ապա հայերով բնակեցված նահանգները և Սիրիան կառնվեն մեծ պետությունների զինվորական պաշտպանության ներքո կամ անհրաժեշտ կլինի մի խորհրդաժողով գումարել և կայացնել համապատասխան որոշում։

Ես իմ պատասխանում նշեցի, որ հայերի շարժման հետևանքով մահմեդականները ձեռք են առնում պաշտպանողական միջոցներ, որ մենք ձգտում ենք բացահայտել հեղափոխականների գաղտնի նպատակը, որ քանի նրանց ապըստամբությունը ընդարձակվի, ավելացվելու է նաև նրանց դեմ ուղարկվող զինվորների քանակը, որպեսզի շուտափույթ ճնշվի այդ խռովությունը։ Այնուհանդերձ, հիշյալ դեսպանը կրկին առարկելով հայտնեց, որ, եթե այդ վտանգավոր իրադրությանը վերջ չտրվի, ապա նորին մեծություն սուլթանից պահանջվելու է մահապատժի ենթարկել այդ կոտորածները սանձազերծող անձանց։ Նա մեկնելուց առաջ ասաց նաև, որ այդ գործում Բարձրագույն դուռը միջամտության կարիք չունի, որ իրենց պահանջարկը պաշտոնապես ներկայացվելու է արտաքին գործերի նախարարությունը։

Զեյթունից ոչ մի լուր չլիներու պատճառով դեսպանի

հայտնած տեղեկությունը բավականին հուզեց ինձ, ուստի մի հեռագրով հարցում կատարեցի Մարաշի մութասարիֆությանը։ Ստացված պատասխանից պարզվեց, որ այն զորքը, որ պետք է շարժվեր Զեյթուն, դեռևս չէր էլ դուրս եկել Մարաշից։ Ուստի վերոհիշյալ դեսպանի և նրա գործընկերների հայտնած սուտ տեղեկության ազդեցության տակ չմնալու համար, ստացված հեռագրի պատասխանի մի օրինակը ուղարկեցի նրան։ Բացի այդ, ընդհանուր եզրակացություն կազմելու համար գավառներից ստացված այլ լուրերն էլ հայտնեցի նրան[24]։

Այնուհանդերձ, դեսպանների ուշադրությունը գրված այս խնդիրը բակական կարևոր հարց էր և անհրաժեշտություն էր զգացվում միջոցներ ձեռնարկել և հիմնականում ջանք թափել ոտքի ելած քրդերի սանձարձակությունները կանխելու համար։ Այս կապակցությամբ հաջորդ օրը տեղի ունեցած նախարարների խորհրդում այս հարցը քննելուց հետո անհրաժեշտություն զգացվեց ծանուցագիրը հանձնել նորին պայծառափայլություն սուլթանին։

1313 թ. 15 ջեմազի էլ-էվվել (նոյեմբեր 3, 1895 թ.)[25]։

* * *

Նորին պայծառափայլության այն հարցին, թե դժվարին կացությունից դուրս գալու համար ինչ հնարավորություն կարելի է գտնել, ես բավականին մտածեցի և եկա այն եզրակացության, որ նման վիճակից դուրս գալու միակ միջոցը կլիներ այն, որ պետության կառավարումը առաջվա նման հանձնվեր Բարձրագույն դռան[26]։

Դրանով, մի կողմից վեհապետը կազատվեր նման գործերի պատասխանատվությունից, իսկ մյուս կողմից, եթե ջանք թափվեր երկրում կարգ ու կանոն հաստատելու և արդարությունը պաշտպանելու խնդրում, ապա կարելի կլիներ շահել ընդհանուրի համակրանքը։ Երկրի ընդհանուր

վիճակը կայունացնելու և դեսպանների առաջարկությունը իրականացնելու անհրաժեշտ միջոցը այս համարելով, սուլթանին հղեցի ստորև բերված հատուկ ծանուցագիրը, առանց հաշվի առնելու, որ այն կարող էր վատ հետևանք ունենալ ինձ համար[27]:

ՀԱՏՈՒԿ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Որոշ ժամանակից իվեր Օսմանյան կայսրության դեմ ստեղծված լարվածությունը առիթ էր տվել ընդհանուր դժգոհությանը, և մարդկանց սրտերում թաղնված ատելությունը սկսել էր ի հայտ գալ այն ժամանակ, երբ մեծ պետությունները հանդես եկան հայերին պաշտպանելու առաջարկություններով: Այդ մարդկանց բողոքները հասան նույնիսկ մինչև Եվրոպա: Այս խնդրում մահմեդականները և քրիստոնյաները նույն կարծիքին էին: Եթե մի քանի պետություններ պոհ էին նման իրադրությունը օգտագործելու համար, ապա մյուսները իրենց քաղաքական շահերից ելնելով, շահագրգռված էին պաշտպանելու Օսմանյան կայսրության գոյությունը:

Այս կապակցությամբ էլ նրանք մեծ ուշադրությամբ հետևում էին, որպեսզի հեղափոխություն տեղի չունենա և չխախտվի պետությունների միջև գոյություն ունեցող հավասարակշռությունը: Ուստի նրանք ձգտում էին վնասազերծել ճգնաժամի պատճառները:

Անցյալ օրը, երբ տեսակցություն ունեցա ֆրանսիական դեսպանի հետ, պարզվեց, որ մինչ այդ նա եղել էր Նորին պայծառափայլություն սուլթանի մոտ և հանձնել էր նրան կարևոր մի ծանուցագիր: Նա նշեց նաև, որ անգլիական դեսպանը ևս համակարծիք է այդ ծանուցագրի բովանդակությանը: Ընդհանուրի մոտ առաջացած դժգոհության պատճառը դեսպանների կողմից պարզաբանվել է այն

բացատրությամբ, որ չկա բոլոր գործերի համար պատասխանատվություն կրող մի կառավարական հանձնաժողով: Իբր թե գործերի կառավարումը կայսերական պալատ տեղափոխվելուց հետո, Նորին պայծառափայլություն սուլթանի զանազան գործերով ծանրաբեռնվածությունը առիթ է տվել նրա մի շարք մտերիմներին հանդես գալ իրենց շահադիտական նպատակներով և ցանկացած ուղղությամբ թեքել վեհապետի ուշադրությունը, հաշվի չառնելով, որ դրանով նրանք վնասում են ընդհանուր կարգ ու կանոնին:

Այնպես, որ այս հողի վրա առաջ եկած բարդությունները ժողովուրդը թյուրիմացաբար վերագրում է Նորին մեծություն սուլթանին: Այս կապակցությամբ պրն. Կամբոնը[28] առաջարկում է, որ Օսմանյան կայսրության գոյատևման և վսեմափայլ սուլթանի հարատևության համար սուլթանի հովանավորության ներքո, նախարարներից մեկի նախագահությամբ, կազմվի նախարարների խորհուրդ և նրա վրա դրվի կայսրության ամբողջ գործերը վարելու պարտականությունը: Իսկ առանձին հարցերում խորհրդի անհաջողության դեպքում, կարելի կլինի այդ խորհրդի պատգամավորներին փոխել: Այսպիսով, նախկինում գոյություն ունեցող սովորության համաձայն, այսինքն մեր փառապանծ սուլթանների ժամանակ գործածության մեջ եղած օրենքներով, եթե մոտ ժամանակներս չնորհվի համապատասխան կայսերական հրամանագիր և երկիրը կառավարելու համար հավատարիմ պաշտոնյաներից կազմվի մի խորհուրդ, ապա, կարծում ենք, որ ամեն ինչ կընթանա իր բնական հունով և երկրի կառավարման գործում էլ կթեթևանա Նորին պայծառափայլություն սուլթանի ծանրաբեռնվածությունը: Բնական է, որ սուլթանի հրամանագրով կհաստատվեն նաև պետության կարիքների համար խորհուրդի կողմից ներկայացված առաջարկությունները: Այսպիսով թե՛ երկրի ներսում և թե՛ Եվրոպայում կապահովվի հասարա-

կական կարծիքը և կկանխվի օտար պետությունների միջամտությունը մեր ներքին գործերին:

Այս հարցում կամքն ու հրամանը նորին պայծառափայլություն սուլթանինն է:

23 թեշրինի էլ-էվվել 1311 (նոյեմբեր 2, 1894 թ.)[29]:

* * *

Այս ծանուցագրի հանձնումից մեկ օր հետո, երբ ես եղա սուլթան Աբդուլ Համիդի ընդունարանում, նկատեցի, որ նրա երեսին չկար առանձին մի թշնամական արտահայտություն: Իսկ երկու օր հետո սուլթանն արդեն հրամանագիր էր տվել նախարարների խորհուրդ կազմելու մասին: Այնուհանդերձ, ինձ համար չպարզվեց, թե այդ հարցում նրա տված հրամանագիրը շինծու էր, թե ճշմարիտ: Հետագայում, երբ գործերը հակառակ ընթացք ունեցան, պարզվեց, որ այդ ծանուցագրի պատճառով սուլթանի մտերիմները դավադրություն էին պատրաստել իմ պաշտոնանկության համար[30]:

* * *

Արևելքի երկրների հետ առնչություն ունեցող պետությունները, իրենց քաղաքական գործունեությունը նախաձեռնում են համաձայն ռուսական ծրագրերի, նկատի ունենալով, որ Արևելքում քաղաքական հարցերը խթանող ուժը ռուսական դիվանագիտությունն է: Արևելքի երկրներում յուրահատուկ շահեր ունեցող պետությունները, եթե դաշնակցեն և համագործակցեն Ռուսաստանի հարևան երկրներից առավելապես ճնշման ենթարկված Օսմանյան պետության հետ, ապա նրանք արգելք կհանդիսանան ռուսական պետության հարաստ ընդարձակման և, հատկապես, Միջին Ասիայում նրա ծավալած գործողություններին: Մինչդեռ, այդ պետու-

թյունների միջև այլ երկրամասերում քաղաքական տարաձայնությունները, գլխավորապես Արևելքի հարցերում նրանց մեկուսացումն ու անհամաձայնությունը, հնարավորություն են տալիս ռուսական պետությանը ուզածի պես իրականացնելու իր նվաճողական նկրտումները:

Արևելքի հարցերում մեծ զգուշություն հանդես բերող անգլիական պետությունը, ելնելով իր շահերից, սաստիկ աշխատել է հովանավորել Օսմանյան կայսրությանը և իր հնդկական գաղութը ռուսական վտանգից ապահովելու համար մշտապես զգացել է որոշ միջոցառումների գործադրման անհրաժեշտությունը: Այդ միջոցառման որպես ամենակարևոր գործոն, նա նկատի է ունեցել Օսմանյան պետությանը: Նախկինում էլ այդ ասպարեզում ամեն կերպ (Անգլիան) ձգտել է կանխել պատերազմը, թույլ չտալ Օսմանյան կայսրության իրավունքների թուլացման: Նույնիսկ Ռումելիում և Անատոլիայում սուլթանության սահմանները տարաձայնության առիթ չդարձնելու համար ընդունել է ռուսական առաջարկությունը՝ որոշ սահմանային փոփոխությունների մասին: Իսկ, երբ ճակատագրի բերումով առաջ եկած պատերազմում[31] Փոքր Ասիայում կարևոր հենակետեր՝ Բաթումը, Կարսը և Արդահանը անցել են Ռուսաստանի ձեռքը, Անգլիան, նկատի ունենալով այս և հետագա իրադարձությունները, իր շահերը ապահովելու համար ջանացել է Օսմանյան կայսրության հետ մի հատուկ համաձայնագիր կնքել[32], որի հիման վրա էլ Կիպրոս կղզու կառավարումը անցել է անգլիական կառավարությանը: Այս համաձայնագիրը երկու կողմերից առավելաբար օգտակար է եղել Անգլիային:

Այնպես, որ Օսմանյան կայսրության Ռումելիում առաջացած դժվարությունները անտեսելով, տվյալ համաձայնագիրը միմիայն ծառայել է կանխելու ռուսների առաջխաղացումը Անատոլիայում: Եթե ուշադրության առնվեն Անգլիայի հետապնդած քաղաքական նպատակները և Օսմանյան կայ-

սրության ընդհանուր շահերի դժվարությունները տվյալ ասպարեզում, ապա կբացահայտվի տվյալ վայրի հույժ կարևոր լինելու խնդիրը: Այնպես, որ Օսմանյան կայսրությունը իր իրավունքները պաշտպանելու համար պետք է մեծ ուշադրություն դարձնի անգլիական կառավարության նախաձեռնություններին և մշտապես վերլուծության ենթարկի դրանք: Անհրաժեշտ է, որ հիշյալ կառավարությունը Օսմանյան կայսրության հետ կնքի համազոր իրավունքներով համաձայնագիր՝ ռուսական քաղաքականության դեմ: Մինչդեռ, Անգլիան Ասիայում երկու կողմերի ընդհանուր շահերը պաշտպանելու համար, փոխանակ զորավիգ լինի Օսմանյան կայսրության հզորացման և բարգավաճման, վարում է բոլորովին այլ քաղաքականություն:

Նախ և առաջ, ընդառաջելով հայերին, ուռճացրել է նրանց չինծու բողոքները՝ ուղղված Օսմանյան կայսրության դեմ, հասցնելով նրանց ինքնավարության պահանջի: Երկրորդ, այն ժամանակ, երբ ջանք էր գործադրվում կարգավորելու մեր և Կարադաղի միջև առաջ եկած խնդիրը, Անգլիան, այլ պետություններին ևս ընդգրկելով, նավատորմ ուղարկեց Իլկյունի շրջանը[33]: Երրորդ, Հունաստանի հետ մեր ունեցած սահմանային հարցերում նա բռնել է Հունաստանի կողմը: Չորրորդ, նա աչք է փակել, երբ Օսմանյան կայսրության ծայրամասում գտնվող Թունիսի վիլայեթը նվաճել են ֆրանսիացիները: Հինգերորդ, ֆրանսիական կառավարության հետ համաձայնության գալով, Եգիպտոսում սուլթանի գերիշխանությունները կրճատելու անարգ մի որոշմամբ, խզվության վերածելու առաջարկով հուշագիր է ուղարկել Եգիպտոս:

Անգլիական կառավարության գործադրած այս անօրինական արաքների մեջ թաքնված մտայնությունը բացահայտելու դեպքում հնարավոր կլինի կռահել նրա հետագա նկրտումները: Իմ կարծիքով անգլիական կառավարության

Օսմանյան կայսրության հետ համաձայնագիր կնքելու նպատակն այն է, որ Բարձրագույն դռանը իր ազդեցության ոլորտում պահելով, իրականացնի իր ծրագրերը: Ռուսների առաջխաղացումը դեպի Եփրատ խափանելու նրա ջանքերը հաջողություն չունեցան, քանի որ հեղաղայում տեղի ունեցած Օսմանյան նվաճումների հետևանքով՝ մեծ մասամբ Ռուսաստանի հետ սահմանամերձ Օսմանյան վիլայեթներում բնակչությունն հաստատած հայերին նա տեսավ Ռուսաստանով հրապուրված: Այնպես, որ, եթե ռուսական զորքը հասներ Եփրատ, բնական է, որ առաջանալով մինչև Պորտ-Սայիդ, խափանելու էր դեպի Հնդկաստան գնացող անգլիական նավերի ընթացքը: Այնուհետև, երբ Անգլիան իմացավ, որ այդ արգելքը տեղի չի ունենա, սկսեց ջանք գործադրել հայերին իր կողմը գրավելու և խրախուսելու նրանց բարենորոգման հավակնությունները: Իբր թե մեծամասնությամբ հայերով բնակեցված Տրապիզոնի, Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթները մեծ պետությունների հովանավորության ներքո մի ինքնավար վարչաձևի մեջ դնելով Սև ծովից մինչև Իրանի սահմանը մի պատնեշ են քաշելու Ռուսաստանի առաջ, իսկ, եթե ռուսերը ճեղքեն անցնեն այս սահմանը, ապա ծրագրվել էր ստեղծել մի այլ խոչընդոտ՝ անհրաժեշտ դիմադրություն ցույց տալու համար ուղարկվելու էին Եվրոպական զորքեր: Այս վերջին խոչնդոտների համար մատադիր էին Սիրիան ևս վերցնել պետությունների պաշտպանության ներքո և այն դարձնել մի ինքնավար վիլայեթ:

Հենց այն ժամանակ էլ Անգլիան Անատոլիայի բոլոր մասերում նշանակեց արտակարգ հյուպատոսներ և կարեկցանք ցուցաբերելով հայերին, սկսեց լսել նրանց բողոքներն ու պահանջները, միևնույն ժամանակ այդ բոլորը թելադրել Բարձրագույն դռանը: Այնուհետև Սիրիա ժամանեց գեսպանության խորհրդական Մալեթը, իսկ հետո, անձամբ՝ դեսպան Լայերդը[34], որոնք և ձեռնարկեցին մի շարք միջոցառումներ:

Բնական է, որ այս ասպարեզում անգլիական պետության նախաձեռնած միջոցառումները վնասաբեր էին և մեր պետության ներքին գործերին նրա միջամտությունը բարյացակամորեն չընդունվեց Բարձրագույն դռան կողմից։ Ուստի, որոշ ժամանակ անց անգլիական պետությունը փոխեց իր գործելակերպը և առաջ եկած հարցերը հարթելու նպատակով հրավիրեց նաև այլ պետություններին և իրագործեց նավատորմ ուղարկելու իր մտադրությունը։ Այսպիսով, հայերի տևական դատարկ բողոքներին ընդառաջ գնալով, ձեռք բերեց մյուս պետությունների համաձայնությունը և գործադրեց նավատորմ ուղարկելու իր ծրագիրը։ Իսկ, երբ հերթը եկավ Անատոլիայի բարենորոգման հարցին, ամեն կերպ ձգտեց իրագործել իր ծրագիրը[35]։

* * *

... Եթե Անգլիան ևս ջանքեր գործադրի, որպեսզի Ռուսաստանի հարավային սահմաններում ամուր մի պատնեշ կանգնեցնելու նկատառումով մեծ պետությունների հովանավորության և պաշտպանության ներքո Հայաստանում ստեղծվի մի ինքնավար պետություն, ապա պետք է նկատի ունենա այն պարագան, թե ինչպես ռուսական զորքը անցյալ պատերազմի[36] ժամանակ, ճեղքեց անցավ նույն ինքնավար վիճակում գտնվող Վալախիան և Մոլդավիան, և ինչպես ռուսական զորքին ևս ներքաշեց պատերազմի մեջ։

Անգլիայի և Օսմանյան կայսրության միջև կնքված պայմանագրում՝ Անատոլիայի վերաբերող հարցի մասին, Իշխան Կորչակովը[37], բնականաբար, իր ժամանակին մտածել և Փոքր Ասիայի հանդեպ Ռուսաստանի ծրագրի կապակցությամբ ավելացրել էր մի հոդված[38]։

Անատոլիայում գտնվող հայերի և քրդերի սանձը Ռուսաստանը նախապես արդեն վերցրել էր իր ձեռքը, այնպես, որ Անգլիան ներկայումս որքան էլ որ ձգտի հայերին կարեկ-

ցել, օգուտ չունի։

Բոլորի համար պարզ է, որ Օսմանյան կայսրությունը թուլանալու դեպքում Անգլիան, իր ուզածի պես, հայերին հրահրելու է Ռուսաստանի դեմ։ Հետևաբար, նվաստիս կարծիքով, Անգլիայի համար անհրաժեշտ խնդիրը այն է, որ նա, որպես ամուր մի դաշնակից և օգնական, ավելացնի իր ազդեցությունը Օսմանյան կայսրության վրա և ամրացնի մեր պետությունը Անատոլիայում։ Այնպես, որ տվյալ տարածքում մեր պետության ազդեցության թուլացումը թե՛ Թուրքիայի և թե՛ Անգլիայի շահերը վնասելուց բացի մի այլ հետևանք չի կարող ունենալ։

Ուստի Անգլիան չպետք է, որ իր ջանքերը խնայի Օսմանյան կայսրությանը բարեկամաբար օժանդակելու և նրա փառքն ու անկախությունը պաշտպանելու գործում։ Միևնույն ժամանակ անհրաժեշտ է անկեղծ և մտերմաբար իր լուման ներդնի Օսմանյան կայսրության վարչակարգում պաշտոնյաների ուռճացված չարաշահումների դրդապատճառները բացահայտելու, շուտափույթ կերպով դրանք վերացնելու, ինչպես նաև երկրում բարենորոգում անցկացնելու համար գտնի հնարավոր միջոցներ և աշխատի, որ դրանք գործադրվեն աստիճանաբար[39]։

Բ. 1895 Թ. ՊԱՊ-Ը ԱԼԻԻ ՅՈՒՅՑԸ ՄԵԾ ՎԵԶԻՐ ՍԱՅԻԴ ՓԱՇԱՅԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սայիդ փաշան (Մեհմեդ Շափուր Զելեպի 1838-1914) 19-րդ դարի վերջի քառորդի Թուրք ականավոր քաղաքական գործիչներից մեկն է: Սուլթան Աբդուլ Համիդի դահակալության շրջանում 9 անգամ նշանակվել է մեծ վեզիրի պաշտոնում: Իր պաշտոնանկության ժամանակամիջոցին էլ սերտ հարաբերության մեջ է եղել Աբդուլ Համիդի հետ և կարևոր հարցերում տևապես խորհրդակցել նրա հետ: 1908 Թ. ընդդիմադիր է «Միություն և առաջադիմություն» կուսակցության մեջ և 3 անգամ գլխավորել է մեջլիսը:

Ստորև հրապարակում ենք Սայիդ փաշայի հուշագրությունից առանձին հատվածների թարգմանությունը օսմաներեն բնագրից, որտեղ խոսվում է 1895 Թ. սեպտեմբերին տեղի ունեցած Պապ-ը Ալիի ցույցի և այլ հարցերի մասին:

Սայիդ փաշայի հուշագրության ընթերցումը մեզ բերեց այն կարծիքին, որ նա ավելի զգուշություն է հանդես բերել տեղի ունեցած այդ իրադարձություններին, քան Քյամիլ փաշան, որը հայկական հարցը լուծելու համար ամենայն մոլեռանդությամբ և ցինիկորեն հայտարարում էր «Ջնջել, վերացնել հայ ազգը մեկընդմիշտ»: Սայիդ փաշան առավել կողմ է եղել բանակցությունների և դիվանագիտական միջոցներով լուծել Հայկական հարցը: Ինչպես հուշագրությունից երևում է, այդ հարցում որոշակի տարաձայնություններ են եղել նրա և արյունոտ սուլթան Աբդուլ Համիդի միջև: Այդ իսկ պատճառով Աբդուլ Համիդը հաճախակի փոփոխության է ենթարկել մեծ վեզիրի պաշտոնակատարին, մեկ նշանակելով Քյամիլ փաշային, մեկ էլ՝ Սայիդ փաշային:

Բերենք մի քանի օրինակներ հուշագրությունից, որոնք առնչվում են Սայիդ փաշայի պաշտոնից հեռացվելու խնդրին:

«Հայերի պատահարը ի հայտ գալուց առաջ իմ դիրքը բավականին ամուր էր: Այդ պատահարի առաջ դալը և չտալ չկանխելը, որոշ առումով թուլացրեց իմ դիրքը: Իսկ ռազմական նախարարությունը օժանդակ ուժեր չտրամադրելով, առավել դժվարացրեց անդորրի վերահաստատումը: Մյուս կողմից, հպատակների միջև առաջ եկած թշնամանքն ու բախումները լի էին վտանգներով: Հետևաբար, անդորրը վերահաստատելու և իմ վրայից պատասխանատվությունը վերացնելու համար բավականին դժվարություններ կրեցի և ձեռնարկեցի մի շարք միջոցառումներ: Հակառակ այդ բոլորին, առանձին շահախնդիր մարդիկ լուրեր էին տարածել քրիստոնյաների մոտ, որ ես իբր քաջալերել եմ մահմեդականներին հայերի դեմ, իսկ մահմեդականների մոտ էլ ասել են, թե ես իբր հայերին չեմ պատժել իրենց արարքների համար»:

Ուշադրության արժանի է նաև Սայիդ փաշայի պաշտոնանկությունից հետո Աբդուլ Համիդի արտահայտած կարծիքը նրա մասին, որը փոխանցվել է նրան պալատի քարտուղարներից՝ Ֆայիք բեյի միջոցով:

«Ես Սայիդ փաշայի հետ մինչև հիմա տևապես քաղցրությամբ եմ վարվել: Նույնիսկ, նրան հասցրել եմ մեծ վեզիրության պաշտոնին: Մինչդեռ նա հայերին չպատժեց և մեջտեղ եկավ բարեփոխության աղմուկը: Արդյոք իրեն ի՞նչ ենք արել, որ պաշտոնանկությունից հետո բոլորովին մեզ մոտ չի գալիս: Չէ՞ որ նահանգներում արյուն է հոսում: Բոլորովին չի մտածում, որ անհրաժեշտ է գալ, գլուխ գլխի տալ և մի ճար գտնել այս խնդրի շուրջ: Ես նրա հետ քաղցրությամբ եմ վարվել, իսկ ինքը ճաշկերույթի ժամանակ մոտս եկավ, կրծքի պատվանշանների շարքից իմ Թուղրան հանելուց հետո: Նույն օրն էլ հայերի պատրիարքը եկեղեցիի դռան վրայից հանել էր նաև ցուցանակը»:

Ինչպես նշեցինք վերևում, Սայիդ փաշան իր հուշագրության մեջ մանրամասն նկարագրում է 1895 Թ. սեպտեմ-

բերին Կ. Պոլսում տեղի ունեցած Պապ-ը Ալիի հայկական ցույցի մանրամասնությունները և այդ ցույցի հետ կապված հայ-թուրքական բախումները։ Ցույցը խաղաղ բնույթ էր կրում։ Այն կազմակերպված էր Հնչակյան կուսակցության կողմից, հայկական բարենորոգումների խնդրում եվրոպական տերությունների ուշադրությունը գրավելու նպատակով։ Սայիդ փաշայի հուշերից պարզվում է, որ կառավարությունը նախօրոք իրազեկ էր այդ ցույցի մասին և ուշի-ուշով միջոցառումներ էր ձեռնարկել այն խափանելու հարցում։ Ակնհայտ է նաև, որ Սայիդ փաշան ձգտել է, որպեսզի զինվորական միջամտություն կատարվի հավանական բախումները կանխելու համար։ Հակառակ դրան, սուլթան Աբդուլ Համիդը և ռազմական նախարարությունը դիտումնավոր ձգձգել են այն, որպեսզի զինված թուրք ամբոխը հաշվեհարդար տեսնի հայերի հետ։

Փաստերը ցույց են տալիս, որ Աբդուլ Համիդը մի նոր հայկական ջարդ կազմակերպելու իր նենգ ծրագիրը գործադրել է հետևյալ կերպ։ Գաղտնի զինել է Սոֆթաներին, ինչպես նաև մահմեդական խուժանին և նրանց ուղարկել փողոց՝ հայերի վրա։ Լիովին պարզվում է, որ այդ խուժանի մեջ եղել են նաև ծպտյալ զինվորներ։ Այդ է վկայում Սայիդ փաշան, նշելով, որ «Նույնիսկ հայերի վրա հարձակվողների թվում եղել են զինվորներ և ուսանողներ»[1]։

Բնականաբար, միջազգային հասարակությունը խստորեն դատապարտեց Աբդուլ Համիդի նախաձեռնությամբ կատարված այդ հանցագործությունները և պարտադրեց իր կառավարություններին ազդու միջոցներ ձեռնարկել։ Արդյունքում, Բարձրագույն դուռը վավերացրեց (հոկտեմբեր 8, 1895 թ.) «Մայիսյան բարենորոգումներ»ի ծրագիրը, որը բխում էր 1878 թ. Բեռլինում կնքված պայմանագրի 61-րդ հոդվածից։ Այնուհանդերձ, այն չգործադրվեց և, ընդհակառակը, առիթ տվեց նոր կոտորածների։ Միայն Կ. Պոլսի կոտորածներին զոհ գնացին մոտ երկու հազար անմեղ հայեր։

1895 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին զանգվածային կոտորածներ տեղի ունեցան հայաբնակ գավառներում՝ Տրապիզոնում, Դերջանում, Բաբերդում, Երզնկայում, Բզիում, Զարսանջաքում, Բաղեշում, Ուրֆայում, Կարինում, Մարաթիայում, Խարբերդում, Դիարբեքիրում և այլուր։

Ընդհանուր առմամբ 1894-1896 թթ. կոտորածներին զոհ գնացին 300 000 անմեղ հայեր։

Ստորև բերված թարգմանությունը ներկայացնում ենք որոշ կրճատումներով, նկատի ունենալով հուշագրում եղած կրկնությունները։

* * *

1313 թ. ռեպի ուլ-ահիրի երրորդ օրը (սեպտեմբեր 28, 1895 թ.) Թուրխան փաշայի[2] հետ միասին հրավիրվեցի պալատ։ Ժամը 11-ի մոտերը՝ մեր պալատ մտնելու ընթացքում, այնտեղից դուրս էր գալիս ոստիկանության նախարար Նազըմ փաշան։ Այդ օրը, գիշերվա ժամերին, Թուրխան փաշայի հետ ներկայացա սուլթանին[3] և ժամը 5-ի մոտերը վերադարձա բնակարանս։ Որոշ ժամանակ անց մի ծանուցագիր ստացա [պալատի] գլխավոր քարտուղարությունից, որի բովանդակությունից պարզվում էր, որ ոստիկանության նախարարի՝ սուլթանին ներկայացրած տեղեկագրի համաձայն, 500 զինված հայեր կիրակի կամ երկուշաբթի օրը շարժվելու էին դեպի Բարձրագույն դուռ, որտեղ զինված դիմադրություն էին ցուցաբերելու, եթե նրանց հանդեպ գենք գործադրվեր...։ Ոստիկանության նախարարից մի ծանուցագիր էլ ստացա, ուր նշվում էր, որ վերոհիշյալ լուրը իբր տեղեկացվել էր մի անհայտ հայի կողմից վերաքննիչ դատարանի նախագահին ներկայացրած իր գրությունից։ Ծանուցագրում նշվում էր նաև, որ մի քանի օր առաջ ի հայտ էր եկել նման մի լուր, սակայն դրա հավաստի լինելու մասին տարակուսանք կար։ Այդ ծանուցագրի բովանդակությունից

ես ես կասկածեցի վերոհիշյալ լուրի ճիշտ լինելու մասին: Ուստի մի գրությամբ դիմեցի ոստիկանության նախարարություն, պահանջելով մանրամասն ստուգել այդ լուրը հայտնողի ինքնությունը և նրա տված գրությունը: Ոստիկանության նախարարի ծանուցագրի մեջ կար այն միտքը, որ կիրակի օրը, եթե հայերին արգիլվեր եկեղեցի մուտք գործել, ապա նրանք այդ արգելակումը պատրվակ բռնելով կարող էին մեռելոցի օրը խռովություն բարձրացնել:

Հետևաբար, արգելք հանդիսանալը նպատակահարմար չէր համարվում: Իսկ եթե հոծ բազմությամբ շարժվելը իրական լիներ, ապա զինվորական հեծյալ մի դասակ էր նախապատրաստվելու նրանց ցրիվ տալու համար:

Այնուհետև, շտապ կազմվեցին երկու հաղորդագրություններ, մեկը՝ ուղղված հայոց պատրիարքին[4] և հոգևոր ու աշխարհիկ ժողովներին, իսկ մյուսը՝ տվյալ ամբոխի ղեկավարներին: Առաջինի մեջ նշված էր, որ պատրիարքը, հոգևոր և աշխարհիկ ժողովների անդամներից մեկական պատվիրակ վերցնելով, գար Բարձրագույն դուռ և պարզաբաներ [հայերի] ցանկությունը: Իսկ մյուսի մեջ, գինված ամբոխին կատարվել էր հետևյալ հայտարարությունը, որ «Օրենքի հիման վրա անմիջապես ցրվեն, իսկ չցրվելու դեպքում ձեռնարկվելու էին օրինական միջոցներ...»:

Այնուհետև ոստիկանության նախարարը մի քանի անդամ Բարձրագույն դուռ գալով հայտնեց, որ հայ ամբոխը գտնվում է պարսկական դեսպանության մոտակայքում, որ նրանց մի մասը մոտենում է Բարձրագույն դուռ, մի մասն էլ շարժվում է այլ փողոցներով, որ շարունակվում է ոստիկանության հետ գինված բախումներ տեղի ունենալ: Հայտնեց նաև, որ ոստիկանության ուժը բավարար չէ, և խնդրեց օժանդակ ուժեր ուղարկել: Սրա հիման վրա, երբ ռազմական նախարարությունից մի ջոկատ զինվոր պահանջեցինք, մեր պահանջը կրկին չընդունվեց...:

Շուտով տեղեկացանք, որ զինվորական ուժի բացակայության հետևանքով տգետ ամբոխը հարձակվել է [հայերի] վրա, որ նույնիսկ դաժանություն գործադրողների թվում եղել են զինվորներ և ուսանողներ[5]: Բնականաբար, նման հանցավորներին պատժելու հարցը մտնում էր պետության իրավասության մեջ: Ոչ մի անհատ մի այլ անհատի վրա իրավունք չունի բռնանալու: Ի վերջո հանցավորներին օրենքի հիման վրա պատժելու կարգադրություն եղավ, ինչպես նաև գրավոր տեղեկացվեց ռազմական, ծովային նախարարություններին, քաղաքապետարանին, ոստիկանությանը, որպեսզի ամեն կերպ արգելեն զինվորների և ուսանողների միջամտությանը, մատնանշելով, որ բռնություն գործադրելու դեպքում, նրանք հանցավոր են ճանաչվելու...:

Ամբոխը ցրվեց և բախումները վերացան: Գիշերվա ժամը 2-ի մոտերը կատարված ստուգումից պարզվեց, որ պատրիարքարանի եկեղեցու մեջ 40-50 հոգուց բացի մարդ չի մնացել: Նրանք էլ պանդուխտ և անօթևան լինելով, խոստացել էին հաջորդ օրը դուրս գալ եկեղեցուց:

Ցերեկը ոստիկանության նախարարի, իսկ այնուհետև երկու թիկնապահների միջոցով պահանջվեց, որպեսզի պատրիարքը ներկայանա Բարձրագույն դուռ: Սակայն, երբ վերադարձան, պարզվեց, որ նրանք պատրիարքին տեսել էին հիվանդ և արյուն փսխելու վիճակում և ստացել էին այն պատասխանը, որ պատրիարքը հաջորդ երեքշաբթի օրը կներկայանա Բարձրագույն դուռ...:

Խոսելով այս պատահարի պատճառների մասին, Արիկ և Նուրյան էֆենդիները տվեցին այն բացատրությունը, որ դա առաջ է եկել Ռուսաստանից եկած մոտ 15 հայերի դրդումով, որ պատրիարքը մաս չունի այդ գործում, որ Ռուսաստանից եկած այդ հայերի հանդեպ ոստիկանությունը հանդես է բերել անտարբեր վերաբերմունք: Ես չեմ հասկանում, թե առանց պատրիարքի իմացության կարո՞ղ էր արդյոք այդպիսի մի բան

առաջ դալ։ Իսկ, եթե նախապես նա գիտեր այդ մասին, ապա ինչպես է, որ այդ պատահարը տեղի ունեցավ...։

Ստորև մանրամասն սկզբից կբացատրեմ տվյալ պատահարի մասին իմ ձեռնարկած միջոցառումները, նկատի ունենալով, որ քարտուղարը բոլորովին այլ կերպ է նկարագրել իրադարձությունը։

Ֆընդըգլըի[6] առաջ, երբ ոստիկանության ծանուցագիրը ստացա, իմ մոտ գտնվող թիկնապահիս կատարեցի հետևյալ կարգադրությունը. «Շտապ գնա ոստիկանություն տես տեսուչին և ասա նրան, որ ձեռք առնի բոլոր միջոցները, որպեսզի կանխի հայերի հարձակումը[7] Բարձրագույն դռան վրա և առանց արյուն թափելու ցրի ամբոխը»։

... Ոստիկանության տեսուչին կարգադրվեց, որ ստորև բերված հաղորդագրությունը ընթերցվի ամբոխի առաջ և այնուհետև հանձնվի պատրիարքարան։

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԵՆ

Հայոց խոհեմազարդ պատրիարքին և ժողովրդին։

Հրամայում եմ անմիջապես ցրել ամբոխը։

Պատրիարքը, հոգևոր և աշխարհիկ ժողովների անդամներից մեկական ներկայացուցիչ վերցնելով, շտապ գա Բարձրագույն դուռ և հայտնի իրենց ցանկությունների մասին։ Կրկին հրամայում եմ, որ ամբոխը ցրվի։

Սույն հայտագիրը հաղորդվում է վսեմաշուք մեծ վեզիրի, արդարադատության և կրոնական գործերի նախարարության և բարձրապատիվ փաշաների որոշման հիման վրա։

Ներքին գործերի նախարար՝ ՐԻՖԱԱԹ

Գրված սեպտեմբեր 30, 1313 թ. (1895)։

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայոց պատրիարքարանի այժմյան հոգևոր և աշխարհիկ անդամներին։

Ամբոխի ցրման համար ոստիկանության վսեմաշուք տեսուչը կառավարության անունից ուղարկվել էր պատրիարքարան։ Պատրիարք էֆենդին առարկել էր վերոհիշյալ տեսուչի հետ տեսակցելը։ Իսկ հետագայում ուղարկվել էր եպարգոսության պաշտոնյաներից՝ հաջարապետ՝ Խալիլ բեյը, սակայն ամբոխը նորից չէր ցրվել։ Վերոհիշյալը վերադարձավ միմիայն պատրիարքարանի պաշտոնյաների մեկի տված պատասխանի հիման վրա։ Այդ պատասխանով նրանք խոստացել էին ցրել ամբոխը, և խնդրել ոստիկանության տեսուչի միջնորդությունը ժամանակ տրամադրելու մասին, որպեսզի իրագործվի Բարձրագույն դռան պահանջը։ Իր հերթին տեսուչը հանձն էր առել ամբոխի վրա կրակ չբացել։

Այն անհատները, որոնք սուլթանական կառավարության օրենքով արգելված հասարակային շարժման մասնակցություն են ունեցել, պատրիարքարանի միջնորդությամբ, պատեհ համարվեց ավելի մեղմ վերաբերմունք հանդես բերել նրանց հանդեպ։ Առանց զինվորական միջամտության ամբոխի ցրումը նշան է կարեկցանքի արտահայտության։ Ամբոխային այդ շարժումը կառավարության և հայ համայնքին շահ բերող մի երևույթ չէ։ Այնպես, որ այդ հավաքը պետք է համարել սահմանափակ քանակությամբ մարդկանց գործունեության արդյունք։ Հետևաբար, օրենքի անունով միաձայն որոշված է այս հայտագիրը ներկայացնելու պահից, մեկ ժամվա ընթացքում ցրել ամբոխը։

Գրված է 1313 թ. ռեբի ուլ-ահիր ամսի 10-ին (սեպտեմբեր 30, 1895 թ.)։

Արտաքին գործերի նախարար՝ ԹՈՒՐՀԱՆ

Ներքին գործերի նախարար՝ ՌԻՖԱԱԹ

Արդարադատության և կրոնական գործերի նախարար՝ ՐԻԶԱ

Մեծ վեզիր ՍԱՁԻԴ

Սույն որոշումը ցերեկվա ժամը 8:15-ին հանձնելով եպար-

դատության թիկնապահներից՝ Խալիտ բեյին, հանձնարարվեց ներկայացնել պատրիարքին։

Այսուհանդերձ, Բարձրագույն դուռը աչքի առաջ ունենալով հայերի նախահարձակ լինելու վտանգը, մի սպայի գլխավորությամբ, պահնորդ ոստիկաններին պահ էր տվել ոստիկանատանը։ Հայերի հարձակման դեպքում նախ առաջարկվելու էր, որ նրանք ետ քաշվեն. կարգադրությունը չլսելու դեպքում հրաման էր տրված զենքի ուժով ետ մղել նրանց։ Հիշյալ սպան ասել էր, որ իր տրամադրության տակ կա 50-60 զինվոր, որոնցից շատերը զենք ունենալով հանդերձ փամփուշտ չունեին։ Նա հայտնել էր նաև, որ հարձակման դեպքում նրանք հայերին կդիմավորեն սվիններով։

Ահա այս ընթացքում սկսեց լուր տարածվել, որ ցամաքային և ծովային զինվորները, կրոնական ուսումնարանի սաները և արհեստավորները հարձակվել են հայերի վրա։ Ուսումնարանի սաների և արհեստավորների կատարած դաժանությունները քաղաքագլխի կողմից հաստատվելուց հետո, նա շտապ զեկուցագիր է ներկայացրել չեյխ ուլ իսլամին, ռազմական և ծովային նախարարություններին, ոստիկանության պաշտոնյաներին, որպեսզի օրինազանցները ենթարկվեն խիստ պատասխանատվության։

Այդ օրը զինվորական կանոնավոր ուժերի, ինչպես նաև պահնորդ ոստիկանների միջամտություն չկատարելու հետևանքով, հնարավոր չեղավ հայերին ցրել և ոչ էլ վերջ տալ վերոհիշյալ դաժանություններին։ Իսկ Բարձրագույն դուռը, անհրաժեշտ ջանք թափեց այդ օրը, որպեսզի խրատելով և զենքի սպառնալիքով վերջ տա պատահարին։ Վերոհիշյալ պաշտոնատների ղեկավարներին համապատասխան հրամանները տալով հանդերձ, պատրիարքությանը կարգադրվեց, որպեսզի շտապ Բարձրագույն դուռ գան նաև ազդեցիկ առաջնորդ Գաբրիել Էֆենդին և հայ երևելիներից Նուրյան Էֆենդին...։

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ՍՈՒԼԹԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ

Հավանական հարձակման կապակցությամբ ծանուցագրով պահանջվել էր մեկ վաշտ զինվոր ուղարկել Բարձրագույն դռան շրջակայքը։

Այսուհանդերձ, ինչպես նախապես հայտնել ենք, հայերի հոսանքը Սուլթան Ահմեդի, Գաղըրդայի և Բարձրագույն դռան շրջակայքում արդեն ցրված է։ Այժմ զբաղված ենք պատրիարքարանի ամբոխը ամբողջովին ցրելու գործով։ Ուշադրությամբ հետևում ենք, որպեսզի տվյալ պատահարը եվրոպական հարց դառնալու բնույթ չընդունի։ Անդորրի վերահաստատման մասին տեղեկացվել է դեսպանություններին։ Մանրամասնությունները հաղորդվելու են տեղեկագրով։

Ներքին գործերի նախարար

Արտաքին գործերի նախարար

Արդարադատության նախարար

Մեծ Վեզիր

ԱՐԻԶԱՏ

... Անգլիայի նոր դեսպան պրն. Գոշենի հետ տեղի ունեցած պաշտոնական խոսակցության ընթացքում խոսք բացվեց հայերով բնակեցված վիլայեթների դրության մասին։ Ըստ նրան հասած տեղեկությունների, հիշյալ վիլայեթներում իբր ապահովությունն ու անդորրը չքացել է և պաշտոնյաները չարաշահում են գործադրում փոքրամասնություն կազմող բնակչության նկատմամբ, թե հայերը հարստահարվում են այդ պաշտոնյաների կողմից։

Անգլիական պետության ներկա նպատակը և դիրքորոշումը այն է, որ պահպանվի Օսմանյան կայսրության ամբող-

ջականությունը, ինչպես նաև գործադրվի նորին մեծություն Փադիշահի կամքը։

Անգլիան մտադիր չէ խառնվելու Օսմանյան կայսրության ներքին գործերին. միմիայն կարող է առաջարկել, որ Բեռլինի պայմանագրի որոշումները գործադրվեն և այդ գործում մասնակցություն ունենան նաև տվյալ պայմանագիրը ստորագրած մյուս պետությունները։ Փոքրամասնության կազմող հպատակները, եթե մեծամասնության կողմից հարստահարվեն, ապա, բնական է, որ Օսմանյան պետությունը դրանով առիթ է տալու, որպեսզի Եվրոպան իր ուշադրությունը բևեռի գործադրվող այդ բռնությունների վրա։ Իսկ այդ հանգամանքը կարող է պետությունների միջև տարաձայնություններ առաջանալու պատճառ հանդիսանալ և հետևանքն էլ կլինի այն, որ Եվրոպայի անդորրը կարող է վտանգի ենթարկվել։ Ուստի անգլիական կառավարությունը ձգտում է Օսմանյան պետությանը մղել բարենորոգումների գործադրման ուղու վրա, որպեսզի կանխի սպառնացող վտանգը...։

Անգլիայի դեսպանը իր մտքերը եզրափակեց ասելով, որ «Հնարավորին չափ շուտ ասիական մայրցամաքում գործադրվի անհրաժեշտ բարեփոխությունները»։ Այնուհետև խոսք եղավ այն մասին, որ ոմանք ջանք են գործադրում, որպեսզի Օսմանյան կայսրությունը հետաձգի այդ բարեփոխությունների իրագործումը, որ նրանց նպատակն է օգտվել կայսրության այդ ճգնաժամային վիճակից։ Եթե Օսմանյան կայսրությունը այդպիսի թելադրանքներին հետևելով ձգձգի բարեփոխումների գործադրումը, ի վերջո կկանգնի փակուղու առաջ։

Զրույցի ընթացքում նա տևապես մատնանշում էր անգլիական կառավարության ցանկությունը՝ բարեփոխություններ գործադրելու խնդրում՝ նշելով, որ եթե այդ բարեփոխությունները կապված են Եվրոպայի խաղաղության ընդհանուր շահերի հետ, ապա, մյուս կողմից առավել առնչվում են, հատկապես, Օսմանյան կայսրության ապահովության շահերի հետ։

Նշվեց, որ Օսմանյան կայսրության հանդեպ անգլիական պետության տածած անկեղծ զգացումները և նրա նախկին բարեկամությունը կհարատևի զրույցի ընթացքում հայտնված բարի ցանկությունների իրագործումով[9]։

Ինչ վերաբերում է Անատոլիայի բարեփոխությունների հարցին իմ նախկին գրությունների մեջ (տե՛ս Զուլկատե 17, 1296 (հոկտեմբեր 3, 1879), Զուլկատե 21, 1296 (հոկտեմբեր 7, 1879) և Զիլհիճե 18, 1296 (դեկտեմբեր 3, 1879) թվականների գրությունները), ես հայտնել էի, որ հայերով բնակեցված վայրերում անհրաժեշտ բարեփոխումների կիրառումը բխում է Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածից և այս առթիվ կատարվող անհրաժեշտ նախաձեռնությունները տեղեկացվելու են մեծ տերություններին։ Հիշյալ վայրերի անդորրը երաշխավորելու համար շտապ անհրաժեշտություն էր զգացվում նոր վարչակարգ հաստատելու խնդիրը։ Այնուհանդերձ, միայն այս վայրերում բարեփոխումներ կատարելը կարող է հուզել այլ վայրերի բնակչությանը ևս, և նման արտոնություններից օգտվելու համար, բնականաբար, նրանք ևս կդիմեն օտար պետությունների օգնությանը։ Թե՛ այս վտանգը կանխելու և թե՛ ասիական մասը անգլիական և ռուսական պետությունների միջև մրցակցության հրապարակ չդարձնելու համար, որը Օսմանյան կայսրության համար կյանքի հարց է, անհրաժեշտ է [այդ վիլայեթները] պահպանելու և ապահովելու նպատակով Ռումելիի շրջանից դուրս գտնվող վիլայեթներում այսօրվանից բարեփոխություններ անցկացնել։

Վերոհիշյալ գրությունների մեջ նշված առաջարկությունները, բնականաբար, գործադրվելու են այնպես, ինչպես որ նորին մեծություն փադիշահի կայսերական հրամանը կթելադրի։

Գրված է Ջեմազի էլ-էվվել, 1297 (ապրիլ, 1880)

Ստորագրություն ՍԱՁԻԴ

Ծանոթագրություն թարգմանչի՝ Ա. Փ.՝ Հետագայում

Սայիդ փաշայի կողմից սուլթանին ուղղված համանման մի այլ գրության մեջ (մայիս 30, 1895 թ.) նշվում է նաև հետևյալը.

... «Անգլիացի դեսպանի հետ տեղի ունեցած բարձր մակարդակի բանակցությունը, արձանագրվել և ստորագրվել է պալատի ներկայացուցիչ՝ Մյունիր փաշայի կողմից և ի պահ է դրվել պալատում։ Բարձրագույն դռան կողմից պալատ է հաղորդվել նաև, որ դեսպանների այժմյան խոսքի նյութը ոչ թե նախապես նշված 6 վիլայեթներն են, այլ Անատոլիայի բոլոր վիլայեթներում, ամբողջությամբ վերցրած՝ մի նոր վարչակարգ ստեղծելու հարցը, որ այդ վարչակարգը դրվի քաղաքացիական և զինվորական հսկողության ներքո։ Դեսպանների կողմից ներկայացված հուշագրի և այլ գրությունների մասին Բարձրագույն դուռը տվել է այն պատասխանը, որ ընդունված որոշումները բավարարելու են դեսպաններին...։

«ՀԱՄԻՏԻԵ» ՀԵԾԵԼԱԳՆԴԵՐԸ[10]

Լուրեր են տարածված, որ «Համիդիե» հեծելագնդերը տուրք վճարելուց ազատված լինելով հանդերձ, իրենց շահերի համար բռնություններ են գործադրում բնակչության հաղեպ։

Թե՛ վիլայեթի և թե՛ բնակչության կողմից հասած բողոքներից պարզվում է, որ Դիարբեքիրի շրջանում գտնվող «Համիդիե» հեծելագնդի հրամանատար Մուսթաֆա փաշան, որը հանդիսանում է նաև աշիրեթի առաջնորդը, բառիս բուն իմաստով, զինվորական ձևի մեջ մտած, այս աշիրեթի մարդկանց դարձրել է բռնություն գործադրելու կատարյալ մի գործիք, իրականում խանգարելով այդ շրջանի բնակչության ապահովությունն ու անդորրը։ Դիարբեքիրի նախկին նահանգապետ Խալիդ Էֆենդին և նրա հաջորդ Ֆայիք փաշան շատ բաներ են գրել այն մասին, որ 4-րդ բանակի հրամանատար՝ Զեքի փաշան չափից ավելի է հովանավորում այս

Մուսթաֆա փաշային։

«Համիդիե» հեծելագնդի առաջնորդներին, սպաներին և, նույնիսկ, պարզ զինվորներին անհրաժեշտության դեպքում դատաքննության ենթարկելու իրավունքը վերացվել է տեղական դատարանների համար։

Սրանց դատական գործերը իբր կարող էին քննել միմիայն զինվորական ատյանները, սակայն այս օրենքն էլ մնացել է թղթի վրա և անգործության մատնվել բանակի հրամանատարի և այլ առաջնորդների կողմից։ Մինչդեռ, զինվորականների գործադրած բռնությունները, ինչպես նաև սովորական ոճրագործությունները, ըստ օրենքի, պետք է հետաքննվեր պետական դատարանների կողմից։

Դիարբեքիրի վիլայեթում, Մուսթաֆա փաշային օրենքի հիման վրա, դատաքննության ենթարկելու և վերոհիշյալ դատական նոր օրենքը վերացնելու համար նախարարների խորհրդի՝ սուլթանին ներկայացրած տեղեկագիրը ոչ մի արձագանք չգտավ։

Այնուհանդերձ, ի վերջո Մուսթաֆա փաշան ընկավ իր գոհերից մեկի վրեժխնդրության սրով և աղետն էլ ավարտվեց այդ ձևով[11]։

«ՀԱՄԻԴԻԵ» ՀԵԾԵԼԱԳՆԴԵՐԻ ԶՈՐԱԽԱՂԵՐԸ

Այս տարի (1895 թ.) «Համիդիե» հեծելագնդերի զորախաղերի և հեծյալների ծառայության մեջ գտնվելու ընթացքում, նրանց ռոճիկով և այլ անհրաժեշտ ծախսերով ապահովելու համար, ռազմական նախարարությունը 35 հազար լիրա տրամադրելու զեկույց էր ներկայացրել։

Հայտնի է, որ հեծելագնդերին ենթարկվող անձինք կանոնավոր զինվորական ծառայության մեջ չեն գտնվում։ Սրանք հավաքվում են առաջնորդի ցանկությամբ, իսկ բացակաների տեղերն էլ լրացվում են այլ հեծյալներով։

Այս հեծելազնդերի ստեղծումից ի վեր, առաջնորդները և սպաները երբեմն զինվորական ուսուցում չէին ստացել: Սրանց իմացածը եղել է միմիայն ճիրիտի խաղը: Մինչդեռ, ինչպես բացատրել էի իմ առաջին ծանուցագրի մեջ, այսօր, բոլոր պետությունների զինվորականության նման, եթե զինվորը հարկ եղած զինավարժությունը չսովորի և մասնակցություն չունենա ընդհանուր զորախաղերին, ապա ոչ մի իմաստ չունի այդպիսիներին զինվոր կոչելու և նրանցից էլ օգուտ սպասելու:

Թե՛ մայրաքաղաքում և թե՛ դրսում գտնվող մեր զորաբանակների զինվորները բոլորովին զուրկ են ուսուցումից և զինավարժությունից: Վիճակը այսպիսին լինելով հանդերձ, ես չեմ հասկանում, թե այս տարի ինչ դրդապատճառների հիման վրա է, որ ցանկություն է առաջացել «Համիդիե» հեծելազնդերի զորախաղեր անցկացնել:

Հայերի աղետից հետո Անատոլիայի դրությունը բավականին նրբացել է և եթե քրդերը իրենց այս տեղաշարժերով ընակչության և նրա ունեցվածքին մի նոր բռնություն գործադրեն, որը առավել հավանական է, դա կարող է առաջ բերել մի նոր աղետ:

Այս կապակցությամբ, այդ զորախաղերը այս տարի չանցկացնելու առթիվ մի գրություն ուղարկեցի վերոհիշյալ ռազմական նախարարությանը:

Ռազմական նախարարությունը հաշվի չառավ այս տեղեկագիրը և երկու անգամ պնդեց իր նախկին առաջարկի մասին: Սակայն Բարձրագույն դուռը իր դիրքորոշումը չփոխեց այս հարցում: Այսպիսով, այս տարի հետաձգվեց քրդերի զորավարժությունները:

ԲԻԹԼԻՍԻ ՀԱՅԵՐԸ

Բիթլիսի շրջանի մի շարք կազմների հայ բնակչությունից բավական թվով մարդիկ, միանալով Մուշի մի շարք հայերի հետ, կազմել են մի թշնամական խումբ կառավարության դեմ և ամրացել՝ անառիկ լեռներում գտնվող մի վանքում[12]: Այս առթիվ Բիթլիսի վիլայեթից ստացված հաղորդագրությունից հետո պալատի հրամանով նրանց վրա ուղարկվել էր զինվորական ուժ և թնդանոթներ:

Այսուհանդերձ, հպատակների հանդեպ հաշտեցման նախաձեռնությունը բռնություն գործադրելուց առավել նախընտրելի համարելով, ես անհրաժեշտ ջանքեր գործադրեցի, որպեսզի վանքում ամրացած մարդկանց հնազանդեցնեմ և հակառակ Պալատի հրամանին, լուր ուղարկեցի վիլայեթ, որպեսզի առանց Բարձրագույն դռան կարգադրության զենք չօգտագործվի վանքում ամրացած հայերի դեմ:

Տվյալ վանքը որոշ ժամանակ մնաց պաշարման մեջ, սակայն պատրիարքարանի հետ ունեցած բանակցություններից հետո, Մուշի եպիսկոպոսը մեկնել է վանք և այնտեղ ամրացած հայերին դիմել է խրատական խոսքերով: Այնուհետև, հայերը վերջ տալով դիմադրությանը, դուրս են եկել վանքից և վերադարձել՝ իրենց բնակարանները:

Այդ դեպքից հետո, նրանց բողոքները հաշվի առնելով, բավարարվեց նրանց խնդրանքը:

Գ. ՕՍՄԱՆԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ ՋԵԼԱԼ ՆՈՒՐԻԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Օսմանիզմի (Osmanlıdık) գաղափարախոսությունը ծնունդ է առել դեռևս 19-րդ դարի կեսերից և լայն կիրառում է ունեցել Օսմանյան կայսրության պետական մարմինների քաղաքական գործունեության ասպարեզում, հիմնականում, հետապնդելով Թուրքիայի ոչ-մահմեդական ժողովուրդերին մեկ՝ «Օսմանյան» ազգության մեջ միաձուլելու ծրագիրը: Օսմանիզմի գաղափարախոսության առաջին ջատագովներն էին տվյալ ժամանակաշրջանի հայտնի թուրք պետական գործիչներ Ալի և Ֆուատ փաշաները, որոնք օսմանիզմի գաղափարախոսության իրականացումով ձգտում էին փարատել կայսրությունում բուռն կերպով աճող ազգային-ազատագրական շարժման վտանգը: Այնուհանդերձ, ինչպես իրավամբ եզրակացնում է թուրքագետ պատմաբան Ռուբեն Սաֆրաստյանը իր «Օսմանիզմի ուսմունքը Օսմանյան կայսրության քաղաքական կյանքում» շահեկան աշխատասիրության մեջ, այդ շարժումը դարձավ լոկ մի պատրանք, քանի որ այն իր մեջ բովանդակում էր իրարամերժ տեսակետներ: Այսինքն՝ մի կողմից պահանջվում էր պահպանել իսլամի տիրապետող դրույթներն ու թուրքական էթնոսը, իսկ մյուս կողմից՝ «հավասարություն» դնել մահմեդականների և քրիստոնյաների միջև[1]:

Հետագայում, 60-70-ական թվականներին «Նոր օսմանները» պնդում էին, որ բավական է կազմալուծել բռնապետական վարչակարգը, և կայսրության ժողովուրդները կմիանան «ընդհանուր հայրենիքի» սահմաններում և կապրեն համերաշխ, կվերանա ազգային և կրոնական պայքարը նրանց միջև:

Իրականում «Նոր օսմանները» բացահայտորեն ձգտում էին պահպանել թուրքերի տիրապետող դիրքը ազգային բարեփոխված պետության մեջ, այդ թվում՝ հույների, հայերի, սլավոնական ժողովուրդների, արաբների և քրդերի, ինչպես նաև այլ ժողովուրդների նկատմամբ:

Աբդուլ Համիդ Երկրորդի բռնապետության շրջանում օսմանիզմի գաղափարախոսությունը դուրս մղվեց կայսրության քաղաքական գործունեության ասպարեզից, քանի որ արյունոտ սուլթանը, ինչպես հայտնի է իր նախընտրած մեթոդով, այսինքն՝ դաժան հալածանքների և կոտորածների միջոցով ձգտեց լուծել ազգային հարցը կայսրությունում:

Օսմանիզմի գաղափարախոսությունը նոր երանգներով գործունեության բուռն թափ ստացավ 1908 թ. Երիտթուրքերի հեղափոխությունից հետո: Սակայն այս անգամ ևս նկատվեց նրա հետադիմական գաղափարախոսության սնանկությունը:

Երիտթուրքական գաղափարախոսները ամեն կերպ փորձում էին միաձուլել Օսմանյան կայսրության ոչ-մահմեդական ժողովուրդներին մեկ «Օսմանյան ազգության» մեջ, որը իրականում զրկում էր ոչ-թուրք ժողովուրդներին ազգային ինքնորոշման արդարացի իրավունքից: Երիտթուրքերի ղեկավարները հետևողականորեն ջատագովում էին օսմանիզմի գաղափարախոսությունը, այն է, որ Օսմանյան կայսրությունում բացի օսմանյան ազգից ուրիշ ազգություններ չկան, կայսրությունում մեկ ազգ կա՝ օսմանցի ազգը:

Իրականում, կայսրությունում «իսկական» քաղաքացի կարող էին ճանաչվել միայն թուրքերը, և նրանք, ովքեր հավատափոխ լինելով, կմոռանային սեփական լեզուն և կձուլվեին թուրքերի մեջ: Դեռևս 1910 թ. Սալոնիկում կայացած «Միություն և առաջադիմություն» (Իթթիհատ վե թերաքքի) կուսակցության տեղական կոմիտեի գլխավոր նիստում Թալեաթը հայտարարել է. «Դուք գիտեք, որ սահմանադրությամբ մահմեդականների և քրիստոնյաների հա-

վասարություն է հաստատվել, բայց դուք բոլորդ միասին և ամեն մեկդ առանձին գիտեք, և զգում եք նաև, որ դա անիրականալի գաղափար է: Շարիաթը, մեր անցյալի ամբողջ պատմությունը, հարյուր հազարավոր մահմեդականների զգացմունքները և նույնիսկ իրենց՝ քրիստոնյաների զգացումը, որոնք համառորեն դիմադրում են իրենց օսմանականացման ամեն մի փորձի դեմ, անհաղթահարելի պատնեշ են իսկական հավասարության համար...: Ուստի հավասարության մասին խոսք անգամ լինել չի կարող մինչև այն ժամանակ, քանի դեռ մենք հաջողությամբ չենք պսակել կայսրության օսմանականացման մեր նպատակը»[2]:

Իսկ ավելի ուշ, 1911 թ., հոկտեմբերին, կրկին Սալոնիկում տեղի ունեցած իթթիհատականների համագումարը կայացրեց հետևյալ որոշումը.

«Վաղ թե ուշ պետք է իրագործվի Թուրքիայի բոլոր հպատակների օսմանականացումը, բայց մի բան պարզ է, որ դա երբեք չի կատարվի համոզելով, այլ պետք է իրականացվի զենքի ուժով[3]:

Իսկ 1911-1913 թթ. Բալկանյան պատերազմների տարիներին համաթուրքականությունը (պանթուրքիզմը) և համամահմեդականությունը (պանիսլամիզմը) դարձան Երիտթուրքերի ներքին և արտաքին քաղաքականության գաղափարական առանցքը: Տվյալ ժամանակ այս գաղափարախոսությունների առավել աչքի ընկնող ներկայացուցիչներն էին Զիյա Կյոքալփը, Յուսուֆ Ակչուրան, Ֆուատ Քյոփրյուլյուն, Իսմայիլ բեյ Գասպրինսկին, Ջելալ Նուրին, որոնք իրենց առանձին մենագրություններում և մամուլում հրապարակած հոդվածներում քարոզում էին Թուրքերի «գերազանցությունը» կայսրությունում ընակվող այլ ազգությունների նկատմամբ, հետևաբար, և պահանջում էին վերջինների միաձուլումը մեկ ազգության մեջ:

Համաթուրքականությունը միաժամանակ Օսմանյան

կայսրության քրիստոնյա ժողովուրդներին բռնի ուծացնելու խնդրում Երիտթուրքերի ազգայնամոլ քաղաքականության մի նոր ուղղություն էր: Այսպիսով Երիտթուրքերը ամբողջապես որդեգրեցին Աբդուլ Համիդի արյունարբու քաղաքականությունը, իրենց դաժանությամբ գերազանցելով նրան: Կայսրությունում ազգային հարցը լուծելու համար նրանք ընտրեցին ազգերին ոչնչացնելու ճանապարհը:

Ի միջի այլոց նշենք, որ մեր օրերում օսմանիզմի գաղափարախոսությունը համարյա թե նույնությամբ իր արտահայտությունն է գտնում նաև արդի Թուրքական պետական գործիչների ելույթներում: Այսպես, Թուրքիայի Հանրապետության նախագահ՝ Սուլեյման Դեմիրելը ուշագրավ ակնարկություն էր արել օսմանիզմի մի գաղափարախոսության մասին քրդական հարցի հետ կապված, որը արձագանք է գտել թուրքական «Սապահ» թերթի մարտ 21, 1994 թ. համարում հրատարակված լրագրող Ֆաթիհ Ջեքիրկեի հոդվածում: Սուլեյման Դեմիրելը մատնանշել է, որ «Թուրքիայում տարբեր ազգային և կրոնական պատկանելություն ունեցող մարդիկ պետք է ապրեն սահմանադրական քաղաքացիության դրոշի ներքո: Այդպես էին անում օսմանցիները»:

Ս. Դեմիրելի քրդական հարցի վերաբերյալ արտահայտած խորհրդածություններին միանգամայն ճիշտ մեկնաբանություններ է տվել մեր գործընկեր, թուրքագետ-պատմաբան Մուրադ Բոջոլյանը, «Դեմիրելը պատմական էքսկուրսներ է անում» իր շահեկան հոդվածում: Վերլուծելով վերոհիշյալ հոդվածը, Բոջոլյանը հանգել է հետևյալ եզրակացության.

«Սա մոտ մեկ հարյուրամյակ տևած և երկրի բոլոր բնակիչներին մեկ ազգի մեջ ձուլելու քաղաքականության իրավական արտահայտությունն է: ... Ս. Դեմիրելը որևէ նոր բան չի ասում, այլ, պարզապես վերադառնում է մեկ հարյուրամյակ ետ ու փորձում վերակենդանացնել տխրա-

հռչակ պանօսմանիզմի գաղափարը։ Նույնն է նաև նպատակը, այդ ժամանակ դրված էր ամեն գնով Օսմանյան կայսրության, այսօր էլ Թուրքիայի Հանրապետության տարածքային ամբողջականության պահպանման հարցը»[4]։

Ինչպես վերը նշեցինք «Օսմանիզմի», ինչպես նաև պանթուրքիզմի և պանիսլամիզմի աչքի ընկնող գաղափարախոսներից էր նաև երիտթուրքական հայտնի գործիչ Ջելալ Նուրին (1877-1939)։ Նա եղել է պատմաբան, հրապարակախոս և իրավաբան։ 1908 թ. ընտրվել է մեջլիսի անդամ, որպես Կալիբոլիի պատգամավոր։ Իր ժամանակին բազմաթիվ հրապարակային հոդվածներ է հրատարակել «Le Courier D'orient» (Արևելյան սուրհանդակ), «Le Jeune Turc» (Երիտասարդ թուրք) ֆրանսերեն թերթերում, ինչպես նաև «Ikdam» (Առաջադիմություն), «Ati» (Ապագա), «Ileri» (Առաջ) և այլ զանազան թուրքական թերթերում և հանդեսներում՝ պատմական, գրական, քաղաքական, իրավաբանական բովանդակությամբ։ Հրատարակել է նաև մի շարք մենագրություններ, որոնցից առավել ուշադրության արժանի են 1912-1913 թթ. լույս տեսած նրա «Ittihat-i Islam» (Իսլամի միություն) և «Tarih-i Istikbal» (Պատմություն ապագայի մասին) գրքերը (արաբատառ թուրքերենով)։

Իր աշխատություններում Ջելալ Նուրին Թուրքիայի ոչ-մահմեդական ժողովուրդներից բացահայտորեն պահանջում էր հաշտվել իրենց իրավազուրկ վիճակի հետ և հրաժարվել ազգային ձգտումներից։ Նա ամեն կերպ ձգտում էր համոզել, որ հայերը, արաբները, քրդերը չպետք է պայքարեն իրենց ազատագրության համար, քանի որ Թուրքիայում տիրապետող կարգերը, որոնք հիմնված են մահմեդական կրոնի վրա, ամենաառաջավորն ու իդեալականն են։ Փաստորեն, Թուրքիայում իսկական քաղաքացի էին հռչակվելու միայն թուրքերը, կամ նրանք, ովքեր կթրքանային, կմոռանային սեփական լեզուն և կձուլվեին թուրքերի հետ։ Ջելալ

Նուրին ամեն կերպ գովաբանում էր իսլամի դրությունները, մատնանշելով, որ դրանք միաժամանակ բարոյական օրենսգիրք ու կառավարման ձև են։

Ջելալ Նուրին և Երիտթուրքերի վերոհիշյալ գաղափարախոսները ամեն կերպ փորձում էին պանիսլամիզմը օգտագործել Օսմանյան կայսրության մահմեդական ժողովուրդների վրա իրենց իշխանությունը ամրապնդելու համար։ «Այսօր մահմեդականությունը չափազանց կարևոր ուժ է,—գրում էր Ջելալ Նուրին,—և հետագայում էլ նա ընդունակ է շատ կարևոր դեր խաղալու»։

Պանիսլամիզմի գաղափարախոսությունը ևս զուրկ էր պատմականորեն զարգանալու հեռանկարից։ Թուրքիայի երիտասարդ բուրժուազիան առաջ քաշելով այն, ձգտում էր ինչ-որ ձևով պաշտպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունը։

Ստորև, օսմաներեն բնագրից առաջին անգամ թարգմանաբար ընթերցողին ենք ներկայացնում Ջելալ Նուրիի օսմանիզմի գաղափարախոսության հետ առնչվող երկու աշխատանք «Օսմանիզմի ապագան» գրքից. «Հայկական և քրդական հարցերը» և մի բաց նամակ՝ ուղղված «Ազատամարտ» թերթին, որոնցում լիովին բացահայտվում են նրա հայացքներն ու նկատառումները այդ գաղափարախոսության շուրջ։ Ընթերցողը պարզ կնկատի, թե հանձին Ջելալ Նուրիի, Երիտթուրքերը ինչպիսի երկդիմի՞ և ազգայնամոլական ծրագրեր են ունեցել հայ և քուրդ ժողովուրդների հանդեպ։ Չնայած, որ առանձին տեղերում Ջելալ Նուրին գովաբանում է հայերի վեհանձնությունն ու աշխատասիրությունը, ինչպես նաև մարդկային բարձր արժանիքները, սակայն մյուս կողմից՝ հանդես են գալիս նրա մոլի ազգայնական տեսակետները հայերին օսմանացնելու և թուրքերի հետ ձուլելու խնդրում։

Ռումելիի կորստից հետո օսմանցիներից որպես հիմնական տարր մնացին թուրքերը և արաբները։ Հույներին ընդհանրապես հաշվի չեմ առնում, քանի որ նախորդ գլուխներում ես արդեն բացատրություն էի տվել նրանց ոչ-օսմանցի լինելու մասին։ Այստեղ ես խոսելու եմ միմիայն այն տարրերի մասին, որոնք իրենց զգացումներով կարող են օսմանցի համարվել։ Օսմանյան կայսրությունում հայերից և քրդերից բացի կան նաև մի շարք փոքր ազգություններ, որոնք ոչ մի տեղ մեծամասնություն չեն կազմում և ընհանրապես իրենց ազգի նկատմամբ էլ առանձին հույսեր չեն կապում։ Ուստի ես նրանց մասին առանձին ակնարկություն չեմ անելու։ Միայն որոշ հանգամանքների բերումով գրքիս 3-րդ հատորում խոսելու եմ հրեաների մասին։

Իմ հրատարակած հոդվածներում և գրքիս զանազան գլուխներում նշել էի, որ օսմանիզմը մի ընդհանուր հասարակություն է բոլոր տարրերի հավասար իրավական հիմունքներով։ Անկեղծ ասած, օսմանիզմը ընդունողները օգտվում են ամեն տեսակի իրավունքներից։ Իսկ նրանք, որոնք չեն ընդունում, կարող են միմիայն երկրի ներսում մարդկային և քաղաքացիական իրավունքներից օգտվել, բայց ոչ քաղաքական իրավունքներից։

Օսմանյան հայրենիքի ամենակարևոր տարրերը հանդիսացող թուրքերի և արաբների մասին ես արդեն խոսեցի վերևում։ Փոքր տարրերը բացառվում են։ Այստեղ խոսելու եմ միայն հայերի և քրդերի մասին։ Եթե հույների նման սրանք ևս օսմանիզմի հանդեպ ճշմարիտ զգացում չունենային, ապա ավելորդ կլիներ նրանց մասին ևս խոսելը։ Ես մի քիչ վշտացած եմ հայերից։ Ինչպես որ եղբայրը վրդովվում է եղբոր հանդեպ, այնպես էլ ես հոգեպես վշտացած եմ նրանցից։

Անցած տխուր պատերազմի[5] ընթացքում ես հայերից

առ ավելի օսմանիզմ էի սպասում։ Հայ հեղինակները, ինձ համար արդեն սովորական դարձած ձևով ասելու են. «Ահա մենք էլ մասնակցեցինք պատերազմին. մենք էլ գոհ ենք, էլ ի՞նչ եք ուզում»։ Ո՛չ, այդ այդպես չէ։ Թող օրհնյալ լինի հայ զոհերի հոգիները և անթառամ մնա նրանց հիշատակը։ Այսուհանդերձ, պետք է ասեմ, որ բոլոր այդ պատերազմների և հատկապես պարտությունների ընթացքում հայերի հոգին տակնուվրա եղավ։ Հայերին ջարդող և հայերին կյանք տվող թուրքերը, որպես իշխող տարր մեջտեղից չքացան։ Բուլղարները թուրքերից ավելի նախամեծար դասվեցին։ Այդ պարտությունները իբր տեղի էին ունենում Աստծո հրամանով, որպեսզի զգաստացվեին ջարդարար թուրքերը։ «Այդ պարտությունները նրանց համար պատիժ էին։ Նախախնամությունը հայերի արժանի վրեժն է առնում։ Հայ ժողովուրդը չունչ կքաշի այն բարեբաստիկ րոպեին, երբ խաչը կրկին կդրվի Այա Սոֆիա եկեղեցու վրա»։ Ահա այս զգացումները տիրեցին հայ մտավորականներին։ Իսկ Ռոդոսի դեպքի[6] ժամանակ մի խումբ պարզամիտ հայեր իրենց անխոհեմությամբ, նույնիսկ բացահայտորեն արտահայտեցին իրենց այս զգացումները։ Ես կցանկանայի, որ հայերը լինեն ավելի հաստատամիտ, առավել արդարադատ։ Ես, իմ հրատարակություններում միշտ էլ պաշտպանել եմ հայերին, առաջարկելով, որ նրանք մոռանան նախկին միապետի[7] օրոք տեղի ունեցած բռնությունները, իմանան իրենց շահերը, և ընդհանրապես կցանկանայի, որ վերջ տրվեին անհայտ պատճառներով հայերի նկատմամբ թուրքերի տածած թշնամանքին։ Ես կարծում եմ, որ իշխողը թուրք կլինի, թե ոչ, հայերի համար դա միևնույն է։ Այսուհանդերձ, հայերը պետք է ըմբռնեն, որ իրենց համար թուրքերից առավել մեղմ իշխող չի կարող գոյություն ունենալ։

Այսօր, Աստված մի արասցե, եթե արևելյան վիլայեթները Ռուսաստանի կողմից նվաճվեն և այդ վայրերը ուղարկվեն

[ռուսա] հպատակները, ապա, նորից մահմեդական տարրը փոքրամասնություն չի կարող դառնալ[8]։ Հետևաբար, հայերը ստիպված են մահմեդականների հետ խառնվելու (միաձուլվելու–Ա. Փ.)։ Հայերը թուրքերի և քրդերի հետ ապրելու են հավիտենապես և այդ կապակցությամբ էլ կազմելու են համաձայնության մի ծրագիր։ Անհրաժեշտ է վերջ տալ ատելության զգացումներին և անկեղծ ու մտերմական կապերի մեջ մտնել։ Եվ դուք կտեսնեք, որ այդ ժամանակ ամենակարևոր հարցերը լուծվելու են հեշտությամբ։

Ես իմ հայ եղբայրների մոտ երկու միտք, երկու զգացում եմ տեսնում։ Մեկը՝ բացահայտ և պաշտոնական, իսկ մյուսը՝ գաղտնի և ոչ պաշտոնական։ Այս երկրորդից պետք է խուսափեն։ Մենք պետք է, որ կատարելապես մոռանանք հին հաշիվները, քանի որ դրանցով ոչ մի արդյունքի չենք կարող հասնել։ Դրանք այլևս անցել են պատմության գիրկը։ Այդ կոտորածների պատճառները[9], եթե նույնիսկ բացահայտենք էլ, անցյալը չենք կարող վերականգնել։ Հայերի խելքը պետք է, որ հաղթահարի իրենց զգացումներին։

Շահրիկյան[10] էֆենդին իմ «Օսմանյան կայսրության անկումը» գրքի մասին Ատոմ կեղծանունով մի ընդարձակ գրախոսական է գրել, որտեղ թեև գովաբանել է իմ անձը, սակայն սուր քննադատության է ենթարկել իմ մտքերը։ Ես կարդացի թուրքերենի թարգմանված այդ գրախոսականը[11]։ Բարեբախտաբար, վերևում արտահայտված իմ մտքերը նույնությամբ գտա այդ գրախոսականի մեջ։ Միայն թե, այն հակասությունները, որոնք նա բացահայտել է իմ աշխատության մեջ՝ հայության և քրիստոնյաների պաշտպանության խնդրում, իհարկե, ծիծաղելի է։ Գրախոսականում տեղ գտած քննադատությունը, եթե գրված լիներ ոչ թե այդ մտքերի, այլ զուտ պատմական հողի վրա, իհարկե, ես ցույց կտայի դրա երևակայական լինելը։ Ես անհրաժեշտություն չեմ գտնում խոսելու այդ մասին։ Թող նա պնդի, որ ինքը սոցիալիստ է։ Պատմական հարցերում, նրա ասածներից ոչ մեկը չի կարող վեճի առարկա դառնալ։ Ինձ մոտ հայերին պաշտպանելը անհեթեթություն է, քանի որ ես ինքս արդեն պաշտպանում եմ նրանց։ Եվ Ատոմ էֆենդին պետք է լավ իմանա, որ մեկ Ջելալ Նուրիի կամ էլ մեկ Ալի Վելիի[12] հովանավորությունը ավելի արդյունավետ կլինի, քան որևէ Հակոբի կամ Գրիգորի ներդրած ջանքերը։ Հայերը պետք է հեռու կանգնեն վերոհիշյալ մտքից և զգացումից. եվ այդ ժամանակ ես նրանց ավելի բարձր կդասեմ։ Թող վստահ լինեն, որ ես այս տողերը գրում եմ հաստատուն մտքերով, այլ ոչ թե երկերեսանիությամբ։ Նրանք խորապես սխալված կլինեն, եթե կասկածեն իմ մտքերի վրա, և իմ խաղացած դերին տան այլ իմաստ։ Ինչպես որ հույների հանդեպ բացահայտորեն գրել եմ իմ խեթ մտքերը, այնպես էլ նույնը կարող էի անել հայերի նկատմամբ[13]։

Հայերը կարող են իսկական, անկեղծ և էապես օսմանցի դառնալ։ Նրանց չահավետությունը օսմանցիության մեջ է։ Այսուհանդերձ, պետք է ասել, որ այն ժամանակ, երբ մեր պետությունը պատերազմական դրության մեջ էր գտնվում և գլուխ քորելու ժամանակ չուներ, հայերի բարձրացրած խռովությունը Արևելքում չէր կարելի օսմանցիության հետ հաշտեցնել։ Եթե հայերը ճշմարիտ պահանջ էլ ունենային, ապա այդպիսի վտանգավոր ոգեներին պետք է լուռ մնային։ Բացի դա, հայերի բորբոքած այդ շարժումներից ես ոչ մի օգուտ չեմ տեսնում։ Ի՞նչ կարող է բխել դրանցից։ Այդ սխալ ընթացքով ի՞նչ կարելի է շահել։

Հայերը չափազանց աշխատասեր և իրենց աշխատանքում համարձակ, նախաձեռնող, շատ լավ ժողովուրդ են, և օսմանյան ժողովրդի համար շատ անհրաժեշտ մի տարր։ Տնտեսության ասպարեզում թուրքերի հետամնացությունը կարելի է զարգացնել հայերի առաջադիմությամբ։ Այնպես, որ այս երկու տարրերը կարող են լրացնել իրար թերի կող-

մերը: Հետևաբար, օսմանցիության և թրքության տեսակետից հայերի զարգացումը չափազանց անհրաժեշտություն է: Նման դաղափարները արտահայտելու ժամանակ պետք է մեր մտքերը հաղթահարեն մեր զգացումներին: Մյուս կողմից, թուրքերի առաջադիմությունն էլ հայերի համար կյանքի խնդիր է: Թուրքերի հետ համեմատած հայերը փոքր բաժնետերեր են: Մեծ բաժնետերի գործը պետք է լավ գնա, որ փոքրը շահի:

Դժբախտաբար, երբեմն մի շարք հնարամիտ հայեր, չկարողանալով մարսել Ամերիկայում և, հատկապես, Ռուսաստանում ստացած իրենց ուսումը, սկսում են մոլորեցնել ժողովուրդին: Այսուհանդերձ, հույսով եմ, որ խելամիտ հայերը այսուհետև կհասկանան այս ճշմարտությունը և կաշխատեն ուղիղ ճանապարհի վրա կանգնեցնել ժողովուրդին:

Բոլոր այս թշնամական ակնարկությունները ուղղելով հայերին, չեմ կարող մեզ էլ դասել անմեղների շարքը, քավ լիցի: Հայերով և քրդերով բնակեցված վիլայեթներում անհրաժեշտ է ոչ թե ինքնավարություն, այլ տեղական վարչությունից ավել մի ընդհանուր «վարչակարգի» ստեղծում: Դեռևս, ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ այդ վայրերը անորոշաբար թողնված են երեսի վրա: Մենք խուսափում ենք բարեփոխությունից և բավարարվում ենք վերջին լոկ սպեղանի քսելով: Մինչդեռ, մենք պարտավոր ենք ապահովել հայրենիքի բնակչության անդորրն ու երջանկությունը[14], և մեր հեռավոր վիլայեթները Ռուսաստանի նկրտումներից ազատելու համար ստիպված ենք տվյալ վայրերում ստեղծելու ընդարձակ մի վարչակարգ: Եվ, եթե ստեղծվի մի այնպիսի վարչակարգ, որը կարողանա ապահովել արդարությունն ու խաղաղությունը, դյուրացնի մշակույթի և առևտրի զարգացումը, ես հաստատ համոզված եմ, որ հայերը 25-30 տարի ապահովված կլինեն:

Արևելյան վիլայեթներին չի կարելի ինքնավարություն տալ: Եթե, նույնիսկ, տրվի էլ, դրանից առավելապես տու-

ժելու են փոքրամասնություն կազմող հայերը: Մինչդեռ, մի ապահով վարչակարգով հայերը կարող են վերելք ապրել թե՛ առևտրի և թե՛ ազգային զարգացման ասպարեզում և ապագայում ձեռք բերել քաղաքացիական ավելի լայն իրավունքներ: Անհրաժեշտ է, որ հայ ժողովրդի իրավունքները օրինականացվեն. այդ դեպքում հայերը հիրավի օսմանցի կդառնան: Լեհերի՝ հաբսբուրգներին ցուցաբերած հավատարմության չափ, եթե հայերն էլ օսմանցիներին հնազանդվեն, երկու կողմերն էլ հանգիստ կյանք կունենան: **Բոլոր դեպքերում նրանց (հայերի) հարցը կարելի է շտապ լուծել՝ բոլորին կոտորելով** (ընդգծումը մերն է—Ա. Փ.):

Այդ դեպքում ժամանակի խնայողություն էլ կլինի: Համենայնդեպս, ես համաձայնության գալու կողմնակից եմ և ես չեմ կարծում, որ մեր միջև չլուծվող հարցեր լինեն:

Այժմ անդրադառնանք քրդերին: Իմ մտքովս անգամ չի անցնում առարկություն անել քուրդ ազգի դեմ: Սակայն ես կտրականապես դեմ եմ քրդերին օտարացնելու մտքի հետ: Քրդությունը մի երկրորդական ազգություն է և կարող է իր գոյությունը պահպանել միայն որպես երկրորդ ազգություն: Այնպես, ինչպես, օրինակ Ֆրանսիայում պահպանվել են պասքերն ու մյուս գավառացի ազգությունները, Լեհաստանում՝ լիտվացիները կամ Մեծն Բրիտանիայում՝ շոտլանդացի ազգը: Սրանք բոլորն էլ իրենց տեղն ունեն մի ընդհանուր ազգություն հանդիսացող ֆրանսացիության, լեհության և ամգլիականության մեջ: Եթե նրանք հեռանան այդ ընդհանուր ազգությունից, ապա ամեն ինչ կկորցնեն: Մտածեցե՛ք, ի՞նչ կարող է դառնալ մի պասք, եթե դեմ լինի և չընդունի ֆրանսացիությունը: Հետևաբար, մեր քրդերն էլ պետք է լավ հասկանան, որ երկրորդական ազգերը կարող են գոյատևել միմիայն մեծ ազգերի միության մեջ: Քրդերը, ինչպես նաև չերքեզները, լազերը և մյուս փոքր ազգությունները իրենց ուրույն տեղը կարող են ունենալ միմիայն թուրքական

մեծ ընտանիքի մեջ։ Եվ այդ տեղը նրանց համար պատվաբեր է։ Ես առաջարկում եմ, որպեսզի քրդերը իրենց ազգության խնդրում չափազանցությունների մեջ չընկնեն։ Եթե դրանից նրանց համար մի օգուտ լիներ, ապա բոլոր ազգությունների կողմնակիցը հանդիսացող այս հեղինակը (նկատի ունի իր անձը_Ա. Փ.) ևս այդ խնդրում խորհրդածություններ չէր անի։ Ի վերջո քրդությունը առաջադիմելու հեռանկար չունի[15]։ Օսմանյան կայսրությունում նույն վիճակում են գտնվում նաև չերքեզները։ Նույնիսկ, եթե համեմատելու լինենք, թուրքերը թվով այդքան շատ լինելով հանդերձ, դեռևս, ինչպես որ հարկն է չեն կարողանում իրենց ազդեցությունը կուռ ամբողջականություն դարձնել։ Ուր մնաց, որ քրդերը կարողանային այդ անել։ Թրքությունը լքելով, քրդության երազներով տարվելը նշանակում է իրենց ձեռքում եղած հնարավորությունն էլ բաց թողնել։ «Ալբաներեն լեզվով եմ ուսում առնելու» ասող «մեծ գիտակներին» էլ տեսանք, թե ինչպես նրանք անընդունակություն հանդես բերեցին նաև մյուս բոլոր լեզուներում։ Կցանկանայինք, որ մեր քուրդ եղբայրները խրատ վերցնեին ալբանացիներից և իրենց երկրորդականությունը, ազգային զարգացումը տեսնեին ոչ թե այլ գանազան մտքերի մեջ, այլ թրքության հետ ձեռք-ձեռքի տված բարեկամության մեջ։ Ես չեմ խոսում քրդերի քաղաքական, հասարակական, վարչական պահանջների մասին, քանի որ ես նրանց համարում եմ թուրքեր[16]։ Մեզ հետ առնչվող ինչ հարցեր որ կան, բնականաբար և հարկադրաբար բոլորն էլ վերաբերում են նաև նրանց։ Մի խոսքով, ես իմ մտքերը ավելի չեմ խորացնում, քանի որ թրքության ու մահմեդականության միասնականության մեջ, ես թուրքի և քրդի միջև տարբերություն չեմ դնում։ Կրկնում եմ, ֆրանսիացու հետ համեմատած՝ պասքը, արաբի հետ՝ բերբերը, անգլիացու հետ կանադացու համեմատությունը նույնն է, ինչ թուրքի հետ՝ քրդինը[17]։

ԲԱՑ ՆԱՄԱԿ «ԱԶԱՏԱՄԱՐՏ»ԻՆ

Հարգելի գործընկեր,

Ձեր թերթում ինձ ուղղված բաց նամակը կարդացի խորը ակնածանքով։ Ձեր թույլտվությամբ կուզեի պատասխանել այդ նամակի մի քանի կետերին։

Այնտեղ խոսում եք իմ կրետացի լինելու մասին և ինձ ամբաստանում, հատկապես, այդ հողի վրա, ասելով, որ «Ձեզ մոտ ի հայտ են գալիս անցյալում ստեղծված մի քաղաքակրթության ազդեցությունը»։ Ես խորապես շնորհակալ եմ այս մեծ գնահատանքի համար։ Ծնվել եմ Կրետե կղզում։ Հայրս էլ ծագումով կրետացի է։ Քաղաքակրթության և այլ պարագաները զուգակցելով, եթե Ձեր ակնարկությունը իմ հույն լինելու մասին է, ապա այդ ուղղությամբ կարող եմ ասել, որ մեր սերնդի մեջ հունական ոչ մի կաթիլ արյուն չկա։

Այնուհանդերձ, մի կողմ թողնենք այս «նուրբ» սուբեկտիվ մտածությունները։ Ես հայերի հանդեպ միշտ խորը համակրանք եմ ունեցել և միշտ նրանց նկատի եմ ունեցել որպես աշխատասեր, նախաձեռնող, կարգապահ, հետևողական և չափազանց ընդունակ մի ժողովրդի։ Եթե չեմ սխալվում, «Le Jeune Turc» (Երիտթուրքեր) թերթում աշխատակցելու ընթացքում մոտ 20-ի հասնող հոդվածներ գրելով, բացահայտել եմ իմ տեսակետները և ցույց տվել, թե հայ ազգը ինչպիսի կարևոր տարր է Օսմանյան պաշտոնական ազգությունների շարքում։ Հայկական ջարդերի համար ամենաշատ վշտացողը ես եղա[18]։ Այս մասին, նույնիսկ, կարող է վկայել «Ազատամարտ»ի հավաքածուն։

Հետևաբար, իրավացի չեք Ձեր այն հարցադրման մեջ, երբ ասում եք, որ մենք իբր հոգատար չենք եղել ձեր հանդեպ։

Դուք կատարյալ իրավացի եք, երբ նշում եք հայերեն լեզվին չտիրապետելու մեր թերությունը։ Այնուհանդերձ,

մեր այդ թերության մեջ ինչ որ չափով մխիթարվելու դրդապատճառներ կան։ Հայերը այնքա՞ն լավ են տիրապետում թուրքերենին, որ...։

Մենք հայերին չենք մեկուսացրել մեզանից։ 1327 (1909) թ. «Միություն և առաջադիմություն» կուսակցության Սալոնիկի խորհրդաժողովին ուղղված իմ գրության մեջ ներկայացրել էի իմ տեսակետները[19]։

Օսմանցիությունը մի պաշտոնական ազգություն է։ Թրքությունը, հայությունը ցկյանս յուրահատուկ ազգություններ են։ Օսմանցիության գոյատևումը պետք է փնտռել այս յուրահատուկ ազգերի հարատևման մեջ։ Առանց մեծամտության կարող եմ ասել, որ թուրքերի մեջ ամենաշատ «արմենոֆիլ» գրողը ես եմ։ Եվ այս համակրանքն էլ կեղծ ու շինծու չէ։ Դրա համար դրդապատճառներ կան։ Դրանք բխում են հայ ազգի վեհանձն բնավորությունից։

Գալով այն մասին, որ թուրքական մամուլը բանավեճի մեջ չի մտնում ձեզ «հետաքրքրող հարցի շուրջ», իրավացի եք։ Այդ պարագան գրավել է նաև իմ ուշադրությունը։ Ինչ կարող եմ ասել, դեռևս սաղմնային վիճակում գտնվող մի ազգ ենք։ Ձեր ասելով, հայ երիտասարդությունը կարդում է հիմնականում մի շարք իմ կարևոր ստեղծագործությունները։ Ես այդպես էլ գիտեի։ Դա ապացույցն է այն բանի, որ հայ երիտասարդները առավել ողջամիտ են և այդ երևույթը արժանի է գովասանքի։

Ես և իմ նման մտածողները, որոնք կազմում են նոր պետության հիմքը, մեծ ապասելիքներ ունենք հայերի ծառայություններից։

Ձեր հաղվածից պարզվում է, որ մինչ այսօր իբր մենք չենք կարողացել հասկանալ ձեզ։ Կխնդրեի, որ ձեր մտքերը լավ կշռադատեիք և այդ առթիվ պրպտեիք թուրք առաջավոր մարդկանց միտքը՝ լինի գրականագետ, բանաստեղծ, գիտնական, քաղաքագետ, և վստահ եղեք, որ նրանք էլ ինձ

նման ձեզ են նայում այն նույն աչքերով։

Այնպես, որ այդ ասպարեզում մեզ մի մեղադրեք։ Եթե ուզում եք ինչ-որ բանում քննադատել մեզ, ապա այն ասեք այլ ուղղությամբ։ Թուրքերի մի շարք վատ սովորությունները բնատուր են և գալիս են անցյալի վնասակար յուրահատկություններից։ Մենք յուրայինների հաղեպ ևս դժություն ցուցաբերելու հատկությունը չունենք։ Թուրքերը, ոչ միայն հայերի կամ ուրիշների, այլ միմյանց նկատմամբ էլ դաժանություն են ցուցաբերում։ Կարող եմ ասել, որ թուրքերի և հայերի միատեղ, համերաշխ աշխատելը կբերի նյութական շահույթ։ Եթե հայերը կարողանան թուրքերի հետ լավ վարվել, ապա կազատվեն լքված մի ժողովուրդ լինելուց։ Նմանապես, եթե թուրքերն էլ կարողանան շահել հայերի աջակցությունը, ապա առավել կհզորանան։

Դուք խոսելով իսլամի, համաիսլամիզմի քաղաքականության մասին, բավականին կշտամբում եք ինձ։ Մինչդեռ, այս հարցում իրավացի չեք։ այս երկրում ավանդապատումների, առասպելների և մոտիապաշտության դեմ ամենաշատ պայքարողներից մեկը, կարող եմ ասել, որ ես եմ եղել։ Արդար և օբյեկտիվ լինելու խնդրում շատ եմ քարոզել և այժմ էլ շարունակում եմ այդ ուղղությամբ աշխատել։ Համաիսլամիզմի հարցում դուք սխալվում եք։ Իսլամը լոկ կրոն չէ, այն քրիստոնեության հետ չհամեմատվող քաղաքական մի համադաշնակցություն է։ Հետևաբար, մի նպատակային հասարակայնություն է։ Իսլամը լոկ կրոն չէ, այլ դրանից բացի ինչ-որ այլ բան է իր ավանդույթներով, կղերականությամբ՝ զանազան սերունդներից կազմված մի ամբողջություն։ Այս հարցում այստեղ չեմ խորասուզվելու, քանի որ հնարավոր էլ չէ այդ բոլորը ամփոփել 400 տողանոց մի նամակում։ Իմ միտքը առավել պարզ լուսաբանվելու է հրատարակության պատրաստվող «Իսլամի Միությունը» վերնագիրը կրող հատորում։ Համաիսլամիզմը միայն Օսմանյան

պետությամբ չի սահմանափակվում, վստահ եղեք, որ իմ նպատակը այլ է։ Մի կարծեք, որ Օսմանյան պետությունը կազմված է միմիայն թուրքերից և մահմեդականներից, այն կարող է հարատևել հայերի հետ ևս (իհարկե, մյուս տարբերին ես չեմ անտեսում)։

Ինչ վերաբերում է քրիստոնյաներին, ապա դա մի այլ խնդիր է։ Այն հարձակումները, որոնք ուղղված են մեզ հանդեպ, բնականաբար, վերաբերում են նաև ինձ։ Ինչ-որ հարցում եթե դյուրահավատ եք, մի անգամ ևս կարդացեք Բուլղարիայի թագավոր Ֆերդինանտի զինվորին ուղղված ուղերձը։ Այդ մասին հասարակական գործերի նախարար Բիսարիա էֆենդին ևս ինձ քննադատելով, «Le Jeune Turc»ի մեջ գրել էր այդ մասին։ Այն ժամանակ իմ գրած հոդվածին հիշյալը ոչ մի արձագանք չտվեց։ Եթե ուզում եք, ձեզ հետ ևս կարող ենք բանավեճի մեջ մտնել այդ ասպարեզում, բայց ի՞նչ օգուտ։

Այն, ինչ որ հայտնի է, ապացուցման կարիքը չունի։ Այդ մի շարք քրիստոնյաների թվում հայերը չեն ընդգրկվում։ Եթե կա մի եկեղեցի, որը տուժել է մահմեդականների ձեռքից, ապա դա էլ Սուրբ Գրիգոր եկեղեցին է[20]։ Ձեր ընտրած սոցիալիզմի գաղափարները մեծ մասամբ համընկնում են մահմեդականության տեսակետների հետ։

Դուք կարդացեք մոտ օրերս հրապարակվելիք իմ մեկ ստեղծագործությունը, և կհամոզվեք դրանում։ Ընդհանրապես, հավատք ընծայեք հայ ժողովուրդին և ձեր թերթին վերաբերող իմ եզրակացություններին[21]։

Դ. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1918 թ. մարտի 8-ին, սուլթան Մեհմեդ 6-րդ Վահիդ-էդդինի հրամանագրով, Թուրքիան Առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներքաշելու, հայերի զանգվածային տեղահանության և կոտորածի համար, երիտթուրքական կառավարության ղեկավարներն ու «Միություն և առաջադիմություն» (Իթթիհատ վե թերաքքի) կուսակցության պարագլուխները հանձնվեցին Կ. Պոլսո ռազմական արտակարգ ատյանի քննության։ Դատաքննության վերջում, հուլիսի 5-ի դատավճռով հեռակա կարգով մահավճիռ կայացվեց հայերի ցեղասպանության անմիջական հղացողների՝ Թալեաթի, Էնվերի, Ջեմալի, Նազիմի, Բեհաէդդին Շաքիրի և այլոց նկատմամբ։

Ահա այս որոշումից կարճ ժամանակ անց, փախուստի մեջ գտնվող Թալեաթն ու Ջեմալը նախաձեռնեցին գրել իրենց անցած քաղաքական կյանքի հուշագրությունները։ Երկու հեղինակներն էլ մեղանչելով, կաշվից դուրս եկան ապացուցելու, որ իրենք մեղավոր ու հանցավոր չեն եղել հայության ընաջնջման խնդրում, որ հայերն են բռնություն գործադրել Թուրքերի վրա, որ 1919 թ. իրենց և ընկերների հանդեպ արձակված մահվան վճիռը անտեղի էր, և այլն։

Ստորև մենք կանգ կառնենք Ջեմալ փաշայի հուշագրությունում «Հայկական Հարցը» խորագրի տակ բերված գլխի առանձին հարցերին։

Ջեմալ փաշան, նախ հակաճառելով հայտնի ռուս գիտնական, իրավաբան և պատմաբան՝ Անդրե Մանդելշտամին, աշխատել է ցույց տալ, որ հայերը Օսմանյան կայսրությունում տևապես ապրել են խաղաղ և բավական պայմաններում, վայելելով ընդարձակ արտոնություններ։ Այս կապակցությամբ նա բավականին ուռճացրել է 1863 թ. հայերին

չնորհված Ազգային Սահմանադրության նշանակությունը և ձգտել է մեղմացնել Երիտթուրքերի կատարած հանցագործությունը հայերին տարագրելու և բնաջնջելու հարցում: Հատկապես, ջանացել է արդարացնել իրեն ու իր գործընկերներին և հայկական 1915 թ. ողբերգության դրդապատճառները վերագրել է ցարական Ռուսաստանի վարած քաղաքականությանը: Այսպես.

«Քրդերի ստրկացուցիչ լծի փոխարեն, նրանք [հայերը] հնարավորություն ստացան լավագույն հարաբերություններ ունենալ Թուրքերի և Թուրքական կառավարության հետ...: Օսմանյան կառավարությունը, առանց դրսի որևէ ճնշման, սահմանադրություն չնորհեց հայերին...: Այդ իրադարձությունը պետք է, որ սկիզբը համարվեր մի նոր երջանիկ ժամանակաշրջանի: Մինչդեռ, ռուսները հայկական գործերի մեջ խառնվելու համար օգտագործեցին այդ սահմանադրությունը: Հայոց պատրիարք Ներսես էֆենդին, որ Սան Ստեֆանո գնաց հայերի անկախության հարցում խնդրելու ցարի հովանավորությունը, կարող է համարվել մի՛ակ պատասխանատուն այն բանի համար, որ հայերը վերջնականապես զրկվեցին «հավատարիմ ազգի» («Միլլեթի սաղբքա») իրենց անվանումից»[1]:

Անհրաժեշտ է նշել, որ Ներսես Պատրիարքը ճարահատյալ Սան Ստեֆանո էր մեկնել ոչ թե անկախություն հայցելու, այլ ինչ որ չափով վերջ տալու հայերի հանդեպ կատարվող ճնշումներին, հարատահարությանը և խտրականությանը: Ի միջի այլոց արևմտահայերը տարիներ շարունակ դիմել են սուլթանական կառավարությանը և աղերսել թեթևացնելու իրենց վիճակը, բայց դիմումներն ու աղերսանքը որևէ արդյունք չեն տվել: Այնպես, որ տվյալ ժամանակ կյանքի ու պատվի ամենաբիրտ ոտնահարումները, ունեցվածքի հափշտակումը, կրոնաբարոյական անարգանքը, և վերջապես կոտորածի սարսափը հայ բնակչության հասցրել էր ծայր

աստիճան հուսահատության: Հատկանշական է, որ 19-րդ դարի Թանզիմաթի (բարենորոգումների) շրջանի սուլթանական կառավարության ազգային փոքրամասնություններին վերաբերող միջոցառումներից ոչ մեկը չէր կիրառվում կյանքում: Ոչ մի ժամանակ հայը չէր կարող իր դեմ կատարված չարաշահումների համար բողոքել կառավարությանը, քանի որ հանցագործության առկայությունը փաստելու համար նրան հարկավոր էր երկու մահմեդականի վկայությունը: Թուրքերի կիրառած դաժանությունը պատահական չէր, այլ բնահատուկ և տևական: Նրանց իրավական կառուցվածքը իր էությամբ ծայր աստիճան անարդար էր քրիստոնյա հպատակների հանդեպ: Մահմեդականը կարող էր առևանգել, թալանել, սպանել քրիստոնյային և ապահովաբար մնալ անպատիժ:

1870 թվականին, այն ժամանակ, երբ Հայկական հարցը դեռևս չէր էլ մտել իր առավել ճգնաժամային հունի մեջ, Օսմանյան կայսրության ներքին իրավիճակին լավատեղյակ, պոլսահայ մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանը գրել է.

«Կ՚ըսուի թէ Գարատաղի ժողովրդեան մէջ աւանդութիւն կայ, թէ Աստուած աշխարհը ստեղծած ժամանակ՝ լեռները պարկի մը մէջ լեցուցած՝ աշխարհի ամէն կողմը կցանէ եղեր, հանկարծ պարկին յատակը պատռելով՝ մէջը մնացած լեռներուն ամէնն ալ Գարատաղի երկրին վրա թափեր են: Մենք ալ կ՚ըսենք, թէ արդյո՞ք նախախնամութիւնն Ադամ նախահօր մեղացն ի պատիժ աշխարհի վրայ, ցաւերն ու վշտերը ցանած ժամանակ պարկին յատակը պատռելով՝ մեծ մասն Հայաստանի վրա թափեր է...: Նախախնամութիւնը պարկին պատռելը տեսնելով՝ կ՚երեւի որ զայն նորէն կարել տուեր ու թափածները ժողովելու համար Հայաստան իջեր է, բայց թափած դժբախտութիւնները ժողովելու տեղ՝ սխալմամբ խաղաղութիւն, երջանկութիւն, պատիւ ու կեանք ժողովեր, պարկին մէջ լեցուցեր, առեր քալեր է»[2]:

Ջավեշտական է, բայց ցավալի իրականություն։

Ինչ վերաբերում է Հայոց Ազգային Սահմանադրությանը, բնական է, որ այդ մասին շատ է խոսվել թե՛ իր ժամանակին, և թե՛ հետագա հայ պատմաբանների երկերում։ Հակառակ Ջեմալ փաշայի պնդումներին, Ազգային Սահմանադրությունը էական փոփոխություններ չմտցրեց գոյություն ունեցող հարկերի անարդար գանձման, կրոնական խտրականության, ազգային ճնշման և, ընդհանրապես, Թուրքերի և քրդերի կողմից գործադրվող զանազան բռնությունների վերացման խնդրում։

Տեղին ենք համարում շարունակել Հակոբ Պարոնյանի վերևում բերված խոսքը, ուր իր դրչի սուր ծայրով խոցում է նաև տվյալ «սահմանադրությունը».

«Զմեղադրենք նախախնամությունը, որովհետև այն ատենները սահմանադրություն չկար և խումաշներու կարեւորություն չէր տրուեր. ինքգինքնիս մեղադրենք, որ սահմանադրություն ունինք և դարձյալ չկրցինք քիւրտերու բարբարոսութենէն խալսիլ (ազատվիլ-Ա. Փ.)»[3]։

«Հայկական հարցը,-շարունակում է Ջեմալ փաշան,-առավել սրվեց 1894 և 1896 թթ., այն ժամանակ, երբ ամենուրեք ապստամբություններ սկսվեցին հայկական նահանգներում։ Հայկական խռովությունները այն աստիճան թշնամանք սերմանեցին մահմեդականների և քրիստոնյաների միջև, որ համերաշխ ապրելով հանդերձ, սկսեցին հարձակվել իրար վրա և իրենց արյունով ներկել Անատոլիայի խաղաղ հովիտները, և նույնիսկ, Կ. Պոլսի փողոցները...։ Այդ տարիների արյունալի դեպքերի ժամանակ Թուրքերը անբարյացակամ վերաբերմունք չունեցան հայերի հանդեպ։ Ամենուրեք Թուրքերը ձգտում էին հովանավորել հայերին...»[4]։

Ջեմալ փաշայի այս միտքն էլ չի համապատասխանում իրականությանը։ Ճշմարտությունը կայանում է նրանում, որ, Բեռլինի վեհաժողովում, երբ Հայկական հարցը դարձավ

միջազգային դիվանագիտության հարց, հայ ժողովուրդի վիճակը առավել վատթարացավ։ Սուլթանական կառավարությունը սկսեց իրագործել հայաշատ նահանգներում հայերին նոսրացնելու իր նենգ քաղաքականությունը։ Սուլթան Աբդուլ Համիդը նախաձեռնեց իրագործել Արևմտյան Հայաստանը իր վաղեմի բնակչությունից դատարկելու հանցագործ ծրագիրը։ Հայերը ենթարկվեցին ուժեղ հալածանքների և ֆիզիկական ոչնչացման։

«Կայսրությունը կառավարելու իմ տեսակետից ելնելով,-շարունակում է Ջեմալ փաշան,-ես միշտ դատապարտել եմ ժողովրդական զանգվածները կոտորելու միջոցով հեղափոխությունը ճնշելու ձևը։ Այդպիսի վարվելակերպը անուղղելի վնաս է հասցնում պետությանը և նրա պատմության էջերում թողնում արյունալի հետքեր»[5]։

Այնուհետև Ջեմալ փաշան նշում է, որ ինքը և Երիտթուրքերը խստագույն կերպով դատապարտում էին 1894-1896 թթ. իրադարձությունները, այն համարելով Աբդուլ Համիդի քաղաքականության ամենամեծ սխալը, որ այդ քաղաքականությունը վնաս է հասցնում ոչ միայն Թուրքիային, այլև ամբողջ իսլամին։ Ջեմալ փաշայի այս միտքը, իհարկե, մարդկային է և այնտեղ կան ճշմարտության հատիկներ։ Իրոք, որ նրանք աշխատում էին ոչ Թուրք ժողովուրդներին ներշնչել այն միտքը, որ սահմանադրության վերահաստատումով կվերանա ազգային խտրականությունը և բոլոր հպատակները հավասար կլինեն օրենքի առջև։ Ամբողջ դժբախտությունը կայանում է նրանում, որ 1908 թ. հունիսի 24-ին իշխանության գլուխ անցնելուց հետո, Երիտթուրքերը ոչ միայն մոռացան մինչ այդ իրենց տված խոստումները, այլ դարձան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման բացահայտ թշնամիներ։ Նրանք ամբողջապես որդեգրեցին Աբդուլ Համիդի արյունոտ քաղաքականությունը, նույնիսկ, իրենց դաժանությամբ գերազանցելով նրան։ Ազգային հարցը

լուծելու համար նրանք ընտրեցին ազգերին ոչնչացնելու ճանապարհը։

Ջեմալ փաշան կանգ է առել նաև 1909 թվականին Ադանայի վիլայեթում տեղի ունեցած ապրիլյան կոտորածի վրա։ Այդ ջարդերի պատասխանատվությունը ամբողջապես նա բարդել է Հնչակյան կուսակցության անդամ Մուշեղ եպիսկոպոսի և Ադանայի նահանգապետ Ջեվադ բեյի վրա։

«Ես անձամբ համոզված եմ, որ այդ արյունալի դեպքերի գլխավոր մեղավորը մոնսինյոր Մուշեղն է, բայց պատահածի համար պատասխանատվությունը հավասարապես ընկնում է նաև նահանգապետի վրա, քանի որ նա պետք է հասկանար, թե ինչպիսի վտանգ է ներկայացնում այդ մարդը և միջոցներ ձեռնարկեր նրան վնասազերծելու խնդրում»[6]։

Այստեղ ևս դիտումնավոր կերպով խեղաթյուրվել են իրական փաստերը։ Այս հարցում ոչ միայն Ջեմալ փաշան, այլև մյուս պետական գործիչները, ինչպես նաև հետագա թուրք պատմաբանները կասկածի տակ առնելով ականատեսի ովյալները, աշխատել են ամեն կերպ թաքցնել Երիտթուրքերի կատարած ոճրագործությունները։

Փաստերը բերում են այն եզրակացության, որ Ադանայի նահանգում կազմակերպված ջարդերը նախօրոք պատրաստված և հրահրված էին Երիտթուրքերի կուսակցության կողմից, որ հայերը ոչ մի մեղք չունեին, և հայկական ապստամբության մասին նրանց հորինած հեքիաթը լոկ պատրանք էր։

Ադանայի ողբերգական դեպքերի ժամանակակից, Հալեպում հրատարակվող «Ալ Թագատոմ» օրաթերթի խմբագիր՝ Շուքրի Քնեյդէրը, իր թերթի 26/1909 թվին մեջ «Ատանայի ջարդերուն գլխաւոր պատճառները» խորագրյալ հոդվածի վերջում տվել է հետևյալ եզրակացությունը.

«Եզրակացնելով, կը հաստատենք, որ Ատանայի թուրքերուն մօտ գոյութիւն ունէր արիւնահեղութիւն պատճառելու նախատրամադրուածութիւն եւ, ուրեմն բաւական էր

փոքր կայծ մը տալ, որպէսզի տեղի ունենային համընդհանուր ջարդեր։ Իսկ կառավարութիւնը ո՛չ միայն չճնշեց ու չկասեցուց այդ ըմբոստութիւնն ու ջարդերը, այլեւ աւելի բորբոքեց անասնական այդ կիրքերը և արդիւնքը եղաւ այն, որ կոտորածները ստացան ավելի համատարած բնոյթ...»[7]։

Առաջին համաշխարհային պատերազմի նախորդած դեպքերի նկարագրության ընթացքում Ջեմալ փաշան կանգ է առել նաև ցարական կառավարության կողմից ներկայացված Արևմտյան Հայաստանին վերաբերող բարենորոգումների նախագծի վրա, որը պատրաստել էր Կ. Պոբի ռուսական դեսպանատան աշխատակից, վերոհիշյալ Անդրե Մանդելշտամը։ Ինչպես հայտնի է, բարենորոգումների այդ նախագիծը երկար ժամանակ քննարկման առարկա դարձավ եվրոպական պետությունների և երիտթուրքական կառավարության ներկայացուցիչների միջև։ Ի վերջո արդյունքը եղավ այն, որ 1914 թ. փետրվարի 8-ին, կնքվեց հայկական բարենորոգումներին վերաբերող ռուս-թուրքական համաձայնագիրը։ Բնական է, որ ստորագրելով այդ պայմանագիրը, թուրքական կառավարությունը ոչ մի ցանկություն չուներ կյանքի կոչելու այն և դիմում էր ամեն միջոցների, որպեսզի բարենորոգումները մնային թղթի վրա։ Ջեմալ փաշան խուսանավել է այս հարցում ևս։ Իր հուշերում բերած հակասական մտքերով ի հայտ են գալիս նրա նենգ դիտավորությունները հայկական բարենորոգումների մասին.

«Ընդունած, որ այդ պայմանագիրը ծանր էր մեզ համար, իսկ Ռուսաստանին չահավետ, Օսմանյան կայսրությունը անկեղծորեն ձգտեց իրագործել ստանձնած բոլոր պարտավորությունները»[8]։

Իսկ մի քանի տող ներքև նա շարունակում է իր միտքը, գրելով.

«Մենք հույս ունեինք, որ համաշխարհային պատերազմի

կրակի միջից անցնելով, մեզ կհաջողվի ազատվել մեր վզին փաթաթած շատ տհաճ պարտավորություններից, որոնք միայն պարտվակ էին մեր ներքին գործերին միջամտելու»[9]:

Այո՛, Ջեմալ փաշան և երիտթուրքական մյուս ղեկավարները «անկեղծորեն ձգտեցին իրագործել ստանձնած բոլոր պարտավորությունները», բռնի տեղահանելով և կոտորելով արևմտահայերին:

Ոչ միայն Ջեմալ փաշան, այլև մյուս պետական գործիչները և նրանց վրա հիմնված մի շարք օտարազգի պատմաբաններ միտումնավոր խեղաթյուրել են իրականությունը, մեկնաբանելով, որ թուրքական կառավարությունը ստիպված է եղել հայերին տեղահանելու իրենց բնակավայրերից, նկատի ունենալով պատերազմական ծանր կացությունը և դրա հետ կապված հայերի ապստամբական շարժումները:

«Ես հաստատ համոզված եմ,-գրել է Ջեմալ փաշան,-որ հայերը իրենց գործունեությամբ վտանգի տակ են դրել մեր կովկասյան բանակի թիկունքը և, նույնիսկ, միջոցառումներ ձեռնարկել բանակի կատարյալ ոչնչացման համար: Իմ ընկերները եկել են այն համոզման, որ օսմանյան հայրենիքը վտանգի մեջ է, իսկ Արևելյան Անատոլիան կանգնած է Ռուսաստանի կողմից նվաճվելու սեմին: Ուստի, հայերի տեղահանությունը մի այլ շրջան չէր կարող կառավարության վտանգ սպառնալ»[10]:

Նշենք, որ հայերը բռնի տեղահանության ենթարկվեցին Օսմանյան կայսրության այնպիսի նահանգներից և շրջաններից, որոնք շատ հեռու էին ռազմական գոտուց: Իրականում հայ ժողովրդի բնաջնջման թուրքական ծրագիրը խարսխված էր նախորդ ամբողջ ժամանակաշրջանում կիրառված ջարդարարական քաղաքականության վրա և օրգանապես բխում էր նրանից:

Փաստերը ցույց են տալիս, որ երիտթուրքական կառավարության ղեկավարները, ուղղակի օգտագործել են հայերի

ապստամբության չինծու պատրվակը, որպեսզի իրագործեն Աբդուլ Համիդի «Հայաստանը առանց հայերի» վաղեմի ծրագիրը: Իրականությունն այն էր, որ հայերը կոտորածի փաստի առաջ կանգնելով ստիպված են եղել մի շարք վայրերում ինքնապաշտպանության դիմել:

Զոն Կիրակոսյանը՝ «Առաջին Համաշխարհային Պատերազմը և Արևմտահայությունը» իր շահեկան գրքում սուր քննադատության ենթարկելով Ջեմալ փաշային նշել է, որ հայ ժողովրդի տարագրության ու կոտորածի նկատմամբ նա ուներ ավելի խորամանկ, քողարկված, երեսպաշտ դիրքորոշում.

«Նա ամեն կերպ ձգտում էր թաքցնել իր մեղսակցությունը,-գրում է Զոն Կիրակոսյանը,-խոսում էր հայերի «գյուղատնտեսական կոլոնիաներ» ստեղծելու մասին, սպառնալից հրամաններով արգելում էր լուսանկարել հայ տարագիրների դժոխային կյանքի պատկերները, սուտ տվյալներ հաղորդում արտասահմանյան լրագրողներին»[11]:

Այսպիսով, Ջեմալ փաշայի հուշագրության «Հայկական հարցը» խորագիրը կրող գլխի վերլուծումը ցույց է տալիս, որ արևմտահայության վերաբերող նրա տեսակետները կեղծ են, խեղաթյուրված և չեն համապատասխանում իրականությանը:

* * *

Հայտնի է, որ Ջեմալ փաշան իր հուշերը գրել և հրատարակել է օսմաներեն (արաբատառ թուրքերենով) 1922 թվականին: Նույն թվականին էլ նա թարգմանվել ու լույս է տեսել անգլերեն և գերմաներեն լեզուներով[12]: Հետագայում գիրքը վերծանվել է ժամանակակից լատինական թուրքերենով և հրատարակվել երկու անգամ՝ Անկարայում և Ստամբուլում[13]:

Գոյություն ունի նաև ռուսերեն թարգմանությունը, որը կատարված է վերոհիշյալ անգլերեն թարգմանությունից և հրատարակվել՝ 1923 թ. Թիֆլիսում: Անհրաժեշտ է նշել, որ այս թարգմանությունը, հակառակ իր ժամանակին կատարած դրական գործին, այսօր պետք է համարել հնացած: Բնագրի հետ համեմատությունը ցույց տվեց, որ այնտեղ կան բավականին կրճատումներ, անձնանունների և տեղանունների աղավաղումներ, և առանձին տեղերում՝ նույնիսկ սխալ թարգմանություններ: Ռուսերենի թարգմանիչը իր առաջաբանում այդ մասին անկեղծորեն գրել է հետևյալը.

«Լոնդոնում անգլերեն լեզվով հրատարակված Ջեմալ փաշայի գիրքը, ըստ երևույթին թարգմանվել է թուրքերենից: Մեզ համար անհայտ թարգմանիչը բովանդակության մեջ բաց է թողել մի շարք անճշտություններ և վրիպակներ: Ուստի, ընթերցողից խնդրում ենք, ռուսերենում տեղ գտած թերությունները վերագրել անգլերեն հրատարակության պակասության»:

Անհրաժեշտ է նշել նաև, որ տվյալ թարգմանությունը հրապարակվել է առանց ծանոթագրությունների:

1927 թ. Աշոտ Հովհաննիսյանի առաջաբանով Ա. Աթանասյանը գերմաներեն հրատարակությունից թարգմանաբար հայ ընթերցողին է ներկայացրել Ջեմալ փաշայի հուշերի վերջում բերված «Հայկական հարցը» խորագիրը կրող գլուխը:

Ե. ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՑԱԳՈՐԾ ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՅԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1941 թ. հունիսի 18-ին Թուրքիան ֆաշիստական Գերմանիայի հետ կնքեց «Բարեկամական և չհարձակման» պայմանագիր և բացահայտորեն փոխեց իր քաղաքական դիրքորոշումը միջազգային ասպարեզում: Թուրքիայում սկսեց ուժեղանալ ամեն տեսակի համաթուրքականության կազմակերպությունների գործունեությունը, որոնք կոչ էին անում ավազակային հարձակում գործել Կովկասի վրա:

Թուրքերի ազգային բացառիկության և այլ ազգերի նկատմամբ անհանդուրժողական, թշնամական քարոզներով հանդես եկան բարձրաստիճան պետական և հասարակական գործիչներ: Այսպես՝ Շյուքրի Սարաջօղլուն ժողովրդահանրապետական կուսակցության 4-րդ համագումարի եզրափակիչ նիստում հայտարարեց. «Մենք թուրքիստներ ենք և օրավուր դառնում ենք առավել թուրքիստներ»: Իսկ 1942 թ. մարտ ամսին, կրկնելով նրան, թուրքամոլ Օղուզ Թյուրքանը ասաց. «Համաթուրքականները հավատում են, որ թուրքական ցեղը և թուրքական ազգը բարձր են այլ ցեղերից, և ազգություններից»:

Համաթուրքականների ծավալած գործունեության ուժեղացումով խորացան նաև ազգային ճնշումները: Ազգամիջյան թշնամանքի և բռնի թուրքացման քաղաքականությունը սկսեց կիրառվել քրդերի, արաբների, լազերի, չերքեզների և այլ ազգերի նկատմամբ, իսկ 1942 թվականից հետո, հատկապես, դաժան հալածանքների ենթարկվեցին ոչ-մահմեդական փոքրամասնություն կազմող հայերը, հույները և հրեաները:

Ստեղծված այս իրադրության մեջ 1942 թ. թուրքամոլ տարրերի և կառավարության նախաձեռնությամբ Բեռլինից

Ստամբուլ է տեղափոխվում հայ ժողովրդի ցեղասպանության գլխավոր հանցագործներից մեկի՝ Թալեաթ փաշայի աճյունը և ապ մեծ հանդիսավորությամբ թաղվում «Hürriyet-i Ebediye» (Հավիտյան ազատություն) անունը կրող գերեզմանատան պանթեոնում: Որոշ ժամանակ անց՝ 1946 թվականի սկզբին Հյուսեյն Ջահիդ Յալչընի համառոտ առաջաբանով, և անմիջական հրատարակիչ՝ Էնվեր Բոլայըրի «Երկու խոսքով» Ստամբուլում լույս է տեսնում, այսպես կոչված, Թալեաթ փաշայի հուշերը (Talât pa'an դn hat դralar դ):

Անհրաժեշտ է նշել, որ այս գրքույկը հեռու է կատարյալ հուշագրում լինելուց: Այդ հաստատվում է նաև առաջաբանում նշված Յալչընի հետևյալ խոսքերով. «Սակայն պարագաներն ու պայմանները հնարավորություն չտվին նրան գրելու իր կատարյալ հուշերը»:

Նույն միտքն է արտահայտել նաև հրատարակիչը. «Թալեաթ փաշան մաքուր անունից և իր հուշերի մի մասը բովանդակող տետրակից բացի, ոչինչ չթողեց: Այս «հուշերը» նրա գրավոր միակ երկն է, որը ներկայումս մեծ հպարտությամբ տպագրում ենք գրքի ձևով»[1]:

Թալեաթի հուշերի օսմաներեն բնագիրը ժամանակին չի հրատարակվել, և նրա գոյության մասին ոչ մի հիշատակում չի եղել թուրք պատմագրության մեջ: Գրքի սկզբում հրատարակիչների կողմից բերված է Թալեաթի արաբատառ ձեռագրերից մի նմուշ, որը ոչ մի առնչություն չունի նրա հուշերի բովանդակության հետ: Այն ներքին գործերի նախարարի սովորական մի գրություն է: Մեզ համար առավել համոզիչ կլիներ, եթե հրատարակիչները գրքի սկզբում բերեին Թալեաթի հուշերի օսմաներեն ձեռագրից մի հատված:

Թե ի՞նչ փոփոխության է ենթարկվել օսմաներեն բնագիրը, երբ այն վերծանվել է ժամանակակից թուրքերենի, մեզ անհայտ է: Այսուհանդերձ, գրքի բովանդակությունը պարզ ցույց է տալիս, որ այն հրատարակված է որոշակի նպատակով և

լիովին համապատասխանում է տվյալ ժամանակվա ոգուն: Պարզ ասած, այնտեղ ամեն կերպ նենգափոխված են փաստերը և պատմական իրականությունը:

Եթե մի կողմ թողնենք հուշերի սկզբում բերված 1914-1918 թթ. Թուրքիայի ներքին և արտաքին իրադրությանը վերաբերող համառոտ շարադրանքը (այն կազմում է ընդամենը 30 էջ), ապա առանց վարանելու կարելի է ասել, որ այդ գիրքը, հիմնականում, նվիրված է Հայկական հարցի պատմությանը[2]:

Մեր կարծիքով, տվյալ գրքի հրատարակումն իր հիմքում ունեցել է մի նպատակ՝ Անդրկովկասում թուրքերի նվաճողական նկրտումներից ելնելով, թուրք հասարակության շրջանում թշնամանք և ատելություն սերմանել հայ ժողովրդի հանդեպ: Հուշերի հեղինակը կաշվից դուրս է գալիս ապացուցելու, որ ինքը մեղավոր ու հանցավոր չէ հայերի բնաջնջման խնդրում, որ հայերն իրենք են բռնություն գործադրել թուրքերի վրա, որ 1919 թ. Կ. Պոլսում ռազմական արտակարգ ատյանի իր և ընկերների հանդեպ արձակված մահվան դատավճիռը անտեղի էր և այլն...:

Թալեաթ փաշայի «հուշերը» իր բովանդակությամբ լրիվ տարբերվում է մյուս թուրք պետական գործիչների հուշերից: Այստեղ շատ քիչ տեղ է տրված անձնական գրառումներին և հիմնականում բերված են փաստաթղթեր: Դրանք ամփոփված են «Հայերի ներքին դրության վերաբերող փաստաթղթերը» գլխում[3]:

Երկարատև պրպտումներից հետո մեզ հաջողվեց պարզել, որ, այսպես կոչված, այդ «փաստաթղթերը» վերցված են 1916 թ. Թուրքիայում լույս տեսած «Հայ կոմիտեների հեղափոխական շարժումներն ու ծրագրերը» գրքից[4]:

Այս գիրքը լույս տեսավ այն ժամանակ, երբ համաշխարհային հասարակայնությունը իրազեկ դարձավ հայ ժողովրդի հանդեպ գործադրված ցեղասպանության մասին: Որպեսզի

արդարացնի իր չարանենգ գործունեությունը, Թուրքական կառավարությունը հրապարակեց այդ գիրքը՝ զետեղելով այնտեղ ամեն տեսակի զրպարտանք և խաբեություն արևմտահայերի հասցեին։ Այդ գրքում ցուցադրված բազմաթիվ նկարներից 32-ը պատկերում են զանազան զենքերի կուտակումների մասին, որոնք, իբրև թե, բռնագրավվել են հայ հեղափոխականների թաքստոցներից։

Գրքի վերջում զետեղված են նաև մի շարք նկարներ, որոնք պատկերում են, իբրև թե, կոտորածի ենթարկված թուրքերի դիակները։ Սա ևս կեղծ է և չինծու։ Ահա, թե ինչ է գրում 1915 թ. հայկական կոտորածների ականատեսներից մեկը՝ ազգությամբ արաբ Ֆայեզ էլ Ղոսեյնը.

«Թուրքական կառավարությունը հասկացավ, որ եվրոպական պետություններն առանց հապաղելու իրազեկ կդառնան հայ ժողովրդի ոչնչացմանը, և այդ լուրը կտարածվի աշխարհով մեկ՝ լարելով հասարակաց կարծիքը թուրքերի դեմ։ Այդ իսկ պատճառով, մեծ թվով հայեր կոտորելուց հետո, կառավարությունը հրահանգ էր տվել իր գործակալներին՝ դիակներին քրդի հագուստ հագցնել, գլխներին չալմաներ դնել։ Դրանից հետո գալիս էին թուրք կանայք, շրջապատում դիակները, սկսում լաց լինել ու բղավել, թե հայերը սպանել են իրենց ամուսիններին։ Այդ ամբողջ տեսարանը նկարահանվել է, որպեսզի հետո «ապացուցեն», թե հայերն են հարձակվել քրդերի վրա և սպանել նրանց, իսկ քրդական ցեղերը ոտքի են ելել, որպեզի վրիժառու լինեն, թե կառավարությունը այդ ամենում ոչ մի մասնակցություն չի ունեցել։ Սակայն խելամիտ մարդիկ կռահեցին այս խաղը, և այն շուտով հայտնի դարձավ Դիարբեքիրում»[5]։

Կարծում ենք, որ այսքանն էլ բավական է հասկանալու համար, թե այդ ժողովածուն ինչ էր ներկայացնում իրենից և ինչ հետին նպատակների համար էր հրապարակված։ Ահա այս գրքից էլ Թալեաթը (գուցե և հրատարակիչները) բերել

է բազմաթիվ զրպարտանքներով լի փաստաթղթեր։ Հիշյալ գրքից վերցվել են ոչ միայն փաստաթղթեր, այլև ավյալ գրքում բերված պարզ մեղադրական շարադրանքներն էլ զետեղվել է հուշերի մեջ իբրև փաստաթուղթ։

Իրեն և գործընկերներին արդարացնելու և կատարված ոճրագործության հանցանքը վրայից դեն նետելու միտումով, իր հուշերում Թալեաթը կաշվից դուրս է գալիս «ապացուցելու» իր անմեղությունը։ Այսպես, «Գլխավոր շտաբում «հայերի տեղահանման» վերաբերյալ մի օրենք պատրաստվեց և ներկայացվեց նախարարների խորհրդին։ Ես,–շարունակում է Թալեաթը,–կատարելապես դեմ էի այս օրենքի գործադրմանը, քանի որ ժանդարմերիան ամբողջությամբ, իսկ ոստիկանությունն էլ մասամբ վերցված էին զինվորական ծառայության, և նրանց փոխարեն նշանակված էր հատուկ ջոկատ։ Ես գիտակցում էի, որ տեղահանումը այս միջոցներով գործադրելու դեպքում, կարող էր շատ վատ հետևանքների հանգեցնել, ուստի, հեռուն մտածելով, պայքարեցի այդ օրենքի գործադրման դեմ, և հաջողվեց մի առ ժամանակ հետաձգել այն»[6]։

Իսկ տեղահանության և կոտորածի եռուն շրջանին Թալեաթը գրել է հետևյալ տողերը.

«Բոլոր կուսակալներն ու կառավարիչները, պատասխանատվությունից վախենալով, դեպքերը ներկայացնում էին հնարավորին չափ մեղմ և մասամբ էլ, հանցանքը բարդում քուրդ բնակչության վրա։ Պատգամավորների հաղորդած տեղեկությունները, իրոք, որ ողբերգական էին։ Շատ գիշերներ չեմ կարողացել աչքս փակել։ Մի կողմից քաղաքացիական մարմիններին հրամայեցի ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումները, իսկ մյուս կողմից զինվորական իշխանություններից խստագույնս պահանջեցի, որպեսզի ժողովրդին պաշտպանելու համար զինվորական ջոկատներ ուղարկեն և միևնույն ժամանակ պատժեն ոճրագործներին»[7]։

Այն, որ այստեղ իրականությունը կատարելապես խեղա-

թյուրված է, կասկած չի կարող լինել։ Թալեաթի կողմից երկրի տարբեր կողմերը առաքված գաղտնի հեռագրերն ու հրահանգները լիովին պարզում են թե՛ նրա վարքագիծը և թե՛ հանցանքի չափը։ Այստեղ տեղին ենք համարում բերել այդ հրահանգներից մի քանիսը։

«Հալեպի նահանգապետին, 9 սեպտեմբեր, 1915 թ.։

Թուրքական հողի վրա հայերի ապրելու և աշխատելու իրավունքը կատարելապես չեղյալ է համարվում։ Այս կապակցությամբ կառավարությունը իր վրա է վերցնում բոլոր պատասխանատվությունը և հրամայում է նույնիսկ չխնայել օրորոցի մանուկներին։ Այս հրամանի իրագործումը արդեն ավել է իր արդյունքը մի շարք նահանգներում։ Հակառակ դրան, մեզ անհայտ պատճառներով բացառություններ են եղել մի շարք մարդկանց նկատմամբ. փոխանակ աքսորավայր ուղարկելու, նրանց պահել են Հալեպում։ Այս հանգամանքը կառավարությանը կանգնեցնում է ավելի դժվարին կացության առջև։ Առանց ուշադրություն դարձնելու նրանց առարկություններին, այդտեղից հեռացրեք բոլորին, ով ուզում է լինի, թե՛ կանանց և թե՛ երեխաներին, նույնիսկ նրանց, ովքեր ի վիճակի չեն շարժվելու։ Թույլ մի տվեք, որ մարդիկ պաշտպանեն նրանց...։

Ներքին գործերի նախարար՝ Թալեաթ»։

«Հալեպի նահանգապետին, 16 սեպտեմբեր, 1915 թ.։

Ձեզ արդեն հաղորդվել է այն մասին, որ (Երիտթուրքական) կուսակցության որոշմամբ հրահանգված է ամբողջապես ոչնչացնել Թուրքիայում ապրող հայերին։ Նրանք, ովքեր դեմ կկանգնեն այս որոշման, չեն կարող մնալ կայսերական պատասխանատու պաշտոններում։ Ինչքան էլ, որ դաժան լինեն ձեռնարկված միջոցառումները, նրանց (հայերի) գոյությանը վերջ է տրվելու։ Ուշադրություն մի դարձրեք նրանց ո՛չ տարիքին, ո՛չ սեռին և ո՛չ էլ խղճի խայթ զգացեք։

Ներքին գործերի նախարար՝ Թալեաթ»։

«Հալեպի նահանգապետին, 23 նոյեմբեր, 1915 թ.։

Արևելյան վիլայեթներից ձեր ձեռքը անցած հայերին ոչնչացրեք գաղտնի ձևով։

Ներքին գործերի նախարար՝ Թալեաթ»[8]։

Թալեաթ փաշան իր հանցագործությունը թեթևացնելու փորձ է կատարել նաև հետևյալ հատվածում.

«...Երբ Անատոլիայի զանազան վայրերում սկսվեց հայերի տեղահանումը, Ստամբուլի հայերի շրջանում և, մասնավորապես, կոմիտեներում տիրեց արտասովոր տագնապ։ Հայ կոմիտեների վարչական կենտրոնը, այսինքն արտաքին կազմակերպության կենտրոնը, գտնվում էր Ստամբուլում։ Այս քաղաքը կենտրոնն էր բոլոր տեսակի գինվորական շարժումների։ Հետևաբար, ընդհանուր շտաբը, նախ և առաջ Ստամբուլում որևէ ապստամբության հնարավորությունը խափանելու և նեղուցների պաշտպանությունը կազմակերպելու նպատակով, իր ենթակայության տակ գտնվող ոստիկանական վերատեսչությանը հրամայեց ձերբակալել և պաշարման շրջանից հեռացնել բոլոր այն անձանց, որոնք առնչություն ունեն կոմիտեի գործունեության հետ։ Այս հրամանը տրվելուն պես ոստիկանական տեսուչը տեղեկացրեց ինձ։ Փնտրվող անձերի մի մասը կովկասցի էր։ Նրանք, մի գիշերվա ընթացքում ձերբակալվելով, ուղարկվեցին Կոնիա։ Ավելի ուշ, քննիչ հանձնաժողովի կողմից պարզվեց, որ սրանք Անկարայի գինվորական ատյան տարվելու ժամանակ սպանվել են ոստիկանների կողմից։ ... Ըստ էության գինվորական նախագզուշական միջոցառում հանդիսացող տեղահանումը անխիղճ, աննկարագիր մարդկանց պատճառով ստացել է ողբերգական կերպարանք։ Ես նպատակ չունեմ թաքցնելու այդ գործերի տգեղությունը»[9]։

Բերված հատվածի սկզբում Թալեաթը, խուսանավելով, ձգտել է թաքցնել ճշմարտությունը։ Կասկածից վեր է, որ խոսքը վերաբերում էր մեկ գիշերվա ընթացքում Կ. Պոլսի

հայ մտավորականների ձերբակալմանն ու աքսորմանը: Իսկ արևմտահայության ինքնապաշտպանությունը այս շրջանում ոչ թե ապստամբություն էր, ինչպես պնդում է Թալեաթը և հետապնդում էլ մյուս գործիչները, արդարանալու միտումով, այլ՝ գոյության կռիվ: Հայերը զենքի դիմեցին այն պահին, երբ կանգնեցին կոտորվելու վտանգի առաջ:

Թալեաթ փաշայի ստորագրած ծածկագիր հեռագրերը բացահայտորեն ցույց են տալիս հայերի կոտորածների գլխավոր կազմակերպիչներից մեկի գործունեությունն ու մեղսակցությունը:

Այստեղ տեղին է վկայակոչել ռուս դիվանագետ՝ Մանդելշտամի հետևյալ գնահատականը.

«Այո՛, Էնվերը և Թալեաթը՝ կայսրության երկու բռնապետներն են, հայերի նախճիրի գլխավոր մեղավորները: Շատ հավանական է, որ նրանք եղեռնագործության էին հրահրվել չարանենք դոկտորներ Բեհաէդդին Շաքիրի և Նազիմ բեյի կողմից: Բայց երկու հրեշների հնարավոր հանցակցությունը չի վերացնում մեղադրանքները այդ երկու տերերի վրայից»[10]:

Թալեաթ փաշայի հուշերի վերջում բերված է նաև երիտթուրքական կուսակցության պարագլուխների դեմ Ստամբուլում ծավալված դատական նիստում մի քանի դատապաշտպանների ելույթները: Պարզ է, որ այդ դատապաշտպանները ջանացել են ամեն կերպ մեղմացնել նրանց գործադրած հանցանքը: Սակայն դատական ընթացքի մեղադրական եզրակացությունից բացահայտորեն երևում է Թալեաթի և նրա գործընկերների գործադրած հանցագործությունը: Ահա այդ մեղադրական եզրակացությունից մի հատված, որն անմիջապես առնչվում է Թալեաթ փաշայի հետ.

«Ներքին գործերի նախարարության հատուկ գրասենյակի պետ Իհսան բեյը հաստատում է, որ այն ժամանակ, երբ ինքը գտնվելիս է եղել Քիլիսի քայմաքամի պաշտոնում, Կ. Պոլսից Հալեպ գործուղված Աբդուլլահատ Նուրի բեյը հայտարարել է, որ «տեղահանման հիմնական նպատակը (հայերի) ոչնչացումն է» և ավելացրել է նաև, որ ինքը այդ հարցով կապի մեջ մտնելով Թալեաթ բեյի հետ, նրանից ուղղակի ստացել է կոտորածի հրաման, որ նա (Թալեաթը) ձգտել է համոզել իրեն, որ դա է երկրի փրկությունը»[11]:

Կարծում ենք, որ մեղադրական եզրակացությունից բերված այս հատվածը մեկնաբանության կարիք չունի:

Այսպիսով, Թալեաթ փաշայի հուշերի վերլուծումը մեզ բերում է այն եզրակացության, որ արևմտահայությանը վերաբերող նյութերը միտումնավոր աղավաղված են և չեն համապատասխանում իրականությանը: Խիստ կասկածելի է նաև հուշերի հեղինակի ինքնության հարցը: Մի դուցե, Թալեաթը ունեցել է օրագրության կամ հուշերի ձևով շարադրված էջեր, բոլոր դեպքերում հրատարակիչները նենգ նպատակներով ընդարձակել են դրա ծավալը, խմբագրել և կցել չինծու «փաստաթղթեր»:

Թուրք կին գործիչ Հալիդե Էդիբի վկայությամբ, Թալեաթը խոստովանելով հանդերձ իր անմարդկային արարքը, արդարացում է որոնել ազգային շահերի տեսակետից. «Ես այն համոզմանն եմ, որ այնքան ժամանակ, երբ մի ազգ իր սեփական շահերի համար անում է ամեն ինչ և հաջողվում է, աշխարհը ընդունում է այդ: Ես պատրաստ եմ մեռնելու այն բանի համար, ինչ կատարեցի, և ես գիտեմ, որ կմեռնեմ դրա համար»[12]:

Թալեաթը, իսկապես, իր արժանի պատիժը գտավ, երբ սպանվեց հայ վրիժառու Սողոմոն Թեհլիրյանի ձեռքով 1921 թ. մարտի 15-ին Բեռլինում:

Զ. ՈՎՔԵ՞Ր ԱՄՓՈՓՎԵՑԻՆ «ՀՅՈՒՐՐԻԵԹ-Ի ԷԲԵԴԻԵ» ՊԱՆԹԵՈՆՈՒՄ (ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ)

1996 թ. օգոստոսի 4-ին Տաճիկ!-ստանի մայրաքաղաք Դուշանբեից Ստամբուլ բերվեց Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Թուրքիայի ռազմական նախարար՝ Էնվեր փաշայի աճյունը և կառավարական բարձր մակարդակով և մեծ շուքով հողին հանձնվեց «Հյուրրիեթ-ի էբեդիե» կոչված պանթեոնում: Նշենք, որ անցյալում նույն պատվին և մեծարանքին էին արժանացել նաև Իթթիհատական Թուրքիայի եռապետության մյուս անդամները՝ ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան և ծովային նախարար Ջեմալ փաշան, երբ նրանց աճյունները օտար երկրներից բերվելով ամփոփվեցին վերոհիշյալ պանթեոնում:

Բնականաբար, երևույթ ունեցողները Էնվերին ընութագրեցին որպես Թուրքիայի մոտիկ անցյալի պատմության մեջ կարևոր դեր խաղացած պետական գործիչ: Իսկ Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը Էնվերին որակավորեց որպես Թուրք ժողովրդի հերոս:

Հասկանալի է, որ ամեն մի երկիր, պետություն, կազմակերպություն կամ անհատ ազատ է և իրավունք ունի իր հարազատների աճյունները տեղափոխելու և ամփոփելու հարմարագույն վայրում: Նույնիսկ, միջազգային օրենքներով դյուրություններ են սահմանված այդ ուղղությամբ:

Բնականաբար, աշխարհի հասարակությունը ինչ-որ չափով իրազեկ դարձավ վերոհիշյալ ծիսակատարության, և կարծեք կրկին անդրադառնալու անհրաժեշտությունը չկար ավյալ հարցին, եթե մեր ուշադրությունը չգրավեր Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրելի դամբանականում ասված հետևյալ խոսքերը.

«Էնվերը իր սխալներով ու բարեգործություններով (՞) մոտիկ անցեալի ամենակարևոր դեմքերն մեկն էր և այլուս պատմությունն է, որ պիտի քննել անցեալի դեպքերը և իր վճիռը արձակել ազոնց մասին»[1]:

Ուրեմն, աշխատենք անդրադառնալ պատմության և կրկին անգամ բնութագրենք և լուսաբանենք, թե որո՞նց աճյուններն են ամփոփված այդ պանթեոնում:

Այսպես, հայտնի է, որ 1919 թ. մարտի 8-ի սուլթան Մեհմեդ 6-րդ Վահիդէդդինի հատուկ հրամանագրով՝ 1) Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ քաշելու և 2) հայերի տեղահանությունն ու կոտորածը կազմակերպելու համար դատական պատասխանատվության ենթարկվեցին երիտթուրքական կառավարության ղեկավարներն ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամները: Ռազմական արտակարգ ատյանի քննությանը որպես մեղադրյալ ներկա էին 20 կուսակցական և պետական բարձրաստիճան գործիչներ: Իսկ առավել մեծ հանցագործները՝ Թալեաթը, Ջեմալը և Էնվերը դիմել էին փախուստի:

1919 թ. հուլիսի 5-ի դատավճռով, որը հիմնավորված էր քաղաքացիական օրենագրքի 45-րդ հոդվածի առաջին կետի վրա, որպես ծանր հանցագործներ մի քանիսը դատապարտվեցին մահվան, որոնց թվում՝ Թալեաթը, Ջեմալը և Էնվերը:

Նշենք նաև, որ մինչ դատավճիռը այդ մեղադրյալները, որոնց թվում՝ Թալեաթը, Ջեմալը և Էնվերը, զրկվեցին Թուրքիայի քաղաքացիության իրավունքից, ռազմական տիտղոսներից, վտարվելով նաև զինվորական շարքերից: Նրանց ունեցվածքը բռնագրավվեց[2]:

Այժմ մի քանի խոսք վերոհիշյալ երկու մեղադրական կետերի մասին: Իրոք, որ իրենց նախաձեռնությամբ մտնելով պատերազմի մեջ, այս եղյակը պատճառ հանդիսացավ մեծ թվով Թուրքերի և Օսմանյան կայսրության այլ հպատակների մահվան,

ինչպես նաև նրանց նյութական ունեցվածքի կորստյան։

Բանը նրանումն է, որ պատերազմի մեջ մտնելու հարցը նրանք անհրաժեշտ չհամարեցին քննարկել մեջլիսում։ Այն վճռվեց մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշայի ծովեզրյա ապարանքում։ Չնայած, մեծ վեզիրը զգուշացրեց պատերազմին մասնակցելու վտանգավոր լինելը, բայց չկարողացավ համոզել նրանց[3]։

Նշենք նաև, որ Վերսալի հաշտության պայմանագրով (1919 թ.) Թալեաթի և իր գործընկերների նկատմամբ վճիռ կայացվեց, որպես պատերազմի հանցագործների։

Իսկ ինչո՞ւ այդպես եռանդագին մտան պատերազմի մեջ։ Ահա, թե Ջեմալ փաշան ինչ է գրել այդ մասին իր հուշագրության մեջ.

«Մենք հույս ունեինք, որ համաշխարհային պատերազմի կրակի միջից անցնելով, մեզ կհաջողվի ազատվել մեր վզին փաթաթած շատ տհաճ պարտավորություններից, որոնք միմիայն պատրվակ էին մեր ներքին գործերին միջամտելու համար»[4]։

Հասկանալի է, որ այստեղ Ջեմալ փաշան նկատի ունի հունվար 24, 1914 թ. թուրքական կառավարության կողմից ստորագրված բանաձևը, որի համաձայն բարենորոգումներ պիտի անցկացվեին հայաբնակ 6 նահանգներում։

Իսկ երկրորդ կետն էլ խիստ առնչվում է պատերազմի մեջ մտնելու հարցի հետ։

Վերոհիշյալ դատաքննության բոլոր արձանագրություններում, փաստագրական նյութերի և ականատեսների վկայությունների հիման վրա շարադրված մեղադրական եզրակացություններում, դատավճիռներում մանրամասն խոսվում է նաև հայերի բռնագաղթի և կոտորածների մասին։

Թուրքական 3-րդ բանակի հրամանատար Վեհիբ փաշան իր վկայության մեջ նշում է, որ «Հայերի նկատմամբ կատարված վայրագությունները, նրանց ունեցվածքի թալանն ու կողոպուտը որոշված է եղել «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կողմից։ Եվ այդ կոտորածների, ինչպես նաև բոլոր գազանությունների իրագործման համար Բեհաէդդին Շաքիր բեյը 3-րդ բանակի շրջանում պատրաստում էր հատուկ մարդասպաններ և անձամբ ղեկավարում նրանց»[5]։

Ինչպես նկատեցիք, այս բոլորը կատարվել է 3-րդ բանակի շրջակայքում։ Իսկ ռազմական նախարարը Էնվեր փաշան էր։

Ո՞ւմ հայտնի չէ, որ Էնվեր փաշան տվյալ ժամանակ վարում էր համաթուրքիզմի քաղաքականություն՝ ձգտելով բոլոր թրքալեզու ժողովուրդներին միացնել մեկ դրոշի տակ։ Իսկ հայերը խանգարում էին այդ միացության։ Ուրեմն հայերը պետք է բնաջնջվեին։ Եվ այս դաժան ծրագրի իրագործմանը նպաստեց պատերազմը։ Հակառակ այս բոլորի, այսօր թուրք պատմաբանները, քաղաքական գործիչները, ինչպես նաև նրանց ձայնակցող մի շարք օտար գիտնականներ աշխատում են սակարկության սեղանի վրա դնել հայերի ցեղասպանությունը։

Վերոհիշյալ դատաքննության մեղադրական եզրակացության մեջ պարզորոշ գրված է, որ պատերազմի ընթացքում, «չնայած ահաբեկման սլաքը հիմնականում ուղղված էր հայերի դեմ, այնուհանդերձ, տուժեցին նաև կայսրության այլ տարրերն ու մեծ թվով թուրքեր»[6]։

Այո՛, Էնվերի աճյունը հողին հանձնելու օրերին, հակառակ կառավարության դրսևորած մեծարանքներին, գտնվեցին մարդիկ, որոնք համարձակորեն ասացին ճշմարտությունը և հաստատեցին Էնվերի ծավալած վնասակար գործունեությունը իր ժողովրդի հանդեպ։ Այսպես, «Հյուրրիյեթ» թերթի թղթակիցներից Օքթայ Էքսին գրեց. «Մինչ որոշ անձեր հարգանք կմատուցանեն Էնվեր փաշային, ես ոտքի պիտի կանգնիմ ի յիշատակ մեր 90 000 երիտասարդներուն, որոնք սառեցան Ալլահուէքպէր լեռներուն վրա՝

գորավարին հրահանգով»[7]։

Այստեղ հարց է առաջանում։ Այդ ինչպե՞ս է պատահում, որ իր ժողովրդին և հպատակներին մարդկային ահավոր կորուստներ և նյութական հսկայական վնասներ պատճառած մարդիկ հետ մահու արժանանում են նման մեծարանքի և պատվի։ Աշխարհում հազիվ թե գտնվի մի երկիր, որի ղեկավարները իրենց ժողովրդին այդքան վնաս հասցնելուց հետո հերոսանան։ Ի՞նչ է, այս մասին չգիտե՞ն ներկայիս Թուրքիայի ղեկավարներն ու պատմաբանները։ Գիտեն, շատ լավ գիտեն։

Ուրեմն ի՞նչն է պատճառը, որ հերոսացնում են Էնվերին և մյուսներին։ Պատճառը միանշանակ է։

Այդ նրանք էին, որ ամբողջապես հայաթափեցին Հայաստանը ամենավայրագ ձևերով։ Այդ նրանք էին, որ 20-րդ դարի սկզբին գործադրեցին առաջին ցեղասպանությունը հայերի նկատմամբ և տիրացան պատմական Հայաստանի հողատարածքին և նվիրաբերեցին այն իրենց ժառանգներին։

Այնուհանդերձ, Էնվերին և նրա գործընկերներին հերոսացնող այսօրվա Թուրքիայի այրերը պետք է լավ իմանան, որ «**Միջազգային օրենքների համաձայն, ցեղասպանության հետևանքով նվաճված հողատարածքները չեն կարող որևէ երկրի օրինական մասը կազմել**», ինչպես հաստատեց Ռուսաստանի Դաշնության Պետական Դումայի անդամ Անդրեյ Նուզկինը 1995 թ. մայիսի 3-ին Մոսկվայում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ընթացքում։

Ահա, ա՛յս է պատմությունը, ա՛յս է պատմական ճշմարտությունը, որը հաստատվում է նաև թուրքական փաստաթղթերով։

Մեր օրերում այն հաստատվում է նաև արդարամիտ և մարդկային վեհ գաղափարներով օժտված մի շարք թուրք գործիչների վկայություններով։ Բոլորին հայտնի, որ Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում գործում է «**Ընդդեմ ցեղասպանության կազմակերպություն**»ը, որի նախագահն է թուրք

մտավորական Ալի Էրթեմը։ Ահա մի ցայտուն հատված հայերի ցեղասպանության վերաբերող նրա մտորումներից.

«Մենք պիտի դառնանք կամ ցեղասպանության միջոցով բռնագրավված հողերը, թալանված հարստությունը յուրացնող ստորներ, կամ էլ՝ բռնագրավվածը մերժելով՝ որպես պատվավոր մարդիկ, կողոպտված հարստությունները պիտի վերադարձնենք իր տիրոջը։ Մեզ համար երրորդ ընտրություն չկա»[8]։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջաբան

1. Ali Fuad Erden, Birinci dünya harbinde Suriye hatıraları, c. 1, Istanbul, 1954, s.122:

2. Ahmed Refik, Iki komite, Iki kıtal, Istanbul, 1919, s.40 (արաբատառ թուրքերեն):

Ա. Թուրք պետական գործիչ Քյամիլ փաշան Արևմտյան Հայաստանի 19-րդ դարի վերջին քառորդի իրադարձությունների մասին

1. Տե՛ս «Փորձ», 6-7, Տփխիս, 1879, էջ 204-205:

2. Երվանդ Օտյան, երկեր, Երևան, 1956, էջ 722:

3. Hatırat-ı Sadri esbak Kamil paşa. Kostantinya, 1329, s.180 (արաբատառ):

4. I. H. Uzunçarşılı, II-ci Abdul Hamid devrinde Kamil paşa, "Belleten", 1955, No. 78, s. 227:

5. Տե՛ս «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ», Երևան, 1991, էջ 32-33:

6. Տե՛ս «Քյամիլ փաշայի հուշերը, էջ 180»:

7. Համեմատել_Hatırat-ı Kamil paşa, s. 180, Hilmi Kamil Bayur, Sadrazam "Kamil paşanın siyasi Hayatı, Ankara,1954, s. 173":

8. Տե՛ս «Քյամիլ փաշայի հուշերը, էջ 188»:

9. Տե՛ս «Քյամիլ փաշայի հուշերը, էջ 186»:

10. Նկատի ունի 1895 թ. մայիսի 11-ին Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպանների կողմից Բարձրագույն դռանը համատեղ ներկայացված բարենորոգումների ծրագիրը:

11. Այս զեկույցը հրատարակել է Ի. Հ. Ուզունչարշըլը: Տե՛ս I. H. Uzunçarşılı, II-ci Abdulhamid devrinde Kamil paşa.

"Belleten", 1955, No. 78, s. 227:

12. Սուլթանի մտերիմ և հավատարիմ անձնավորություն:

13. 1895 թ., երբ Հայկական հարցը կրկին միջազգային դիվանագիտության կարևոր հարցերից մեկը դարձավ, Աբդուլ Համիդը երկրորդ անգամ մեծ վեզիրության պաշտոնին նշանակեց հայատյաց Քյամիլ փաշային:

14. Տե՛ս «Քյամիլ փաշայի հուշերը, էջ 180»:

15. Օսմանյան կայսրության եվրոպական տիրույթները կոչվում էին Ռումելի:

16. Տվյալ ժամանակ Անգլիայի կողմից Հայկական հարցի աշխուժացումը հետապնդում էր որոշակի նպատակ, բխում էր Անգլիական բուրժուազիայի շահերից: Անգլիական կառավարության ուշադրության կենտրոնում էին Հնդկական Օվկիանոսի և Պարսկական Ծոցի հետ կապող ցամաքային և ծովային ուղիները:

17. Քյամիլ փաշայի այս նենգ մտահղացումը գործադրվել է կյանքում: Դրա վառ օրինակը կարող է հանդիսանալ 1993 թ. Թուրք պատմաբան Յավուզ Էրջանի հրատարակած «Հայերը դիմակազրկվում են» գրքում բերված Զ. Պ. Նորմանի զեկուցումը, գրված 1896 թ., որի բովանդակությունը լիովին համընկնում է Քյամիլ փաշայի այս դավադիր ծրագրի հետ: Տվյալ «Զեկուցման» մեջ Նորմանը ձգտել է Սասունում և այլուր տեղի ունեցած արյունալի իրադարձությունների մեղքը բարդել հայկական կուսակցությունների վրա: Մի խումբ անվանավոր խեղաթյուրվել են իրական եղերությունները, քողարկվել են 1894-1896 թթ. անմեղ հայերի կոտորածները, արդարացվել է Աբդուլ Համիդի հայերի նկատմամբ դրսևորած դաժան քաղաքականությունը: Այս մասին տե՛ս մեր գրախոսականը Յավուզ Էրջանի խմբագրած այդ գրքի մասին («Նոր Օր» եռօրյա, հունիս 8, 1994 թ.):

18. Տե՛ս «Քյամիլ փաշայի հուշերը, էջ 180»:

19. Նկատի ունի 1895 թ. մայիսի 11-ին Կ. Պոլսում

Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպանների կողմից թուրքական կառավարությանը ներկայացված բարենորոգումների ծրագիրը։ Այն հիմնականում նախատեսում էր հայաբնակ 6 վիլայեթներում (Կարին, Բաղեշ, Վան, Սվազ, Խարբերդ, Դիարբեքիր) կենտրոնական իշխանության ամրապնդում, հասարակական կյանքի զարգացում, արտադրության և տնտեսական դրության կարգավորում։ Խաղաղ ժամանակ «Համիդիե» գնդերը զենք և համազգեստ չպետք է կրեին։ Բոլոր քաղաքացիական և ոստիկանական պաշտոնյաները պետք է բաշխվեին մահմեդականի և քրիստոնյայի միջև համաչափ։ Նահանգապետերը պետք է լինեին ընդունակ, բարեխիղճ անձնավորություններ և նշանակվեին պաշտոնի առանց կրոնի խտրականության 5 տարի ժամկետով։ Որոշ ձգձգումներից և դիտողություններից հետո սուլթանը ի վերջո համաձայնություն տվեց վավերացնել այն 1895 թ. հոկտեմբերի 8-ին։ Այնուհանդերձ, այդ ծրագիրը ևս չգործադրվեց կյանքում և հայկական կոտորածները շարունակվեցին նոր թափով։

20. Նկատի ունի 1839 և 1856 թվականներին հրապարակված կայսերական հրովարտակները, որոնք խոստանում էին ապահովել Օսմանյան կայսրության բոլոր հպատակների կյանքը, պատիվը և ունեցվածքը, հարկերի արդարացի գանձումը, վերացնել կապալային սիստեմը, կանոնավորել զինվորական ծառայության ժամկետը, դատական գործը, ժառանգության հարցը, վերացնել կաշառակերությունը, չարաշահումները և այլն։ Սակայն քրիստոնյաների վիճակը բարելավելու վերաբերյալ սուլթանական կառավարության բազմաթիվ խոստումները մնացին թղթի վրա և չգործադրվեցին կյանքում։

21. Տե՛ս «Քյամիլ փաշայի հուշերը, էջ 180-187»։

22. Նկատի ունի 1895 թ. սեպտեմբերին Հնչակյան կուսակցության նախաձեռնությամբ կազմակերպված Կ. Պոլսի խաղաղ ցույցը, որի նպատակն էր մայիսյան բարենորոգումների գործադրման խնդրում հրավիրել եվրոպական տերությունների ուշադրությունը։ Մոտ երկու հազար հայեր հավաքվում են Քում Քափուի բակում՝ պահանջելով իրագործել «Մայիսյան բարենորոգումներ»ի ծրագիրը։ Այնուհետև ցուցարարների թափորը շարժվում է դեպի Բարձրագույն դուռ։ Դրանից էլ ցույցը ստացավ «Պապ-ը Ալիի ցույց» անունը։ Զորքը և մահմեդական ամբոխը, հիմնականում՝ սոֆթաները (մահմեդական կրոնական դպրոցների սաներ) փակում են ցուցարարների ճանապարհը։

23. Տե՛ս «Քյամիլ փաշայի հուշերը, էջ 186»։

24. Քյամիլ փաշան բացահայտորեն ձգտել է խեղաթյուրել իրական դեպքերը։ Սուլթանական կառավարության կողմից Էրզրումում, Սասունում, Կ. Պոլսում և այլուր կազմակերպված կոտորածները զգաստացրել էին զեյթունցիներին։ Եվ, իրոք, կառավարության ուշադրությունից չվրիպեց նաև դյուցազնական Զեյթունը։ Թուրքական չորրորդ բանակի զինվորները հարձակվելով Զեյթունի հայաբնակ գյուղերի վրա, կոտորում էին բնակչությանը, ավերում ու թալանում՝ բնակավայրերը։ Իսկ զեյթունցիների ինքնապաշտպանության ջոկատները հերոսական դիմադրություն էին ցուցադրում թուրքական կանոնավոր բանակին։ Այդ օրերին սուլթան Աբդուլ Համիդը հայտարարում էր. «Քարտեսի վրայից պետք է ջնջել Զեյթունը»։ Աբդուլ Համիդի այս ցանկությունը իրականացավ 1915 թ. մայիսի 15-ին, արևմտահայերի կոտորածների ընթացքում, երբ սուլթան Մեհմեդ Ռեշադի կայսերական հրամանագրով Զեյթունի կազան վերանվանվեց Սուլեյմանլը։ Տե՛ս «Düstur, Tertip-i Sani, c.7, Dersaadet, 1336, s. 615 (արաբատառ)։ Այս հրամանագիրը հրապարակված է նաև Takvim-i Vekayi պաշտոնական թերթում, տե՛ս հունիս 8, 1915 թ., no. 2196 (արաբատառ)։

25. Տե՛ս «Քյամիլ փաշայի հուշերը, էջ 187»։

26. Արդուլ Համիդի բռնատիրության շրջանում երկրի ամբողջ կառավարումը գտնվում էր նրա ձեռքում: Բոլոր հարցերը վճռվում էին «Եըլդըզի» պալատում: Այդ մասին վկայում է պալատի գլխավոր քարտուղար Թահսին փաշան. «Այն, ինչ կատարվում էր ամբողջ երկրի ներսում, դեռևս, համապատասխան պաշտոնատները հաղորդակից չեղած, հասցվում էր սուլթանի ականջին: Որևէ խնդրի վերաբերյալ, երբ նախարարությունները զեկույց էին ներկայացնում պալատ, սուլթանը արդեն վաղօրոք գիտեր այդ մասին: Լինում էին նաև այնպիսի հարցեր, որոնք դեռևս Բարձրագույն դուռ չհասած վճռվում էին պալատի մեջ» (Տե՛ս «Tahsin paşa, Esbak Mabeyn başkatibi, Yıldız Hatıraları, Istanbul, 1931, s. 32):

27. Տե՛ս «Քյամիլ փաշայի հուշերը, էջ 189»:

28. Կամբոն Պոլ (1843-1924) ֆրանսիացի դիվանագետ, 1891-1898 թթ. Ֆրանսիայի դեսպանը Կ. Պոլսում:

29. Տե՛ս «Քյամիլ փաշայի հուշերը, էջ 189»:

30. Տե՛ս «Քյամիլ փաշայի հուշերը, էջ 191»:

31. Նկատի ունի 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը:

32. Նկատի ունի Անգլիայի և Թուրքիայի միջև 1878 թ. հունիսի 4-ին կնքված պաշտպանական գաղտնի պայմանագիրը: Ըստ այդ պայմանագրի Անգլիան պարտավորվում էր զենքով օգնել Թուրքիային՝ ասիական տիրապետության սահմանները պաշտպանելու համար: Դրա դիմաց Անգլիան ստանում էր Կիպրոսի նվաճման իրավունքը:

33. Գտնվում է Զերնոդորիայի հարավում, Ադրիական ծովի ափին, Դրինյան ծովախորշում:

34. Լայերտ Հենրի Առստեն, Կ. Պոլսում Անգլիայի դեսպան:

35. Արևելյան հարցի նկատմամբ անգլիական քաղաքականության վերաբերյալ այս խորհրդածությունները Քյամիլ փաշան գրի է առել 1883 թ.: (Տե՛ս Hilmi Kamil Bayur, Sadrazam Kamil paşanın siyasi Hayatı, Ankara,1954, s. 18):

36. Նկատի ունի 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը:

37. Ռուսաստանի արտաքին գործերի նախարար 1856-1879 թվականներին:

38. Նկատի ունի 1878 թ. մարտի 3-ին Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը:

39. Այս հատվածը բերված է Զեյթունի դեպքերի առիթով Քյամիլ փաշայի ներկայացրած զեկուցագրից՝ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին և ընթացքում: (Տե՛ս Hilmi Kamil Bayur, Sadrazam Kamil paşanın siyasi Hayatı, Ankara,1954, s. 17):

Բ. 1895 թ. Պապ-ը Ալիի ցույցը մեծ վեզիր Սայիդ փաշայի հուշագրության մեջ

1. Said paşanın hatıratı, Istanbul, 1328, c.1, s.40:

Այս Սայիդ փաշան պետք չէ շփոթել Սայիդ Հալիմ փաշայի հետ, որը նույնպես մեծ վեզիր էր Երիտթուրքերի օրոք և արևմտահայերի կոտորածի հանցանքի համար ահաբեկվեց Արշավիր Շիրակյանի կողմից Հռոմում, 1921 թ. դեկտեմբեր 6-ին:

2. Թուրխան փաշա,–Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար:

3. Նկատի ունի Օսմանյան կայսրության սուլթան Արդուլ Համիդ Բ.-ին (1876-1909 թթ.):

4. Նկատի ունի Կ. Պոլսի հայոց պատրիարք Մատթեոս Իզմիրլյանին (1845-1910 թթ.):

5. Հասկանալի, որ թուրք բարձրաստիճան պաշտոնյան, ինչպիսին Սայիդ փաշան էր, չէր կարող հայերի նկատմամբ գործադրվող դաժանությունների մասին մանրամասն կանգ առնել: Բայց, որ հայերի վրա հարձակվողների թվում եղել են ծպտյալ զինվորներ և ուսանողներ, հաստատում են

նախապես նենգորեն կազմակերպված դավադրության մասին։

6. Ֆրնդլը,–թաղամաս Ստամբուլում։

7. Սայիդ փաշայի այս միտքը չի համապատասխանում իրականությանը, քանի որ ցույցը բացառապես խաղաղ բնույթ ուներ։

8. Արիզա,–սուլթանին ուղղված խնդրագիր։

9. Այս գրության մեջ Սայիդ փաշան կանգ է առել նաև Հունաստանի և Ջերնոգորիայի հարցերի շուրջ։

10. Said pa՝an դr hatդratդ, Istanbul, 1328, c.2, s. 372։ Նկատի ունի սուլթան Աբդուլ Համիդի հայերի ազգային-ազատագրական պայքարը ճնշելու համար քուրդ ցեղախմբերից կազմակերպված (իր անունով՝ «Համիդիե») անկանոն զորագնդերը։

11. Մուսթաֆա փաշայի հաշվեհարդարը կազմակերպեց Անդրանիկ փաշան։

12. Խոսքը վերաբերվում է 1901 թ. Մշո Ս. Առաքելոց Վանքի պաշտպանական մարտերին, որոնց գլխավորում էր Անդրանիկը։

Գ. Օսմանիզմի գաղափարախոսությունը երիտթուրքական գործիչ Ջելալ Նուրիի երկերում

1. Տե՛ս Ռ. Սաֆրաստյան. Օսմանիզմի ուսմունքը Օսմանյան կայսրության քաղաքական կյանքում, Երևան, 1985, էջ 41 (ռուսերեն)։

2. Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991, էջ 266։

3. Lepsius J. ,- Der Todesgang des Armenischen Volkes, Podsdam, 1930, s. 222.

4. Տե՛ս «Ազգ», ապրիլ 30, 1994, էջ 6։

5. Նկատի ունի 1911-1913 թթ. բալկանյան պատերազմները։

6. 1911-1912 թթ. իտալա-թուրքական պատերազմի ընթացքում Ռոդոսը գրավվեց իտալացիների կողմից։ Ռոդոսը Հունաստանին միացավ 1947 թ. Փարիզի հաշտության պայմանագրով։

7. Նկատի ունի սուլթան Աբդուլ Համիդ երկրորդին (1842-1918)։ Իսկ սուլթանի բռնությունները առնչվում են 1894-96 թթ. Սասունում և այլ հայաբնակ վայրերում տեղի ունեցած կոտորածների հետ, որոնց զոհ գնացին 300 000 հայեր։

8. Ոչ միայն Ջելալ Նուրին, այլև մյուս թուրք պատմաբաններն ու քաղաքական գործիչները դիտումնավոր կերպով միշտ էլ աշխատել են նվազեցնել հայերի թիվը Արևմտյան Հայաստանում։

9. Կրկին նկատի ունի 1894-96 թթ. Սասունի և այլ հայաբնակ վայրերում, ինչպես նաև 1909 թ. Ադանայում տեղի ունեցած կոտորածները։

10. Շահրիկյան Հարություն (Ատոմ),–հայ հրապարակախոս և հասարակական գործիչ։ Տվյալ ժամանակ եղել է «Ազատամարտ» թերթի խմբագիրը։ Հրատարակել է պատմական և հրապարակախոսային մի շարք աշխատություններ և հոդվածներ։

11. Հայերեն գրախոսականը նախ լույս է տեսել «Ազատամարտ»ի էջերում, իսկ հետո՝ առանձին գրքով Կ. Պոլսում 1913 թ. հետևյալ խորագրով. «Օսմանյան կայսրության անկման պատմությունը. երիտասարդ թուրքերի վերանորոգվող դպրոցը»։ 1913 թ. Ս. Սիրանեսը հայերենից թուրքերեն է թարգմանել Հ. Շահրիկյանի վերոհիշյալ աշխատանքը և հրատարակել առանձին գրքով (Տե՛ս «Osmanlդ Imparatorluեunun tarih-i tedennisi», Istanbul, 1913 (արաբատառ)։ Հ. Շահրիկյանի գրախոսականում մանրամասն վերլուծվել և քննադատվել է Ջելալ Նուրիի «Օսմանյան կայսրության անկման պատմությունը» (Tarih-i tedenniat-i Osmaniye) աշխատությունը։ Հեղինակը, հատկապես, կանգ է առել Ջելալ

Նուրիի պանիսլամիզմի և օսմանիզմի գաղափարախոսության սխալ տեսակետների և կայսրության ժողովուրդների նկատմամբ կիրառվող միաձուլման քաղաքականության վրա։ «Ջելալ Նուրին չէ կրցեր ինքն ալ ձաղկած նախապաշարումներէն ամբողջովին ազատիլ–գրել է Հ. Շահրիկյանը,–եւ իր եզրակացութեան մէջ հասեր է վելատին նախկին ժէօնթուրքական չովինիզմին՝ թէև ավելի փափկացած եւ ավելի նրբացած ձեւով» (տե՛ս «Օսմանյան կայսրության անկման պատմությունը», էջ 4)։

12. Այսինքն՝ ուզում է ասել որևէ թուրք հեղինակի նախաձեռնությունը։

13. Բնականաբար Ջելալ Նուրիի այս մեկնաբանությունները սխալ են և անընդունելի, քանի որ ըստ նրան, բացահայտ դատապարտվում է հայերի ազգային ինքնագիտակցության հարցն ու ազգային ազատագրական պայքարը։

14. Այո՛ պարտավոր էիք։ Դժբախտաբար կարճ ժամանակ անց կատարվեց ճիշտ հակառակը։ Հայերի հալածանքների և կոտորածների հետևանքով զոհ գնաց մեկուկես միլիոն մարդ։ 20-րդ դարի սկզբին կատարվեց առաջին ահավոր ցեղասպանությունը։

15. Բնականաբար, քուրդ ժողովրդի մասին Ջելալ Նուրիի այս դատողությունները ևս անհիմն են և անընդունելի։ Այսօր բոլորին հայտնի է, թե ինչպիսի ճգնաժամային հոդեվարք է ապրում քրդական հարցը Թուրքիայում։

16. Իսկ հետագայում, Թուրքական հանրապետության շրջանում, պաշտոնատար անձինք սկսեցին քրդերին անվանել «Լեռնային Թուրքեր»։

17. Տե՛ս Tarih-i Istikbal, էջ 177-185։

18. Լավ կլիներ, որ ժամանակակից Թուրք պատմաբաններն ու պետական գործիչները, որոնք ուրանում և հերքում են հայերի կոտորածները, ուշադրություն դարձնեին Ջելալ Նուրիի այս արտահայտության վրա։

19. Իրականում, այս և հաջորդ 1911 թ. «Միություն և առաջադիմություն» կուսակության խորհրդաժողովում Ջելալ Նուրին առաջարկություններ է կատարել Օսմանյան կայսրության ոչ-մահմեդական ժողովուրդների միաձուլման ծրագրի մասին (Տե՛ս «Օսմանյան կայսրության անկման պատմությունը», էջ 67։

20. Այստեղ Ջելալ Նուրին թույլ է տվել բացահայտ սխալ, որովհետև միջնադարի հայկական և թուրքական պատմագրական աղբյուրներում եկեղեցիների քանդման կամ մզկիթի ձևափոխման մասին կան բազմաթիվ փաստեր։ Տե՛ս Ավետիս Փափազյան. «Արևմտահայության վիճակը ըստ Օսմանյան սուլթանական ֆերմանների (XVI-XVII ԴԴ.), Պատմա-բանասիրական հանդես», 1988, No., էջ 126-127։

21. Տե՛ս «Osmanlի Imparatorluեunun tarih-i tedennisi», Istanbul, 1913, s. 96-100 ։

Դ. Հայկական հարցը և Մեծ եղեռնը Ջեմալ փաշայի հուշագրության մեջ

1. Տե՛ս Behcet Cemal, Cemal paՀa, «Hatդralar», Ankara, 1959, s. 338։

2. Հակոբ Պարոնյան, «Երկեր», Երևան, 1958, էջ 6-7։

3. Հակոբ Պարոնյան, «Երկեր», Երևան, 1958, էջ 7։

4. Cemal paՀa, «Hatդralar», s. 339։

5. Cemal paՀa, «Hatդralar», s. 340։

6. Cemal pasa, «Hatդralar», s. 253։

7. Տոքթ. Ալեքսան Քէչիշյան. «Վավերագրական էջեր «Ալ Թագատտոմ» օրաթերթէն»։ Տե՛ս «Բաղին» ամսագիր, 10-11-12, 1995 թ., Պէյրութ, էջ 75։

8. Cemal paՀa, «Hatդralar», s. 358։

9. Cemal paՀa, «Hatդralar», s. 359։

10. Cemal paՀa, «Hatդralar», s. 362։

11. Ջոն Կիրակոսյան. «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը», Երևան, 1965, էջ 329:

12. Տե՛ս «Memoirs of a Turkish Statesman, 1913-1919, George H. Doran Co., London, 1922, 302 p., Djemal Pascha, Erinnerungen eines Türkischen Stadtsmannes, München, 1922:

13. Տե՛ս Behcet Cemal, Cemal pa'a, «Hatıralar», Ankara, 1919, Istanbul, 1977:

Ե. Հայերի ցեղասպանության գլխավոր հանցագործ Թալեաթ փաշայի հուշագրության մասին

1. «Talât pa'an ın hatıralarına», Istanbul, 1946, s. 5,8:

2. «Talât pa'an ın hatıralarına», Istanbul, 1946, s. 43-149:

3. «Talât pa'an ın hatıralarına», Istanbul, 1946, s. 45:

4. Ermeni Komitelerinin âmal ve harekât-ı ihtilalyasına, Istanbul, 1946 (արաբատառ թուրքերեն):

5. Տես Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991, էջ 491:

6. «Talât pa'an ın hatıralarına», Istanbul, 1946, s. 64:

7. «Talât pa'an ın hatıralarına», Istanbul, 1946, s. 74:

8. P. D. Qaaj-m, Enjslfmr[lkaenrspfv-jndn jnlirfra n dfmnvief haoaem[u apl-m c 1915-1916 dd.- "lhcfqri- AM Aplfmiî", No. 3, 1965, qrp. 79, 80, 81. Այս և այլ հեռագրերը առաջին անգամ լույս է ընծայել Արամ Անտոնյանը: Տե՛ս The Memoirs of Naim bey. Turkish official documents relating to the Deportations and Massacres of Armenians. Compiled by Aram Andonian, London, 1920:

9. P. D. Qaaj-m, Enjslfmr[lkaenrspfv-jndn jnlirfra n dfmnvief haoaem[u apl-m c 1915-1916 dd.- "lhcfqri- AM Aplfmiî", No. 3,

1965, qrp. 72, 73.

10. Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991, էջ 600:

11. Ավետիս Փափազյան. «Հայերի ցեղասպանությունը ըստ Երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի», Երևան, 1989, էջ 40:

12. Memoirs of Halide Edip, New - York, London, p. 387:

Զ. Ովքե՞ր ամփոփվեցին «Հյուրրիեթ-ի Էբեզիե» պանթեոնում

1. Տե՛ս «Ասպարեզ», օգոստոս 6, 1996:

2. Takvim-i vekayi, 27 Nisan, 1335 (1919 թ.), թիվ 3540. 5 temmuz, 1335, թիվ 3604 թուրքական պաշտոնական թերթի հավելված, արաբատառ թուրքերենով:

3. Takvim-i vekayi, 5 temmuz, 1335 (1919 թ.), թիվ 3604:

4. Տե՛ս Behcet Cemal, Cemal pa'a, Hatıralar, Ankara, 1959, s. 359:

5. Takvim-i vekayi, 27 Nisan, 1335, թիվ 3540:

6. Takvim-i vekayi, 27 Nisan, 1335 (1919թ.), թիվ 3540:

7. Տե՛ս «Ասպարեզ», օգոստոս 6, 1996:

8. Այս հատվածը քաղել ենք հայ մտավորական Սարգիս Յափուջյանին ուղղված Ալի Էրթեմի հայտնի նամակից: Այն իր ժամանակին լույս տեսավ «Փարոս» (օգոստոս 1, 2000 թ.), «Նոր Օր» (սեպտեմբեր 2, 2000 թ.), «Նոր Հայաստան» (սեպտեմբեր 23, 2000 թ.) թերթերում: Ամբողջական թարգմանությունը տես էջ 136:

ՀԱՎԵԼՎԱԾ

(ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

1. ԱՆՏԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԱՎԵՐՎՈՒՄ ԵՆ

Հնում, հայերը իրենց տները չվաճառելու համար, հիմքում ոսկի էին թաղում։

Տան հիմքում ոսկի թաղելու սովորությունը բացատրվում էր հետևյալ կերպ. «Երբ էլ լինի մահանալու ենք։ Որպեսզի մեր զավակները չվաճառեն հորից ժառանգություն մնացած պապենական այս տները, եկե՛ք, հիմքում ոսկի թաղենք։ Հենց որ այն սկսի քանդվել, թող այդ ոսկին գտնեն, տունը վերանորոգեն և չվաճառեն այն։ Պապենական տունը չպետք է վաճառվի»։

Այսպես էին ասում հայերը։ Բայց այս տարածաշրջանում 15 տարի տևող կեղտոտ պատերազմը այդպես չի ասում։

Պատերազմը օրենք չի ճանաչում։ Այնպես, որ այս պատերազմը պոկելով ամեն մեկին իր ոսկենման հողից, դարձնում է անհայրենիք։

Գյուղերի հրկիզումը, առանց աչք թարթելու մարդ սպանելու յուրահատուկ դաժանությունները տարածվում են նաև մարդկության հիշողությունը հանդիսացող պատմական շինությունների վրա։

Շարունակվող պատերազմի հետևանքով հայերը, ստիպված, մի կողմից լքում են ավյալ շրջանը, իսկ մյուս կողմից, իրենց պատմության արգասիքը հանդիսացող եկեղեցիներն էլ ավերվում են մեկ առ մեկ։

Մարդկանց հուսալքության հասցնող այս կեղտոտ պատերազմը պատճառ է դառնում նաև մշակութային ահավոր ցեղասպանության։

Պաթմանի Բեշիրի գավառի գյուղերում գտնվող անտեր եկեղեցիները գյուղացիների կողմից օգտագործվում են որպես ապաստարան և հարդ ու խոտի պահեստանոցներ։ Եկեղեցիներում գտնվող պատմական արժեքները գյուղացիների կողմից վաճառվում են չնչին գներով։

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, տեղահանության օրենքով իրենց հայրենիքից բռնագաղթված և մեծ մասը ճանապարհներին կոտորածի ենթարկված հայերի վերջին մնացորդները, 15 տարվա այս կեղտոտ պատերազմի պատճառով պարտադրաբար լքեցին իրենց բնակավայրերը:

Հայերը իրենց հողերը լքելուց հետո, եկեղեցիները ավերվեցին: Այդ թվում կարելի է հիշել Բեշիրի գավառում գտնվող Այրանճի, Քեվերզոժեր (Ներքին Նորաղբյուր) և Հեմզո գյուղերի եկեղեցիները:

Այս շրջանում 200 տարվա հնություն ունեցող և որպես հայերի աղոթավայր և հավաքատեղի հանդիսացող՝ Դերաքեվերզո եկեղեցին բոլորովին անտեր վիճակում է և կարծես խրովահույզ տեսքով բարևում է եկող–գնացողներին: Ճիշտ իր ժողովրդի ճակատագրի նման, նա էլ է աքսորված ու լքված:

Դերաքեվերզո եկեղեցին կառուցվել է 1800 թվականին: 1915 թ. հայերի բռնագաղթից հետո, կարծես նա էլ պայքարի մեջ է հարատևման համար: Հայերի տեղահանությունից հետո, այդ շրջանին տիրեց Ռամանի աշիրեթի աղան՝ Էմին Փերիխանը (Էմին աղան):

Էմին աղան եկեղեցու մի մասը օգտագործում էր որպես հարդանոց: 1970 թ., իր մահից հետո, աշիրեթի գլուխն անցավ նրա մեծ որդին՝ Ֆահրեդդին աղան: Ֆահրեդդին աղան երբ հեռացավ գյուղից, եկեղեցին ազատվեց աղաներից. սակայն մյուս կողմից գյուղացիները հերթի էին կանգնած եկեղեցին ոչնչացնելու համար:

Նախ և առաջ, գյուղացիները սկսեցին ոսկի փնտռել եկեղեցու ներքնահարկում: Նրանք կարծում էին, որ եկեղեցու ներքնահարկում ոսկի է թաղված:

Ոսկի չգտան, բայց եկեղեցու հիմքը թուլացավ, պատերը սկսեցին ճաթրտել և ի վերջո առաստաղը փուլ եկավ: Այնուհետև սկսեցին տեղահանել եկեղեցու դռներն ու պատուհանները, որպեսզի օգտագործեն իրենց կառուցած նոր

տներում: Ի միջի այլոց, երբ, գյուղում մի նոր տուն էր կառուցվում, եկեղեցուց անպայման մի բան պակասում էր: Վերջում մնացին եկեղեցու միայն պատերը: Իսկ հետագայում, գյուղացիները իրենց նոր տների համար սկսեցին օգտագործել նաև եկեղեցու սրբատաշ քարերը: Այնուհանդերձ, եկեղեցու կանգուն մնացած մասերը շարունակվեցին օգտագործվել որպես հարդանոց:

1980 թվականի սկզբին, եկեղեցին այլևս չդիմանալով այս ավերումին, վերջնականապես փլվեց: Քարակույտի վերածված եկեղեցու քարերը դեռևս շարունակվում էին օգտագործվել գյուղացիների կողմից:

Ժողովրդի հետ նույն ճակատագրին արժանացած եկեղեցիները այսօր վկաներն են իրենց ժողովրդի անհետացման:

Մի ժամանակ գյուղացիները «մեղք է» ասելով ձեռք չէին տալիս եկեղեցիներին, իսկ հիմա, առաջվա պես չեն վախենում այլևս[2]:

2. ԳՐԱՏԱԽՏԱԿ ԴԱՐՁԱԾ ԱՂԲՅՈՒՐ–ՀՈՒՇԱՐՁԱՆԸ (ԲՈՅԱՃԸ ՔՅՈՅԻ[3] ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՏ ԱՆՀԵՏԱՑՈՂ ՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ)

Մեր պատմության էջերում ճեղքված քներ են առաջ գալիս: Բոյաճը քյոյից անցնելիս, Ս. Երից Մանկանց եկեղեցուն կից ուշադրությունս գրավեց մի աղբյուր–հուշարձան: Եկեղեցի այցելողներից ծառավողները գալիս էին այս աղբյուրից ջուր խմելու. սակայն իզուր... Տեղեկացանք, որ տարիներից ի վեր այս եկեղեցու վրա փողոցից քար չպրտողների պատճառով, ջարդվել է նաև աղբյուրի ծորակը:

Այս բոլորից հետո եկեղեցու ետևի դռան վրա զետեղված մի ցուցատախտակի վրա գրված է. «Երկրում խաղաղություն,

աշխարհում խաղաղություն»[4]:

Առաջին հայացքից մոլախոտով պարուրված աղբյուր–հուշարձանի վրա նկատվում է կոտրված և ցամաքած ծորակը: Վայրի մոլախոտերը մաքրելուց հետո մի անգամ ևս մատնվում ենք չփոթության:

Աղբյուր–հուշարձանի ճակատում կա հայերեն մի գրություն: Ներքևում փչովի ներկով գրված են սպորտային լոգունգներ, սիրեցյալին նվիրված տողեր, ընտրության ցուցանակներ...:

Պարզվում է, որ այս աղբյուր–հուշարձանը սովորաբար օգտագործվում է որպես գրատախտակ: Մինչդեռ, եկեղեցին կառուցող Միսաք Ամիրան[5] մարմարյա այս աղբյուր–հուշարձանը նվիրել է հոր հիշատակին: Այնինչ, այսօր նրա ոսկորները մղկտանքի մեջ են:

Նկատի ունենալով, որ մեր հաջորդ այցելության ընթացքում այս աղբյուր–հուշարձանն էլ կարող է այլևս իր տեղում չլինել... սեղմում եմ դռան զանգը և եկեղեցու ծառայողների ուշադրությունը հրավիրում աղբյուր–հուշարձանի այդ վիճակի վրա[6]:

3. ԱՅՆԹԱՊԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՎԱՐՊԵՏՆԵՐՆ ԵՆ ԿԵՐՏԵԼ

Էրսին Թոքերը «Կեզի» (ճամբորդություն) հանդեսի նոյեմբերի համարում կազի Այնթապի խճանկարային մշակույթի վերաբերյալ մի գրություն էր հրատարակել:

Է. Թոքերը նշում է, որ դեպի տարբեր քաղաքներ հապճեպ գաղթ տեղի ունենալու հետևանքով, Այնթապցիների կողմից լքված տներում եկել և բնակություն են հաստատել Հաքիարիի բնակիչները, մալաթիացիները, ուրֆացիները: Այնուհետև, տեղանքի չինարարական կառուցվածքին անդրադառնալով նա նշում է հետևյալը.

«Մի շարք թաղամասերում առկա են ջրավազանները իրար միացնող ջրատարի խողովակներ: Շենքերի վերևի հարկերի մուտքը պարտադիր կերպով կատարվում է դրսում կառուցված աստիճանների միջոցով: Արտաքին տեսքից երևում է, որ քարաշեն բոլոր շինությունները հայ վարպետի ձեռքի գործն է: 1892 թ. Թեփեբաշիում կառուցված հայկական եկեղեցին (Ս. Աստվածածին) նախապես օգտագործվել է որպես բանտ, իսկ հետագայում (հանրապետության հռչակման օրերին) վերափոխվել է մզկիթի: Ըստ ամերիկյան հանրագիտարանի կազի Այնթապը աշխարհի ամենահնագույն քաղաքներից է: Մ. Թ. առաջ 539 թ. տվյալ վայրը գտնվել է պարսկական գերիշխանության տակ, իսկ այնուհետև անցել է Ալեքսանդր Մեծին»[7]:

4. ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ[8]

«Ճումհուրիյեթ» (դեկտեմբեր 12, 2000 թ.) թերթում գրի առած իր հոդվածում, Օքթայ Էքինճին հայտնում է, թե ինքը ինչպիսի հույսեր է ունեցել, երբ տեղեկացել է, որ Իգդիրի ցեղասպանության հուշարձանը կանգնեցվել է բարեկամության նպատակով: Սակայն այցելության ընթացքում, տեսնելով հուշարձանի վրայի սրերը, բոլորովին հուսախաբվել է.

«Կարսից դեպի Իգդիր, Դեկորի և Թուզլուճայի վրայով 5-6 տարի առաջ գործածության մեջ մտած նոր ճանապարհը, որոշ հատվածում զուգահեռաբար անցնում է Արփաչայի կողքով: Իսկ Արփաչայի հակառակ ափին, մի քար չպրտելու հեռավորության վրա, գտնվում են հայկական գյուղեր:

Նախապես լսած լինելով, որ Իգդիրի ցեղասպանության հուշարձանը կանգնեցված է «բարեկամության նպատակով», ուստի մոտենում ենք նրան այդպիսի հույսով և հուզմունքից

աչքերով։ Այնուհանդերձ, նկատելով 43.5 մետր բարձրության վրա 5 հսկա «սրերի» ժամանակավորապես խաչաձևված ծայրերի դեպի երկինք սարսափազդու և տպավորիչ խոյանքը, իր «ամեն րոպե պատերազմելու պատրաստ», «սպասողական» վիճակով, մենք կատարելապես հուսահատվեցինք և, նույնիսկ, հուզմունքով տխրեցինք։ Որովհետև ցեղասպանության հուշարձանի ներքևի «թանգարանի» բաժնից մինչև վերևի մասում գտնվող մակերևութապատկերները, այդ թվում, բոլոր գրությունները ու տեսարանները ցույց են տալիս, թե հայերը ի՞նչ աստիճանի «թշնամի են եղել թուրքերի և մահմեդականների հանդեպ»։

Հայաստանի մայրաքաղաք Երևանից էլ իր ամբողջ անհեթեթությամբ երևացող այս աստիճան «բարձր» կառուցված հուշարձանի համար նախորդ տարի ծախսվել է «4 տրիլիոն լիրա»։

Տարօրինակ է, որ երբևէ ծանր թեթև չի արվել, թե նման ծախսերը «ի՞նչ նպատակի կարող էին ծառայել», այն ժամանակ, երբ Իգդիրի վերականգնման և զարգացման աշխատանքներին, նրա տնտեսական և մշակութային ծրագրերի իրականացման համար առկա էին «ֆինանսական դժվարություններ»։

«Հանուն Թուրքիայի» կանգնեցված հուշարձանի շրջանում ոչ մի ժողովրդական քննարկում չի եղել։ Այնպես, որ 43.5 մետր բարձրություն ունեցող շինությունը ո՛չ ճարտարապետական տեսք ունի, ո՛չ էլ շինության թույլտվություն։

Այսինքն, ցեղասպանության այս հուշարձանը, որի համար ծախսվել է 4 տրիլիոն լիրա ժողովրդական դրամ, հակադիր լինելով «Թուրքիայի Հանրապետության օրենքներին» կառուցվել է մագանենգաբար։ Տվյալ վայրն էլ քանի հասարակությանը չի պատկանել, «պաշտոնական տերը» անհայտ է և չկա ոչ մի «կալվածագիր»։

Ցեղասպանության հուշարձանը իր կնիքն է դրել նաև

Ադրբեջանի և Հայաստանի միջև առկա «պաշտոնական և միջպետական հակամարտությունների» «գաղափարական և քաղաքական տեսակետների վրա» այն աստիճան, որ դուցե նման դեպքում Ադրբեջանն էլ կարող էր «սահմանափակ վերապահություն ցուցաբերել»։

Հուշարձանի վրա տեղ են գտել Հայաստանի կառավարության ղեկավարների վառած քաղաքականությունից առավելի շատ «հայ ժողովրդին ստորացնող», ինչպես նաև, ցեղապաշտ և ազգայնամոլական «թրքությունը» խորհրդանշող արտահայտություններ, հաղորդումներ և լոզունգներ։ Մի խոսքով, կարծում եմ, որ Ադրբեջանն էլ թույլ չեր տա նման «սադրիչ» հուշարձանի կանգնեցումը[9]։

5. ՀԱՐԳԱՆՔՈՎ ԽՈՆԱՐՀՎՈՒՄ ԵՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՌԱՋ

(Թուրք մտավորական Ալի Էրթեմի արդարամիտ և արժանավայել պատասխանը)

Ալի Էրթեմը, Ֆրանկֆուրտում գտնվող «Ընդդեմ ցեղասպանության կազմակերպության» նախագահն է։ Այս արդարամիտ թուրք մտավորականը իր գործընկերների հետ ջանադիր աշխատում է, որպեսզի աշխարհի բոլոր պետությունները, այդ թվում և Թուրքիան, ճանաչեն և դատապարտեն հայերի ցեղասպանության փաստը։

1999 թ. նոյեմբերին նա խիստ գործնական քայլ կատարեց այդ ուղղությամբ։

1915 թ. հայերի կրած վնասի համար, որպես խորհրդանշող հատուցում՝ 300 դոլար նվիրեց Երևանի Ծիծեռնակաբերդի հայ նահատակների հուշարձանին կից գտնվող հայերի ցեղասպանության թանգարանին։ Միևնույն ժամանակ պարտավորվեց մինչև իր կյանքի վերջը ամսական 25

դոլար հատկացնել թանգարանին, կոչ անելով նաև, որ իր հայրենակիցները հետևեն իր օրինակին:

The California Courier շաբաթաթերթի հրատարակիչ, հանրածանոթ լրագրող՝ Հարութ Սասունյանը իր ժամանակին կոչ-հաղորդում հրապարակեց մամուլում, որպեսզի հայ ընթերցողները գրեն պրն. Ալի Էրթեմին, շնորհակալություն հայտնելով նրա ազնիվ ու վեհ արարքի համար:

Ընթառաջելով այդ կոչին, հրապարակախոս և գրաքննադատ՝ Սարգիս Յափուջյանը գնահատանքի և քաջալերանքի բաց նամակ գրեց Ալի Էրթեմին:

Հարգարժան ավագ գրչեղբորս՝ Սարգիս Յափուջյանի ցանկությամբ, ես այդ նամակը թարգմանեցի թուրքերեն և լոսանջելեսաբնակ մի շարք հայ մտավորականների ստորագրություններով ուղարկեցինք Ֆրանկֆուրտ՝ Ալի Էրթեմին:

Անցավ որոշ ժամանակ և ահա պրն. Սարգիս Յափուջյանը ստացավ պատասխան նամակը Ալի Էրթեմից: Կրկին ընդառաջելով նրա ցանկությանը, այն թուրքերենից թարգմանեցի հայերենի:

Առանց մեկնաբանության նշեմ, որ Ալի Էրթեմի պատասխան նամակը արժանի է ամենաբարձր գնահատանքի, քանի որ այն գրված է անաչառ, գիտական խոր վերլուծությամբ և ճշմարտությունը պաշտպանելու ոգով:

Սարգիս Յափուջյանի բաց նամակը հրատարակվեց Լոս Անջելեսի հայ մամուլում 2000 թ. փետրվարին: Այնուհանդերձ, նպատակահարմար գտանք, ըստ պատշաճի, կրկին հրատարակել այն Ալի Էրթեմի նամակին զուգընթաց, որպեսզի պատկերացումը լինի ավելի կատարյալ:

Ալի Էրթեմի պատասխանը ստանալուց հետո, նա նպատակ ուներ մի երկրորդ նամակ գրել նրան, բայց չհասցրեց: 2000 թ. հունվար 15-ին Սարգիս Յափուջյանը ընդմիշտ հեռացավ այս աշխարհից, թողնելով բարի անուն և գրականագիտական հարուստ ժառանգություն:

ՍԱՐԳԻՍ ՅԱՓՈՒՋՅԱՆԻ ԲԱՑ ՆԱՄԱԿԸ ԱԼԻ ԷՐԹԵՄԻՆ՝ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԻԱԿԱՄ ԱՍՊԵՏԻՆ

Մեծարգո պրն. Էրթեմ,

Ահա, նստած գրասեղանիս առաջ, ես 85-ամյա հայ ծերունիս, նամակ եմ գրում ձեզ, ասելու համար, թե դուք այն թուրք մարդն եք, որի գոյությանը հավատացել եմ և հայտնությանը սպասել ամբողջ կյանքում...:

Դուք պե՛տք է որ գայիք: Դուք չե՛իք կարող չգալ: Եթե դուք չգայիք, վիրավոր արդարությունը կմահանար...: Իսկ մարդիկ ինչպե՞ս կապրեին մի աշխարհում, ուր մահացած-մոռացված է արդարությունը...:

Ու եկաք: Եկաք ճշմարտության և ազատության թուրք ազատամարտիկներ՝ Մեվլան Զադեի, Ռաքբպ Զարաքոլուի և Թաներ Աքչամի ճանապարհով: Ինչպես նրանք, դուք ևս ընդունեցիք հայերի դեմ գործադրված ցեղասպանության փաստը, բայց մի քայլ ևս առաջ անցնելով, դուք ընդունեցիք նաև կատարվածի մեջ ձեր ժառանգական պատասխանատվության բաժինը: Եվ որպես սկզբունքային մարդ, խոսքից անցնելով գործի, դո՛ւք առաջինը հայ-թուրքական հարաբերության պատմության մեջ, որոշեցիք վնասուց հատուցում վճառել ցկյանս ամսական 25 դոլար խորհրդանշական գումարով: Եվ դուք այսպես իմաստավորեցիք ձեր արարքը. «Այս կընեմ, որպեսզի օրինակ ծառայեմ իմ երկրիս և համաերկրացիներուս»:

Սակայն, նախ պետք է ասեի, թե ո՞վ եմ ես և ինչո՞ւ եմ խոսում այս բաների մասին:

Սարգիս Արթին Յափուջյան, չի՛նարար հայ ընտանիքի զավակ, ծնած 1914-ին, Քիլիս գյուղաքաղաքում: Իմ տոհմը Յափուջի (չինարար) են կոչել-կնքել ձեր և իմ երբեմնի հայրենակիցները, այն բանի համար, որ պապիս հայրը, ապա՝

Ալապա ու հայրս Քիլիսում բնակության տներ, խաներ ու շաղնիքներ են կառուցել։ Կառուցել են ամրահիմն ու գեղեցիկ։ Կառուցել սիրով և չկասկածելով երբե՛ք, որ մի օր, չգիտես ինչո՞ւ, իրենց և իրենց զավակներին սեփական տներից, արհեստանոցներից, արտ ու այգիներից, դպրոցներից ու աղոթատներից կհանեն դուրս բռնությամբ ու կնետեն սուրիական անապատների մահաստանները...։

Այո՛, չեն կասկածել, բայց ինչքա՛ն էլ անհավատալի, եղել է այսպես։ Մանրամասնությունները արյուն սառեցնելու չափ զարհուրելի են։ Չեմ պատմի։ Հիշեցնեմ միայն մի իրողություն։ Մինչ ջահել հայրս, որպես հայրենիքի քաջասիրտ զինվոր, կկռվեր և արյուն կթափեր (երկու անգամ) Զանգեզուրի ռազմաճակատում, ճիշտ այդ տարիներին (1914-1918), նրա հիվանդ մայրը, ջահել անփորձ կինը և ես, նրա սիրո առաջին պտուղը, 40 օրական գրկի մանուկ, անտերաանօգնական թափառել ենք Համայի, Հրմսի, Շեմսիի և Մաանի կիզիչ չոլերում, ուր մեզ անվերջ հետապնդել-հալածել են մահվան հոտ առած գայլերի և շնագայլերի վոհմակները և, նրանցից ավելի դաժան, մարդկանց չարասրտությունը...։

Չգիտեմ, թե ի՞նչ հրաշքով ես ապրեցի, երբ չո՛ր բոլորս անակիզբ-անվերջ, այրող-մրրկող ավազ էր ու սով, ու ծառավ, ու համաճարակ, ու մա՛հ, մա՛հ ու է՛լի մահ...։ Գիտեմ միայն, որ չէի կարող չապրել առանց ձեզ հանդիպելու, առանց հատուցման հույսի, առանց շնորհակալության այս նամակը գրելու...։

Գրեցի ու կարծես, թե խաղաղվեց վիրավոր, խռոված սիրտս։ Դո՛ւք, ձեր մարդկային ազնիվ արարքով, ինձ՝ 85-ամյա ծերունուս, հույս ներշնչեցիք, թե ապագայի մի գեղեցիկ օր, իմ ու ձեր զավակները և նրանց զավակները կապրեն բարի-դրացիական հարաբերությունների խաղաղության մեջ։

Դուք ձեր երկրի իսկական հայրենասերն եք և ձեր ազգի

առաջապահը։ Ես քաջ գիտակցում եմ արդարության, ճշմարտության ու մարդկայնության ճամփան, որ դուք ընտրել եք, դժվար է, տատասկոտ։ Ձեզ՝ ամենակարող Աստծուց, կորով ու արիություն, իսկ մեզանից և աշխարհի բարի կամքի տեր բոլոր մարդկանցից՝ անխար զորակցություն։

Վստահ եղեք, որ պատմությունը, և ձեր, և մեր, պիտի չմոռանա ձեր արածն ու անելիքը, հանուն մեր միջև բարի դրացիության հաստատմանը, որ այս անգամ, մաքրված-սրբված պիտի լինի վերջին ժամանակների անհիմն կասկածներից, վախից ու թշնամանքից։

Ձեզ, ձեր ընտանիքին և ձեզ նման մտածող-գործող բոլոր հայրենակիցներին՝ անամպ երկինք ու երջանկություն։

Հարգանքներով՝ ձեր նախկին հայրենակից և այժմու հարևան՝

ՍԱՐԳԻՍ ԱՐԹԻՆ ՑԱՓՈՒՋՅԱՆ

ԸՆԴԴԵՄ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, ՖՐԱՆԿՖՈՒՐՏ/ՄԱՅՆ

Հարգարժան ավագ գրչեղբորս, խոնարհասիրտ բարձր անհատականության՝ պրն. Սարգիս Ցափուջյանին.

Պրն. Սարգիսի հետ իրենց ստորագրությամբ միևնույն զգացմունքներն ու մտորումները կրող պատվարժան բարեկամներիս։

Ստացա մեզ շատ հուզող Ձեր արժեքավոր նամակը։ Ներողամիտ եղեք, որ չկարողացա անմիջապես պատասխանել Ձեզ։ Աշխատանքային ծանրաբեռնվածությունը արգելք հանդիսացավ, որպեսզի ինքզինքս հավաքեմ և մի անկեղծ բովանդակությամբ նամակ գրեմ Ձեզ։ Այս առումով ձեզանից ներողություն եմ խնդրում։

Չգիտեմ ինչպե՞ս սկսել։ Արդյոք իմ զգացմունքներն ու մտածմունքները ինչպե՞ս բացատրեմ Ձեզ։ Ես երբեք այսպես

խորապես չեմ հուզվել իմ կյանքում և միևնույն ժամանակ այսպիսի երջանկություն չեմ ապրել։

Շատ հուզված եմ, որովհետև իմ երկրի գիտակից ուղեղները ճգմվել են և հմուտ ձեռքերն էլ կոտրատվել։ Իրենց քրտինքով և աշխատանքով ստեղծագործող հավատարիմ և պատվավոր մարդկանց ջարդել են, իսկ ողջ մնացածներին գերեվարել, կամ էլ ջարդ ու փչուր անելով քշել են աշխարհի չորս ծայրերը։

Իրականում, սերունդից-սերունդ փոխանցվող մի անբուժելի վերք է այդ՝ ցեղասպանության վերքը։ Եվ այս վերքը երբեք չի սպիանալու, քանի չեն հաղթանակել ճշմարտությունն ու արդարությունը։

Ապ ու պապերից ինձ ժառանգված հանցագործության համար, իմ տառապանքն ու ամոթանքը վերջ չի ունենալու։

Հակառակ այս բոլորին, կրկին երջանիկ եմ, որովհետև օր-օրի վրա ավելի լավ եմ հասկանում ճշմարտությունը։ Ես տեսնում եմ, թե ինչպես են ձգտում կոծկել իթթիհատական մարդասպաններին և նրանց հանցագործ արարքները։ Տեսնում եմ, թե ինչպես են թաքնվում զրպարտանքի, խարդավանքի, նենգության ու դաժանության վարագույրի ետև։ Մինչդեռ, հայ ժողովրդին ստորացնելու համար գործածվող այդ զրպարտանքները իրականության հետ ոչ մի առնչություն չունեն (ընդգծումը մերն է,-Ա. Փ.)։

Ես հավատում եմ, որ մարդկային վեհ արարք կլինի, եթե այս բոլորի համար ասվի. «այլևս բավական է»։

Մարդկային զգացմունքներից ելներով, առանց վարանելու, այս պարտականությունը ի սրտե ստանձնում եմ իմ վրա։ Եվ իմ գիտակցությամբ, և ուժիս ներածի չափ ձգտում եմ անել ձեռքես եկած ամեն ինչ։ Եվ պիտի աշխատեմ անել։

Նախքան Ձեր նամակը, մի քանի շաբաթ առաջ Լոս Անջելեսում բնակվող Արմինե Մինասյան-Շատվորյան անունով մի տիկնոջից էլ նամակ էի ստացել։ Նրան հասցեագրված

պատասխանում, իմ զգացմունքներին և մտածմունքներին վերաբերող հետևյալ տողերը նույնությամբ մեջ եմ բերում այստեղ, նկատի ունենալով, որ նրանք առնչվում են նաև ձեր նամակի պատասխանի հետ։

«Կարդալով Ձեր կյանքի պատմությունը, որը կարողացել եք խտացնել ընդամենը 2 էջերում, արցունքներս չկարողացա զսպել։ Իրականում, այդ բոլորը անհնար է, նույնիսկ, հարյուրավոր էջերից բաղկացած մի գրքում ընդգրկել։ Նույն զգացմունքները ապրեցին նաև կողակիցս՝ Էլիֆը, ինչպես նաև ինձ հետ միևնույն պայքարի մեջ գտնվող գործընկերներս։ Բոլորս էլ խորապես հուզվեցինք։ Դեռ ավելին, թուրքերեն լեզվով ձեր նամակ գրելը, ինձ առավել ևս ցնցեց։

Համենայն դեպս, վշտով պիտի նշեմ, որ հայ ժողովրդի համար դժոխքի լեզու համարվող թուրքերենով կարող եմ իմ զգացմունքներս ու մտածմունքներս լավագույն ձևով մատուցել Ձեզ։ Երանի ձեր խմացած թուրքերենի չափ, ես էլ հայերեն իմանայի։

Երանի թե, ես էլ կարողանայի այս տողերը հայերենով գրել Ձեզ։ Ափսոս, որ մեր ղեկավարները ոչ մի ժամանակ մեզ չտվեցին այս հնարավորությունը։ Ընդհակառակը, մեր գիտակցությունը վրեժխնդրությամբ և ատելությամբ սնացրին, մեզ կուրացրին։ Նրանք վախեցան մեր միջև ամեն տեսակ մարդկային հարաբերություն ստեղծելու միտումից։

Հակառակ Ձեր կրած աննկարագրելի տանջանքներին և դեռևս արյունահոսող վերքերին, դուք այսպիսի վերաբերմունք ունեցաք մի թուրքի հանդեպ, նույնիսկ, իմ թուրք լինելու հանգամանքը ոչ մի վրեժխնդրություն և ատելություն չառաջացրեց ձեզ մոտ։

Ձեր նամակում, մի կողմից սիրտ մաշեցնող ցավալի իրադարձություններ պատմելով, մյուս կողմից էլ մարդկության դեմ հանցագործություն կատարած մի ժողովրդի վերջին սերնդի մարդու նկատմամբ (այսինքն՝ ինձ և պայ-

քարի իմ գործընկերներին) այսպիսի անկեղծ ու ամենամարդասիրական վերաբերմունք ցուցաբերեցիք։

Այս ճշմարտությունը ուզում եմ հաստատել իմ ամենաանկեղծ գգացումներով. Դուք, Ձեր այս վերաբերմունքով բացահայտորեն ապացուցեցիք, թե ինչպիսի բարձր անհատականություն եք։ Դուք Ձեր անձով լիովին հաստատեցիք հայ ժողովրդի մեծությունը։ Ձեր և Ձեզ նման պատվարժան մարդկանց առաջ, հայ ժողովրդի առաջ, հարգանքով խոնարհվում եմ։

Ձեր նամակը ընթերցելիս վերհիշեցի սրանից 3 տարի առաջ իմ կարդացած Դավիթ Խերդյանի «Կիսալուսնի տակերը» վերնագրով և իր ընթերցողներից արցունք խլող փաստագրական վեպը (այն իր մոր՝ Վերոն խանումի կյանքի պատմությունն է)։ Ուրեմն, այդ ողբերգությունից հրաշքով ողջ մնացած յուրաքանչյուր մարդու կյանքը մի վեպ է, այսինքն՝ մարդկային ողբերգությունները կանխելու համար, մարդկության օրինակ ծառայող մի վեպ։

Խնդրում եմ գրեք ձեր հիշողությունները, քանի որ ձեր հուշերում մարդկության, հատկապես, մեզ՝ թուրքերիս համար, անհրաժեշտ շատ մեծ դասեր կան այնտեղից վերցնելու։

Ափսոս, որ թուրք լինելով հանդերձ, շատ ուշ հասկացա իրականությունը։ «Իթթիհատ վե թերաքքի»ից մինչև այսօր, թուրքական բոլոր կառավարությունները խեղաթյուրեցին պատմական ճշմարտությունը, սուտ խոսեցին։ Թուրքիայի Հանրապետության ղեկավարները երբեք չցանկացան և հիմա էլ չեն ցանկանում, որպեսզի իրենց հայրենակիցները իմանան ճշմարտությունը։

Թուրքական իշխանությունները ամենաշատ վախենում են նրանից, որ աշխարհի հասարակական կարծիքն ու, հատկապես, իրենց երկրացիները իրազեկ կդառնան ճշմարտությանը։ Նրանք շատ լավ հասկանում են, որ ճշմարտությունը իմացող մարդը կարող է անմեղի և ոճրագործի կերպարանքները տարբերել իրարից։ Շատ խիստ վախենում են,

որ ոճրագործի դեմքը կբացահայտվի, և միևնույն ժամանակ գիտակցում, որ հաշիվ տալու պատասխանատվությունից չեն կարողանալու խուսափել։

Այս պատճառով էլ նրանք աշխատում են ամեն օր, ամեն առիթով անմեղին և տուժածին զրպարտել և ցեխոտել։ Եվ այդպես, որպեսզի իրենք կարողանան հարատևել, ամեն օր աստիճանաբար թուրք ժողովրդին հեռացնելով մարդկությունից, աշխատում են նրան պահել իրենց գտնված ցեղապաշտության ճահճում։

Անձնապես ես, այս իրադրությունից մեծ ցավ ու ամոթանք եմ զգում։ Միևնույն ժամանակ գիտակցում եմ, որ այս ընթացքը շատ վտանգավոր է։ Ուստի կոչ եմ անում, որպեսզի թուրք առաջադեմ մտավորականության գլխավորությամբ մարդկությունը կանխի այն։

Ցեղասպանության հանցագործությամբ մեղադրվող մի տիրապետության գոյատևումը, նրա կատարած հանցագործության կոծկումը, կնպաստի մարդկության դեմ ուղղված նորանոր հանցագործությունների գործադրման։

Ինչպես գիտեք, հանրապետության շրջանում ոչ-թուրք ժողովուրդների դեմ գործադրված «Ռնեցվածքի տուրքը», Թրակիայի շրջանից հրեաների վտարումը, 1955 թ. սեպտեմբերի 6-7-ին տեղի ունեցած ջարդերը և այնուհետև էթնիկական մաքրագործումները, Հյուսիսային Կիպրոսի նվաճումով հույն ժողովրդի կոտորածն ու վտարումը, հավասարության և ազատության ձգտող քուրդ ժողովրդին մշտապես դաժանորեն ճնշելով, ցեղասպանության սպառնալիքի տակ պահելը, բոլորն էլ մարդկության դեմ ուղղված հանցագործություններ են։

Ահա այս պատճառով կամենում եմ հարցի անհապաղ և արդարացի լուծումը։

Ձեմ ցանկանում, որ իմ ժողովուրդը այդ ոճրագործների և ոճրագործ ավանդույթների հարատևմանը ձգտող տարրերի ետևից գնա և նրանց գործիք դառնա։ Կարծում եմ, որ իրեն

մարդ համարող և քիչ թե շատ հարցին իրազեկ յուրաքանչյուր պատվավոր թուրք մարդու համար այս ուղղությամբ ջանք գործադրելը ամենահրատապ պարտականություններից մեկը պետք է լինի։ Պահանջում եմ, որ իմ երկրի առաջադեմ մտավորականությունը մարդկային վերաբերմունք ցուցաբերի արդարության և ճշմարտության հաղթանակի համար։

Հակառակ դեպքում, ձեզ նման ազնվազարմ մարդկանց և վերջապես հայ ժողովրդի ու նրա հետ միևնույն տառապալի ճակատագիրը ապրած ժողովուրդների բարեկամությանն երբևէ չենք արժանանալու։ Բացի այդ, չպիտի կարողանանք կրկին տեր կանգնել 1915 թվականից այս կողմ, մեզնից խլված մարդկային հատկանիշներին»։

Պատվարժան ավագ գրչեղբայրս՝ պրն. Սարգիս. նկատի ունենալով, որ վերոհիշյալ տողերը արտահայտում են իմ զգացմունքներս ու մտածումներս, ուստի նույնությամբ ընդգրկեցի այստեղ, ձեզ և ձեր նամակը ստորագրող հարգարժան բարեկամներիս համար։

Համենայն դեպս, ԱՄՆ-ից ստացված տասնյակներով նամակներում, ինչպես նաև ձեր նամակում էլ նյութ դարձած «բարոյական հատուցման» հարցի շուրջ, համառոտակի կանգ պիտի առնեմ։

Եթե ցեղասպանությունը հայ ժողովրդին զրկեց ամեն ինչից և սերունդից-սերունդ հարատև ցավ պատճառեց, ապա թուրք հասարակությանն էլ մղեց մարդկային ուղեղում չտեղավորվող ավերածությունների գործադրմանը։ Այս ավերածությունները տեղի ունեցան՝ իրեն չպատկանող արժեքների կողոպտման և բռնագրավման սովորությունների հետևանքով։ Ամբոխային կառուցվածքը, քաղցկեղի մանրեի նման, համարյա թե համակված է թալանով ապրելու փիլիսոփայությամբ։

Այս իրականությունը, միմիայն 600 տարվա մի թալանչի կայսրության մեջ ավանդած ժառանգությամբ չի ավարտվում։ Իսկ ցեղասպանությունն էլ միմիայն մարդու աշխատանքով ստեղծված արժեքների բռնագրավումով չի սահմանափակվում։ Այստեղ խոսքը գնում է ամբողջ մի ժողովրդի ցեղային բնաջնջման նպատակադրված ծրագրի և այդ մեծ չափով իրականացնելու մասին։

Այստեղ խոսքը գնում է պատերազմական խառնաշփոթ վիճակում տեղի ունեցած զանգվածային դաժան կոտորածների հետքերը ջնջելու խնդրին։

Այստեղ խոսքը գնում է բռնադատված ժողովուրդների հազարավոր տարիների ստեղծած պատմական ու մշակութային արժեքների ավերմանն ու ամեն ինչի հետ մեկտեղ, նրանց հայրենիքի բռնագրավման մասին։ Այնպես, որ սա ուղղակի մի ողբերգություն է, աշխարհը ցնցող մի անիրավություն։

Եվ ճշմարտության քողարկումը մի հասարակությունից հասցրել է մարդկային բարոյական արժանիքների և համաշխարհային վարքագծի չքացմանն ու անհետացմանը։

Այս պատճառով էլ թուրք հասարակությունը 1915 թվականից հետո մշտապես խրվել է այլասերման ճահճում։ Նույնիսկ, կապիտալիստական աշխարհի մի մասը կազմող Թուրքիայում, կապիտալիզմի սկզբունքները անհետացել են։

Մեծ հարստությունները՝ արտադրությունը կազմակերպողի, իր աշխատանքով եկամուտ բերողի, այսինքն՝ «նախաձեռնողի» ձեռքում չէ, այլ պետության հետ ներքին կապի մեջ գտնվող մութ ուժերի՝ մաֆիայի ձեռքում է։

Ցեղապաշտ թուրք մեդիան (լրատվական միջոցները) այս անօրինության խորացման և արմատացման մեջ մեծ դեր է խաղում։ Անօրինությունն ու թալանչությունը հասարակայնացվում է։

Այս պատճառով ցեղասպանության ենթարկված ժողովուրդները, երբ ետ են պահանջում իրենց պատկանող արժեքները, զայրույթ են պատճառում ոչ միայն կառավարողներին, այլև հասարակությանը։

Այսպիսի հասարակության նկատմամբ մենք պետք է

չատ բացահայտ դիրքորոշում ունենանք։

Մենք պիտի դառնանք կամ ցեղասպանության միջոցով բռնագրավված հողերը, թալանված հարստությունները յուրացնող ստորներ, կամ էլ՝ բռնագրավվածը մերժելով, կողոպտված հարստությունները պիտի վերադարձնենք իր տիրոջը, որպես պատվավոր մարդիկ։

Մեզ համար երրորդ ընտրություն չկա։

Այս պատճառով ցեղասպանությունը ընդունող Թուրքերը, ցեղասպանությունից բխած պատասխանատվությունից ազատվելու համար, պետք է դիմեն գործնական քայլերի։

Ըստ իս, այս սկզբունքային հարց է։

Իսկ ցեղասպանությանը հակադրվողներին հատուցման գաղափարի կամավոր ընդունելը, հիմնապես տարածում գտնելու համար՝ դյուրըմբռնելի դարձնելը, մարդկային շատ կարևոր մի պարտականություն է։

Առաջավոր մտավորականությունը, եթե ցեղասպանությանը հակադրվող մարդկանց լուսավորելու խնդրում այս մոտեցումը չունենա, իրականում, չպիտի կարողանա նրանց համար օրինակ դառնալ։

Պետության կառուցվածքը իմանալով հանդերձ, այս հարցի լուծումը պետության վստահելը, կամ էլ անհայտ մի «հեղափոխության» ժամանակաշրջանին վերագրելը, կնշանակի տուժված ժողովուրդներին ասել հետևյալը. «Դուք հրաժարվե՛ք արդարության և ճշմարտության հետապնդումից»։

Հասարակության կացութաձևի փոփոխումը բխել է անհատի նախաձեռնությունից։ Եթե այդ անհատը իր խղճի ձայնով չկարողանա լուծել այդ հարցը, ապա նա իրավասու էլ չէ հույսը դնել այլոց վրա։

Նկատում եմ, որ նամակս երկարեց։ Եթե ձեզ ձանձրույթ պատճառեցի, ներողամիտ եղեք։ Իրականում, իրար բացատրելու շատ բաներ կան։ Եթե իրարից հեռու չլինեինք, կցանկանայի իմ ընտանիքի, ինչպես նաև մեր կազմակերպության

անդամների հետ ամենագեղեցիկ ծաղկեփունջով այցելել ձեզ։

Այնուհանդերձ, նամակս չպիտի վերջացնեմ, մինչև որ մեր աշխատանքների մասին, թեկուզ համառոտակի տեղեկություն չգրեմ։

Մեր կազմակերպության ստեղծումից ի վեր աշխատում ենք խիստ ծանրաբեռնված։

Մեզ համար մեծ նշանակություն ունեցավ անցյալ տարի մեր կատարած հետևյալ գործնական քայլերը։ Նախ, 11 հոգիանոց մեր պատվիրակության այցելությունն էր դեպի Հայաստան, այնուհետև, Եվրոպայում բնակվող Թուրքիայի մեր հայրենակիցների շրջանում, ցեղասպանության ճանաչման համար մեր կազմակերպած ստորագրություններ հավաքելու շարժումն էր։

Մենք մեծ բավարարություն ստացանք Հայաստանում, հայ ժողովրդի մեր հանդեպ ցուցաբերած ջերմ բարեկամության և մեծ հյուրասիրության համար։

Գնահատելի էր նաև հասարակության հետ ունեցած մեր անմիջական շփումը։

Այս կապակցությամբ Գերմանիայի Ֆրանկֆուրտ և Մայնզ քաղաքներում դումարվեցին երեք առանձին ժողովներ, ուր խոսվեց, թե հայ ժողովուրդը ինչպիսի կարևոր նշանակություն է տալիս հաշտության և բարեկամության գործին։ Սրա հետ մեկտեղ, որպես պատմական ճշմարտություն, ուշադրության կենտրոնում էր ցեղասպանության հաստատման ու ցեղասպանության վերջի բուժման կարևորությունն ու հրատապությունը։

1999 թ. նոյեմբերի 4-ին Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովին գրված և 11 247 ստորագրությամբ ուղարկված մեր նամակը, մոտավորապես 2 ամիս հետո ետ վերադարձավ մեր հասցեով։

Ափսոս, որ Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովը, ճշմարտության և արդարության ընդունման վերաբերող իր հայրենակիցների ձայնին ականջ դնելու քաղաքակիրթ մոտեցումն ու համարձակությունը չցուցաբերեց։ Ընդհակառակը,

իր ստոր վերաբերմունքով Իգդիրում ցեղասպանության մի կեղծ հուշարձան կանգնեցրեց: Իսկ կառավարությունն էլ բացահայտ հայտարարեց, որ վրեժխնդրության և ատելության սերմերը ցանելով, շարունակելու է խեղաթյուրել պատմական ճշմարտությունը:

Մեր կազմակերպության կարևոր պարտականություններից մեկն է նաև, 1915 թվականից հետո, Թուրքիայում գործադրված մարդկային հանցագործությունները հասարակական խղճի դատապարտման ենթարկելը: 1955 թվականի սեպտեմբերի 6-7-ի ջարդերն էլ մարդու դեմ կատարված հանցագործություններ են համարվում: Ընդ որում, սեպտեմբերի 6-7-ի ջարդերը, հիմնականում, ուղղված էին Ստամբուլում և Իզմիրում բնակվող հույների դեմ, այնուհանդերձ, այն վերաբերում էր նաև Թուրքիայի բոլոր ոչ-մահմեդական ժողովուրդներին:

Թուրքիայի «Մարդկային իրավունքների կազմակերպությունը» (ՄԻԿ), սեպտեմբերի 6-7-ի ջարդերի վերաբերյալ պատրաստել էր վավերագրական ֆոտոնկարների մի ցուցահանդես: ՄԻԿ-ի հետ համագործակցության մեջ մտած մեր կազմակերպությունը, «Ամոթալի պատմություն» խորագրով այս ֆոտո ցուցահանդեսը, մեր ապրած Ֆրանկֆուրտ քաղաքում հասարակության համար բաց թողեց մարտի 26-ից մինչև ապրիլի 15-ը: Ցուցահանդեսը հասավ իր նպատակին:

Ցուցահանդես այցելողները, եթե մի կողմից չնորհակալություն հայտնեցին ՄԻԿ-ին և մեր կազմակերպությանը, ապա մյուս կողմից «Հյուրրիեթ» և Թուրքիա» թերթերի նման ցեղապաշտ թուրքական մամուլը, զրպարտանքի շարժում ծավալեց մեր դեմ:

Ապրիլի 9-ին, հայերի ցեղասպանության ճանաչման համար, Բեռլինում մի ժողով գումարվեց, որին մասնակցեցին մի շարք խորհրդականներ և գիտնականներ: Այս ժողովին, որպես «Ցեղասպանության ընդդեմ կազմակերպության» ներկայացուցիչ, մասնակցեցի նաև ես:

Ժողովը հասավ իր նպատակին:

Ես իմ երկրում աշխատեցի լավագույն կերպով կանգ առնել 1915 թվականի ցեղասպանության ճանաչմանը, ինչպես նաև, հասարակության խղճի ձայնով այն դատապարտելու խնդրին:

Ցեղապաշտ մամուլը այս էլ չկարողացավ մարսել:

Ապրիլի 13-ին, հայերի ցեղասպանության ընդունման համար կազմակերպվեց ստորագրություններ հավաքելու երկու առանձին ձեռնարկներ:

Այնուհետև, դոկտ. Ժիրայր Քոչարյան, դոկտ. Թեսսա Հոֆման և Ալի Էրթեմից բաղկացած երեք հոգիանոց մի պատվիրակության կողմից այն հանձնվեց Դաշնակցային Գերմանիայի խորհրդարանի խնդրառու հանձնաժողովին:

Ապրիլի 17-ին, ցեղասպանության ընդունման վերաբերյալ ստորագրություններ հավաքելու ձեռնարկը հասարակությանը ծանոթացնելու համար, կրկին Բեռլինում կազմակերպվեց մամուլի ասուլիս: Գերմանական և թուրքական մամուլը լուսաբանեց այն ենթարկեց ձախողման: Կազմակերպված մամուլի ասուլիսում մեր բարեկամների շարքերում ներկա էին միմիայն «Ազատ քաղաքականություն» քրդական թերթի աշխատակիցները:

Նույն օրը, 2000 թ. ապրիլ 24-ին Բեռլինի ձայնասփյուռից հաղորդելու համար, Աշոտ Ամիրջանյանի նախաձեռնությամբ պատրաստվեց հատուկ հաղորդում-ասուլիս: Ասուլիսին, ինձ հետ միասին մասնակցեցին նաև դոկտ. Թեսսա Հոֆմանը և գրող Վոլֆկենկ Կուստը:

Այս տարի Հայաստանում ցեղասպանության զոհերի հիշատակը հարգելու համար, մեր կազմակերպության անդամներից իրենց մասնակցությունը բերին տիկին Էլիֆ Սելայ Էրթեմը և Դեոնե Գյունդուզը: Նրանք, ապրիլի 22-ից մինչև 29-ը Երևանում մնալով, մասնակցեցին ցեղասպանությանը նվիրված սգո ձեռնարկներին:

Մեր ներկայացուցիչները Ֆրանկֆուրտ վերադարձան,

հայ ժողովրդի կողմից ցուցաբերված մարդկային ամենաջերմ զգացմունքների, ինչպես նաև բարեկամական սրտաբաց հյուրասիրության և մեծարումի տպավորության տակ։

Ես և վարչական խորհրդի անդամ, իմ գործընկերներից՝ Բյուլենդ Գյուլը, այս տարի, Մարսելում մասնակցեցինք ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված սգո ձեռնարկներին։

1915, ապրիլ 24-ի Մշտական Կոմիտեի նախագահ՝ հարգարժան Ժաք Տոնապետյանի և գործադիր մարմնի պատասխանատու հարգարժան Ժաք Ուլուսյանի այս հրավերը, մեր տեսանկյունով, պատմական կարևոր նշանակություն ուներ։

Թուրք և քուրդ ժողովուրդների ներկայացուցիչների ջանքերով ստեղծված մեր կազմակերպության հրավիրումն ու հայ ժողովրդի վստահության արժանանալը, մեզ համար մեծ պատիվ էր։

Հայաստանում մեզ հանդեպ ցուցաբերված ջերմ հյուրասիրությունն ու բարեկամությունը, նույնությամբ վայելեցինք նաև Մարսելում։ Սգո հանդեսի ընթացքում տեղի ունեցած մեր ելույթը, հայ ժողովրդի կողմից դիմավորվեց մեծ խանդավառությամբ։ Մարսելում էլ, Հայաստանի նման, մենք ականատես եղանք միևնույն ջերմ ընդունելության։ Հայ ժողովրդի սրտում վրեժխնդրություն և ատելություն գոյություն չունի։

Վերջացնելուց առաջ, ցանկանում եմ խոսել նաև մեր միջև այս բարեկամության կամուրջների ստեղծման պատճառ եղող մի հիմնարկության և նրա հանրածանոթ ներկայացուցիչներից երկու պատվարժան անձնավորությունների մասին։ Այդ հիմնարկությունը Փարիզում գտնվող «Հայկական Սփյուռքի Ուսումնասիրության կենտրոն»ն է (ՀՍՈՒԿ)։

ՀՍՈՒԿ-ի արխիվներում գտնվող հազարավոր վավերագրերը առնչվում են հայ ժողովրդի ստեղծած պատմամշակութային արժեքների, ինչպես նաև, իր կրած մարդկային ծանր ողբերգության հետ։ Բնականաբար, այդ բոլորը ոչ

միայն կարևոր գիտելիքներ են տալիս այսօրվա հասարակական մտքին, այլև, մի շարք համալսարանների երիտասարդ ուսանողների համար հետազոտական հնարավորություն ստեղծում, իրենց դիպլոմային թեմաների կատարման ասպարեզում։

Միևնույն ժամանակ ՀՍՈՒԿ-ը աշխատում է բարեկամության կամուրջներ ստեղծել տարբեր մշակույթների և ժողովուրդների միջև։ Այս տեսանկյունով իրականացվում են մի շարք ծրագրեր և գործնական զանազան ձեռնարկներ։

ՀՍՈՒԿ-ը հատուկ ուշադրություն է դարձնում նաև թուրք ժողովրդի առաջադեմ մտավորականության հետ կապեր ստեղծելու խնդրին։

Վերջապես, ՀՍՈՒԿ-ի նախագահ՝ ժան Կլոտ Քեբաբջյանը (հասարակագետ հետազոտող) և նրա օգնական՝ հարգարժան Ռաֆֆի Արաքս Հերմոնը (լրագրող) պատճառ եղան, որպեսզի մենք ծանոթանանք և սկսենք բարձր մակարդակով բարեկամության կապեր հաստատել իրար հետ։ Հարգարժան Հարութ Սասունյանը ևս ճշգրիտ տեղեկություններ է տալիս մեր կազմակերպության և նրա գործունեության մասին։

Հայ ժողովրդի այս պատվական գործիչներին սրտագին շնորհակալություն եմ հայտնում, քանի որ նրանք պատճառ եղան ձեր և մտերիմ բարեկամներիս հետ ծանոթություն հաստատելու։

Հարգարժան ավագ գրչեղբայրս՝ պրն. Սարգիս,

Պատվարժան բարեկամներ,

Ձեզ՝ բոլորիդ սրտանց բարևում և Ձեր առաջ հարգանքով խոնարհվում եմ։ Բացի այդ, Ձեզ եմ փոխանցում ընտանիքիս և մեր կազմակերպության անդամ գործընկերներիս հարգանքներն ու բարևները։

Բարեմաղթում եմ երջանիկ և լավ օրեր։

ԱԼԻ ԷՐԹԵՄ

6. ԴԱՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԲԻՐԴԱԼԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Ստամբուլի ներքին գործերի գլխավոր վարչության դատախազությունը դատական հետաքննություն է սկսել Մարդու Իրավունքների կազմակերպության նախկին նախագահ՝ Աքրն Բիրդալի դեմ, հետևյալ պատճառով.

«Եվրոպայում Մարդկային Իրավունքները, և արդյո՞ք Թուրքիան Եվրոմիության նոր գործընկեր է» խորագրի տակ կազմակերպված մամուլի ասուլիսում, որը տեղի է ունեցել Գերմանիայի Պրեմերհավեն քաղաքում, մասնակցությամբ նաև գերմանացի մի շարք պետական գործիչների, Աքրն Բիրդալը, խոսք առնելով, քննադատել է Թուրքիային և նշել, որ «Թուրքիան հայերի ցեղասպանության համար պետք է ներողություն խնդրի»

Այս ասուլիսի մանրամասներին մամուլից տեղեկանալով, Ստամբուլի ներքին գործերի գլխավոր վարչության դատախազ Մուզաֆֆեր Յալչընը, Աքրն Բիրդալի դեմ նախաձեռնել է դատական հետաքննություն հարուցել:

Մամուլի միջոցով, ժողովրդի մեջ հավատի, լեզվի, դավանանքի, ցեղային խտրականության ասպարեզում բացահայտ ատելություն ու թշնամանք հրահրելու մեղադրանքը Աքրն Բիրդալի նկատմամբ, եթե հաստատվի, ապա Թուրքիայի Հանրապետության օրենքի 312/2 հոդվածի համաձայն կարող է նրա դեմ դատական գործ հարուցվել, պահանջելով մոտ 6 տարվա բանտարկության պատիժ[10]:

7. ԱՌԱՋԻՆ ԹՈՒՐՔԸ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԿՈԹՈՂԻ ՄՈՏ[11]

Հայաստանում ցեղասպանության հուշարձանին հարգանքի տուրք մատուցած՝ Իսենյուրթի քաղաքապետ Գյուրբյուզ Զափանը հայտնեց, որ իր այցելությունը կատարել է «գիտակցաբար»: «Այլևս այս ոճակալությունը թող վերջանա» ասելով, Զափանը նշեց, որ Հայաստանի դուռը պետք է բացվի և տնտեսական կապերն էլ՝ զարգանան:

Հայաստանում ցեղասպանության հուշարձանին այցելած առաջին թուրքը՝ Ստամբուլի Իսենյուրթ շրջանի քաղաքապետ Գյուրբյուզ Զափանը հայտնեց, որ իր այս այցելությունը կատարել է «գիտակցաբար»: Իսկ իր մայրը, երբ իմացել էր, որ ինքը մեկնելու է Հայաստան, արտասվելով ասել էր, որ չգնա: Զափանը տեղեկացրեց, որ «հաշտությունը անհրաժեշտ է թե մեզ և թե նրանց համար: Մենք պետք է հաշտվենք Հայաստանի հետ»:

Դրանից առաջ էլ Կուբա այցելելուց հետո, Զափանը Իսենյուրթում Ամթաթյուրքի հուշարձանին կից կառուցել էր Կուբայի ժողովրդական հերոս Ժոզե Մարտինիի հուշարձանը: Իսկ Հայաստանից վերադարձին, նա իր հետ բերեց մեկ քառակուսի մետր մակերեսով երեսապատման համար հատուկ իրեն նվիրված քարը: Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի նվիրած այս կարմիր քարը տեղադրվելու է Ռիֆաթ Իլկազի թատրոնի կառուցվող շենքի ճակատին և պատին ամրացվելու է նաև շնորհակալության մի ցուցանակ: Մեր հարցադրումներին, Զափանը պատասխանեց հետևյալը.

Կարծես գտնվում էի Կարսում: Հայաստան մեկնած ընկերներից մեկը ասաց. «Հայերի կոտորածների մասին դումարված ժողովում, հայերին օգնած Հաջի Խալիլ անունով մի թուրքի համար աղոթել են: Այս հետաքրքրեց ինձ: Եվ

երբ Երևանի քաղաքագլուխ Վահագն Խաչատրյանը ինձ հրավիրեց, ես ընդունեցի այն: Մեր միջև սահմանները փակ լինելու պատճառով, Երևան մեկնեցինք Մոսկվայով: Այնտեղի մարդիկ էլ հար նման էին մերոնց: Կարծես ինձ զգում էի Կարսում: Ճաշերը, հագուստները, փողոցում մարդկանց կատակելը, տարեց կանանց՝ փողոցներում մեր «սեմիչկա» անվանած արևածաղկի հատիկները բաժակով վաճառելը նույնն էր, ինչպես մեզ մոտ: Միակ տարբերությունը՝ քրիստոնյա լինելու հանգամանքով գլուխները բաց էր:

Դռները պետք է բացվեն: Մեր այցելությունը շատ կարևոր նշանակություն ունեցավ: Մեզ դիմավորեց նախագահի գլխավոր խորհրդական՝ Լիպարիտյանը: Մեզ տեղավորեցին պետական ամենամեծ հյուրանոցում: Այցելեցինք քաղաքագլխին: Մեզ ընդունեց նաև հանրապետության նախագահը: Զրուցեցինք մեր հաշտվելու անհրաժեշտության մասին, քանի որ այն կարևոր էր թե մեզ և թե Հայաստանի համար: Եթե մենք Հայաստանի դուռը բացենք, Բաքու կհասնենք կտրելով 110 կիլոմետր: Բացի այդ, Հայաստանը մեզ համար կլինի նոր շուկա: Մեր ապրանքները այնտեղ են հասնում Իրանի մեջ շրջագայելուց հետո: Անհրաժեշտ է, որ այս դուռը բացվի և ազատ երթևեկություն կատարվի: Միևնույն ժամանակ, այն մեզ համար Ադրբեջանի, Թյուրքմենիստանի և Միջին Ասիայի դուռն է:

Հաշտությունը պետք է կայանա: Քաղաքական առումով պատմության ընթացքում այսպիսի մի վրեժխնդրություն եղել է: Նրանք ևս ուզում են փակել այս գործը: Մենք էլ մի առանձին մտադրություն չունենք, որպեսզի շարունակենք այն: Թուրքիայում, գնանք հայերին կոտորենք ասելով, մի մտադրություն չկա: Ես նախագահին ասացի. «Թուրք հասարակության մեջ մի համոզմունք կա, որ, եթե մենք հայերի կոտորածը ընդունենք, մեզնից փոխհատուցում և հող են պահանջելու»: Նա էլ ասաց. «Մեր հասարակությունն էլ ասում

է, որ եթե թուրքերը գան, մեզ կմորթեն: Նույնիսկ ձեր գալը իմանալով ասացին, որ դու ինձ կմորթես: Այդ նպատակո՞վ եկաք», ջերմ կատակելով հարցրեց նա: Մենք տեղեկացանք, որ բացառությամբ դաշնակցականների, բոլոր կուսակցությունները ցանկանում են Թուրքիայի հետ բարեկամական հարաբերություններ հաստատել:

Թողնենք պատմաբաններին: Մեզ ասացին, որ մեր միջև գոյություն ունեցող վեճը անհրաժեշտ է թողնել պատմաբաններին: «Այն թողնենք պատմաբաններին[12]: Թող նրանք հետազոտեն, իսկ մենք այսօրվա կապերը հաստատենք: Մենք այսօրվանից վաղվա գնացող կապերը երևան հանենք»: Ասացին նաև, որ այս մասին հայտնենք նաև մեր նախագահին, վարչապետին և մեր հասարակությանը: Հայաստանի նախագահը նշեց, որ իրենք շարժումը սկսեցին, որպեսզի Ղարաբաղում առաջին հերթին ապահովեն ժողովրդի անվտանգությունը: Միայն հետագայում է, որ որոշ ուժեր, անկախ իրենցից այն հասցրել են այս վիճակին: Նա ավելացրեց, որ «Երկու կողմերն էլ ստիպված են քաշվելու իրենց սահմանները»:

Կովկասի Բենելյուքսը: Կովկասի աշխարհագրությունը խառնիճաղանճ խճանկարային վիճակում է: Եթե այնտեղ Յուրաքանչյուր պետություն շարունակի ապրել իր սահմանների մեջ, ապա Բենելյուքս երկրների նման (ինչպիսին են՝ Բելգիան, Հոլանդիան, Լյուքսեմբուրգը) անհրաժեշտ կլինի ունենալ սահմանների ազատություն: Հարկ է, որ այդ նույն աշխարհագրական վիճակը ստեղծվի նաև Կովկասի այս երկրներից յուրաքանչյուրում: Մենք չպետք է որևէ մեկի հետ ոխակալություն ունենանք: Պետք է Հայաստանի հետ հաշտվենք: Հայաստանը բացել է իր սահմանները, բայց մենք դեռևս չենք արձագանքել դրան: Մինչդեռ, Ֆեթուլլահ Խոջան Վրաստան գնալով, այնտեղ երկու քոլեջ է բացել և պատրաստվում է մի հատ էլ համալսարան բացել:

Գյուխները լվացել են: Խորհրդային Միությունը

տարիներով՝ թուրքական կոտորածներ-թուրքական կոտորածներ հայտարարելով քարոզչություն է կատարել։ Մարդը հասակ է առել գիշեր-ցերեկ թուրքական կոտորածներ լսելով[13]։ Այդպես է ձևավորվել։ Ազգայնացման այդպիսի վիճակին է հասել։ Ներկայումս ազգայնացման և պետություն կառուցելու գործընթացում կարող է և կռիվ լինել։

Փոխադարձ հրավեր։ Մեզ վճռականապես հաղորդեցին, որ Հայաստանում Քրդական Բանվորական Կուսակցության ռազմական ճամբարներ գոյություն չունեն։ Բնականաբար, ես չէի գնա Թուրքիայի հետ այդպիսի հարաբերություն ունեցող մի երկիր։ Ես իմ հերթին, փոխադարձաբար հրավիրեցի Երևանի քաղաքագլխին և մշակութային 3 գործիչների։ Իսկ ինչո՞ւ նրանք չեն այցելելու մեզ։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Թուրքիայի տարածքում գտնվող պատմական Հայաստանում օր_օրի վրա քանդվում և երկրի երեսից անհետանում են հայկական հնագույն պատմա_մշակութային հուշարձաններն ու կոթողները՝ վանքերը, եկեղեցիները, մատուռները, սրբավայրերը և այլն։

4. Պոլսում հրատարակվող «Ակօս» շաբաթաթերթի տարբեր համարների միջուկներից, թարգմանաբար, բերված են այդ թեմային վերաբերող երեք հոդվածներ։

Հոդվածների հեղինակն է Պաթման քաղաքի բնակիչ Սալիհ Էրոլը։ Պաթմանը գտնվում է Դիարբեքիրից ոչ շատ հեռու՝ արևելյան մասում։

2. «Ակօս», օգոստոս 10, 1998։

3. Գտնվում է Կ. Պոլսում։ Ներկայումս Վոսփորի թաղամասերից մեկն է։

4. Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքի խոսքերն են։

5. Արաբերեն ամիր՝ իշխան բառից։ Պատվանուն, որը տրվում էր Օսմանյան կայսրության մեջ հայազգի մեծահարուստ, ազդեցիկ և պաշտոնատար անձնավորություններին։

6. «Ակօս», սեպտեմբեր 24, 1999։

7. «Ակօս», նոյեմբեր 17, 2000։

8. Թուրքիայում Իգդիրի հուշարձանի կառուցման նախաձեռնությունը սկսվեց 1997 թ. սեպտեմբերին։ Այն, իբրև թե, խորհրդանշելու էր «Հայերի կողմից թուրքերի նկատմամբ գործադրված վայրագությունները»։

Ճշմարտության հետ ոչ մի առնչություն չունեցող այս հուշարձանի բացումը կատարվեց 1999 թ. վերջին, թուրք բարձրաստիճան պետական գործիչների ներկայությամբ։

Իր խորքում, այս և այլ քաղաքներում նույն նպատակով կառուցված հուշարձանները, նույնպես մաս են կազմում Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության ուրացման

քաղաքականության։ Բացի այդ, ուղղակի, ձգտում են անմեղանալու միտումով զոհին հագցնել հանցագործի պատմուճանը։

Օքթայ Էքինճիի հոդվածին կից բերված հուշարձանի նկարը, իր աժդահա «սրերի» ահավոր տեսքով, ինձ մոտ էլ զարմանք և նողկանք առաջացնելով, ակամա մտաբերել տվեց 19-րդ դարի անգլիացի պետական գործիչ՝ Վիլյամ Գլադստոնի (1880-1894 թթ. վարչապետ) հետևյալ խոսքերը. «Որտեղով էլ որ անցնում էին (թուրքերը), արյան լայն ուղիներ էին մնում նրանց հետքերից, և որտեղ որ տարածվում էին նրանց տիրույթները, քաղաքակրթությունը ջնջվում էր աշխարհի երեսից»։

9. «Ակօս», դեկտեմբեր 15, 2000։

10. «Ակօս», հոկտեմբեր 27, 2000։

11. 1995 թ. հունիս 27-ին երկօրյա այցով Երևան ժամանեց թուրքական մի պատվիրակություն՝ Ստամբուլի Էսենյուրթ շրջանի քաղաքագլուխ Գյուրբյուզ Զափանի գլխավորությամբ։ Որպես Թուրքիայի ներկայացուցիչ, այս պատվիրակությունը, առաջին անգամ լինելով, ծաղկեպսակ դրեց Մեծ եղեռնի հուշակոթողին, որը լայն արձագանք գտավ ինչպես հայկական, այնպես էլ թուրքական մամուլում։ Այս հոդվածի հեղինակներն են Սուլեյման Սարըլարը և Հայրեդդին Քարաթեքեն («Հյուրրիեթ», հուլիս 4, 1995)։

12. Պատմաբանների քննարկման հարցը բոլորովին անիմաստ է և անընդունելի։ Հայոց ցեղասպանության պատմական ճշմարտությունը սակարկության առարկա չի կարող լինել։ Այն ապացուցված է անհերքելի փաստերով և ականատեսների վկայություններով։ Այնպես, որ ներկայի Թուրքական կառավարությունը ժառանգորդն է ու պատասխանատուն կատարված այդ ծայրագույն հանցագործության և պետք է ճանաչի հայերի ցեղասպանությունն ու արդար հատուցում տա նրա արյան, հոգային և նյութական պահանջատիրության։

13. Այս արտահայտությունը չի համապատասխանում իրականությանը։ Ճշմարտությունը աղավաղված է։ Ստալինյան բռնատիրության շրջանում Մեծ եղեռնի հիշատակումը Խորհրդային Հայաստանում երկար տարիներ մատնվել էր մոռացության։ 1965 թ. ապրիլի 24-ին, Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի առիթով էր, որ Երևանում հայ ժողովուրդը միասնաբար բարձրացրեց իր բուռն բողոքը 1915 թ. անմեղ զոհերի հիշատակին, սթափեցնելով աշխարհի ժողովուրդներին, որ դարասկզբի հայերի ցեղասպանությունը չի մոռացվել, այն կա, եղել է և ապրում է նոր սերնդի սրտերում։

ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ԱՇԻՐԵԹ – ցեղախումբ։

ԱՐԻԶԱ – Սուլթանին ուղղված զեկուցագիր։

ԲԵՐԱԹ – Սուլթանի կողմից տրված աստիճանների, շքանշանների և զանազան արտոնություններ հրամանագիր։

ԹԱՔՐԻՐ – կրոնական համայնքի առաջնորդներին ուղղված սուլթանական գրություն։

ԹՈՒՂՐԱ – պատվո նշանի կամ հրովարտակների սկզբում դրվող և սուլթանի անունը, հայրանունը պարունակող միացագիր, որը գրվում էր իրար մեջ հյուսված, բարդ և դժվար ընթերնելի գրությամբ։

ԺԱՆԴԱՐՄԵՐԻԱ – Թուրքիայում՝ երկրի ներսում հասարակական կարգ ու կանոնը պաշտպանող հատուկ զինվորական ստորաբաժանում։

ԽՏԻՎ, ԽՏԻՎՈՒԹՅՈՒՆ – արաբերեն՝ նշանակում է մեծ վեզիր։ Օսմանյան կայսրությունում Եգիպտոսի կառավարիչներին տրված անվանումը։

ԿԱԶԱ – վարչական բաժանման միավոր, որը ենթարկվում է սանջաքին։

ԿԱԶԻ – 1) մահմեդական հավատի համար մարտնչող։

2) հերոսի կոչում, որը շնորհվում էր կառավարության կողմից աչքի ընկնող հրամանատարներին կամ քաղաքներին։

ԿԱՐԻՆ – այսպես էր կոչվում սուլթանի ամենամտերիմ և հավատարիմ անձնավորությունը, իսկ գլխավորը՝ ՍԵՐ ԿԱՐԻՆ։

ԿՈԼՈՆԻԱ – գաղութ։

ՀԱՄԻԴԻԵ – սուլթան Աբդուլ Համիդի կողմից և նրա անունով կազմակերպված քրդական հեծելազորք, որը ստեղծվեց 1891 թ., հայերին ահաբեկելու նպատակով։

ՄԵՋԼԻՍ – պետական գործերի քննության և որոշման համար գումարված ժողով։ Մեջլիս-ի Մերուսան՝ պատգամավորների ժողով, պառլամենտ։

ՄՈՒԹԱՍԱՐՐԻՖ – սանջաքի կառավարիչ, որը ուներ քաղաքացիական և զինվորական իշխանություն։ Մութասարրիֆի աստիճան էին ունենում նաև վիլայեթի կառավարիչները։

ՆԱՀԻՅԵ – վարչական բաժանման միավոր, կազայի ստորաբաժանումը՝ գավառակ։

ՇԱՐԻԱԹ – իսլամի կրոնական և իրավական կարգերին վերաբերող նվիրական կանոններ։

ՇԵՅԽ–ՈՒԼ–ԻՍԼԱՄ – Օսմանյան կայսրությունում շարիաթական գործերին հսկող բարձրաստիճան մահմեդական առաջնորդ, որը համարվում էր ամենաբարձր աստիճանավոր անձը կրոնական գործերում՝ պետության ղեկավարից և մեծ վեզիրից հետո։

ՊԱՊ–Ը ԱԼԻ – սուլթան Աբդուլ Համիդի գահակալության շրջանում մեծ վեզիրի պաշտոնատեղին անվանվել է Պապ–ը Ալի (Բարձրագույն դուռ)։ Մինչ այդ, այն կոչվել է փաշա քափըսը (փաշայի դուռ)։

ՌՈՒՄԵԼԻ – Օսմանյան կայսրության եվրոպական մասը։

ՍԱԴՐԱԶԱՄ կամ ՎԵԶԻՐԻ ԱԶԱՄ – Վեզիրների և վեքիլների (նախարարների) պետը, որը համարվում էր սուլթանի բացարձակ տեղակալը։

ՍՈՖԹԱ – կրոնական ուսումնարանի սան։

ՎԱԼԻ – վիլայեթի կառավարիչ, նահանգապետ։

ՎԻԼԱՅԵԹ – Օսմանյան կայսրության վարչական բաժանման ամենամեծ միավորը, նահանգ։

ՔԱՍԱԲԱ – գյուղաքաղաք։

ՖԵՐՄԱՆ – սուլթանի թուղթայով դրոշմված հրովարտակ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

... Մոռացության չտալու պատմական
ճշմարտությունը 5
Առաջաբան 9
Ա. Թուրք պետական գործիչ Քյամիլ
փաշան Արևմտյան Հայաստանի
19-րդ դարի վերջին քառորդի
իրադարձությունների մասին..... 19
Բ. 1895 թ. Պապ-ը Ալիի ցույցը
մեծ վեզիր Սայիդ փաշայի
հուշագրության մեջ 5
Գ. Օսմանիզմի գաղափարախոսությունը
երիտթուրքական գործիչ
Ջելալ Նուրիի երկերում 68
Դ. Հայկական հարցը և մեծ եղեռնը
Ջեմալ փաշայի հուշագրության մեջ ... 85
Ե. Հայերի ցեղասպանության գլխավոր
հանցագործ Թալեաթ փաշայի
հուշագրության մասին 95
Զ. Ովքե՞ր ամփոփվեցին «Հյուրրիեթ-ի
էբեդիե» պանթեոնում
(Վերջաբանի փոխարեն) 104
Ծանոթագրություններ 110

Հավելված (թարգմանություններ)

Անտեր եկեղեցիները ավերվում են 125
Գրատախտակ դարձած
աղբյուր-հուշարձանը 127

Այնթապի ճարտարապետությունը
հայ վարպետներն են կերտել 128
Ցեղասպանության անօրինական
հուշարձանը 129
Հարգանքով խոնարհվում եմ
հայ ժողովրդի առաջ 131
Դատական հետաքննություն
Բիրդալի նկատմամբ 148
Առաջին թուրքը հայերի
ցեղասպանության հուշարձանի մոտ 149
Ծանոթագրություններ 153
Տերմինաբանական բառարան 156

ԱՎԵՏԻՍ ՓԱՓԱԶՅԱՆ
ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Համակարգչային շարվածքը ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆԻ
Սրբագրիչ՝ ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ

Հրատարակչության գլխ. տնօրեն՝ ՍՈԿՐԱՏ ՄԿՐՏՉՅԱՆ
Հրատարակչության խմբագիր՝ ՄԱՇԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Շապիկը՝ ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

Տպագրությունը՝ օֆսեթ
Թուղթը՝ օֆսեթ
Չափը՝ 60x84 1/16
Ծավալը՝ 10 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 500

«Զանգակ-97» հրատարակչություն
Երևան 375010, Վարդանանց փակուղի 8
Հեռ. 54-89-32: E-mail: zangak@arminco.com

«Զանգակ-97» հրատ. տպարան